



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1623-1626

17

U-94

FB 2001

12^{րդ} Հրատարակութիւն Յ. ԳԸԸՃԵԱՆ ԳՐԱՏԱՆ

281.6

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ



ԿՐՕՆԻ ԴԱՍԵՐ



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆԸ



ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳԵՐՈՒ ՀԱՄԱՐ



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

1910

9101-222

ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ

13 Փետրուար, 1910

ԿՐԹՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

ԱԶԳ. ԿԵԳՐ. ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

Համար 552

ՏՊԱՐԱՆ, ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ, ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Թիւ 27, Ֆիննաներլար եօգուտու, Կ. Պոլիս

208
40

Ա Ր Տ Օ Ն Ա Գ Ի Ր

Գերաշնորհ Տ. Մուշեղ Ս. Եպս. Սերոյիքեանի կողմէ՝ Ազգային երկրորդական վարժարաններու եւ նախակրթարաններու Բարձրագոյն կարգերուն համար իբր դասագիրք պատրաստած «ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ» մակագրութեանք երկասիրութիւնը՝ Ազգ. Կեդր. Վարչութեան Կրօնական Ժողովը ֆիննեղով եւ անոր մեջ Հայ. Առաքելական Ս. Եկեղեցոյս վարդապետքեանց դիմ բան ըն չգնեցով, կ'ըրոյրսրէ անոր կիրառութիւնը Ազգ. վարժարանաց մեջ, եւ մեկի ըս այսմ կ'հրահայեմք ի գործադրութիւն:

Մնամք աղօթարար

ՊԱՏՐԻԱՐՔ Կ. ՊՈԼՍՈՑ

ԵՂԻՇԷ ԱՐԲԵՊ. ԳՈՒՐԵԱՆ

Գ. — Հոն կայ հատուցումի անկեղծ ու համոզիւր շեշտը, որ գործին կուտայ արդիւնաւոր եւ հարկադրիչ հեղինակութիւն մը:

Դ. — Հոն կը տիրապետէ՝ ընդհանրապէս եկեղեցիին եւ մասնաւորապէս Հայ եկեղեցիին ոգիւն, որ թոյլ կուտայ Սրբազանին քննադատել կրօնական կարգ մը կեղծիքներ ու սխալներ, յանուն երկչտութիւնով կամ սոցիալութիւնով եւ կամ շահախնդրութիւնով քողարկուած եւ հեղինակին խղճմտօրէն անվերապահ անկեղծութիւնով պարզուած աւետարանական ճշմարտութեան: Հիմ բռնելով «Էական»ն ու «կարեւոր»ը, անխախտ պահելով սեռն ու պարզ հաւատքի մը կենսական սկիզբը, նա շօշափած է նաեւ վարդապետական (doctrinal) եւ հրամանակարգական (dogmatique) խնդիրներ, չխորշելով գիտական լուսարանութիւններէ՝ երբ հարկ է, այնչափ միայն՝ որչափ հասկանալի եւ կարեւոր է պատանի այն միտքերուն՝ որոնց համար պատրաստուած են այս երկու գործերը:

Ե. — Հոն կը տեսնուի ուսուցանող եւ քեչադող նկատագիր մը, որ այդ հատորներուն կուտայ առաջնորդողի դեր մը ոչ միայն խելահաս ուսանողութեան՝ այլ նաեւ կարգ մը ինքնակոչ կրօնատոյցներու՝ որոնք կրօնքը Բրիտանիականներուն մէջ միայն կը սորվին երբ հարկը կը պահանջէ, աւանդելու համար զայն աշակերտներուն, առանց անոր ոգիիւն եւ եակաեիւն ըմբռնումին:

Վեցերորդաբար կարեւոր է յիշել նաեւ լեզուի ուղղութիւնն ու մտքութիւնը, որ ամենախընթացօրէն առաւելակշիւր դիրք մը կ'ընծայեն Սրբազանին հեղինակութիւններուն՝ կրօնի ուսուցումին յատկացուած այս կարգի բոլոր աշխատութիւններուն մէջ:

Այս է իմ քննութեան արդիւնքը, զոր հարորդելով Ձեր Բարձր Սրբազնութեան, իրրեւ Նախագահի Կեդր. Կրօն. Ժողովի, փափարելի եւ անհրաժեշտ կը գտնեմ որ Դ-եր Տ. Մուշեղ Սրբազանի երկու հատոր այս գործերը, պատուաբեր հեղինակի արժանիքին եւ հայ հոգեւորականութեան, օր առաջ ծառայեն իրենց առաջադրած եւ Ազգ. Կեդր. Կրօն. Ժողովի կողմէ քաջաւերութեան եւ գնահատութեան արժանի նուիրական նպատակին:

Մատչելով ի համարոյր Ս. Աջոյն Ամեն. Ս. Պատրիարք Հօրդ Մնամ ամենախոնարհ որդի հրժ. անդամ Կրօն. Ժողովոյ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՔՆՆՈՒԹԵԱՆ

Ամենապատիւ

Տ. Տ. Եղիշե Ս. Արքեպ. Դուռեան
Ազգախնամ Պատրիարք Հայոց Թուրքիոյ
եւ Նախագահ Ազգ. Կեդր. Կրօն. Ժողովոյ
Կ. Պոլիս

Բարձրաշնորհ Սրբազան Հայր

Կեդր. Կրօն. Ժողովոյ որոշումով քննութեան համար ինձ յանձնուած էին Գեր. Տ. Մուշեղ Ս. Եպիսկ. Սերոբեանի երկու հատոր ձեռագիրները, «Քրիստոնէական Բարոյականը» եւ «Քրիստոնէական Եկեղեցւոյ Վարդապետութիւնը»:

Առաջին գործին առաջնորդ եղող A. OTTOի La morale chretienne, d'après les enseignements de l'Evangile, գոր մասնամբ շատ ինքնատիպ ընդլայնումներով եւ մասամբ ալ հասկանալի թարգմանութիւնով մը հայացուցած է Գեր. հեղինակը, — ինչպէս ինք ալ խոստովանած է իր ձեռագիրի յառաջաբանին մէջ, — ինձ ծանօթ է արդէն իր նպատակայարմար եւ հետեւեկի ուղղութիւնովը, երկրորդ ձեռագիրն ալ բոլորովին անծանօթ չէր ինձ:

Գեր. Սրբազանին այս երկու ձեռագիրներու գնահատելի առաւելութիւնները, կամ աւելի ճիշդ՝ մինչեւ հիմակ այս սեռին մէջ զուտ խնդրուած (Postulat) մնացած ողջամիտ ուղղութիւնը՝ հետեւեալ թուումներով կարելի է քնորոշել.

Ա. — Հոն, այդ երկու հատորներուն մէջ, քարոզուած է ճանչցուած ու ըմբռնուած Քրիստոսը եւ անոր աւետարանին իսկական բարոյականը, այսպէս Քրիստոնէական ուսուցումին տալով իրական եւ անփնադասելի արժեք մը:

Բ. — Հոն շահապետած է Գաղափարը, զերծ մարդկային աւանդապաշտ մոլար վարդապետութիւններու ստրկական եւ շահադէտ հետեւողականութենէ, ինչպէս նաեւ գիտնական նախապաշարունակներու անպատշաճ երգիծանքներէ եւ ժխտումնամոլ միտումներէ, այսպէս դարաւոր անպտուղ սովորամոլութենէ մը ձերբազատելով կրօնի ուսումը:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Իբրև լուրջ ամփոփում մը եւ մեթոտաւոր դասաւորութիւն մը Քրիստոնէական Բարոյականի, քանի մը տարիներէ ի վեր ուշադրութիւնս իր վրայ հրաւիրած էր A. Ottoի La morale chretienne, d'après les enseignements de l'Evangile անուն գործը, որ հակառակ իր համառօտութեան, եւ իր շատ մասնագիտական հանգամանքին, առաջին տեղը կը բռնէ այս սեռի գործերուն մէջ:

Գանի մը տարի առաջ մտադրութիւնը ունեցայ թարգմանել այս գիրքը, եւ հրատարակել իր նոյնութեամբը ուրիշներու կողմէ եղած թեւադրութիւններու վրայ, սակայն, մտադրութիւնս փոխեցի եւ ուզեցի պարզ թարգմանիչի դերէն աւելի բան մը ստանձնել հանդէպ ընթերցողներուս:

Ուստի նկատելով որ մեր տուններուն մէջ Աստուածաշունչի եւ մանաւանդ նոր Կտակարանի Ուսումնասիրողի լրջախոհ ընթերցումը կը պակսի եւ այսօր իրապէս անոնց անծանօթ կը մնայ Քրիստոնէական Բարոյականը իր ամբողջութեանը մէջ, եւ երկրորդ նկատելով որ մեր դպրոցներուն մէջ, հակառակ Ուսումն. Կազմ. Կանոնագրին, Կրօնքն ու Բարոյականը անուանական գոյութիւն մը միայն ունին, մտածեցի ընդլայնել այն ներածութիւնները, զոր Օթթօ իր գիրքին իւրաքանչիւր գլուխին սկիզբը դրած էր, իբրև ամփոփում մը իրեն կցուած բնագրական (textique) բովանդակութիւններուն: Ստոյգ է, որ յաւելումներով, հեղինակին ներածութիւններէն վերցուցած եղանք անոնց ամփոփուած հանգամանքը, առանց ընդհանուր ուղղութեան վնասելու, այսու հանդերձ անոնք կարեւոր էին մեր առաջադրած երկու նպատակներուն կարենալ ծառայեցնելու համար մեր այս գործը: Մեր կողմէն կատարուած երկրորդ աշխատութիւնը սա եղած է. թէ որ որ հեղինակը քանի մը իրերու հետ առնչութիւն ունեցող նիւթեր իւրերու միացուցած էր մէկ գլուխի մը ներածութեանը մէջ, մենք զանոնք բաժնեցինք իրարմէ, եւ անոնցմէ առանձին հատուածներ ձեւացուցինք միեւնոյն զխակարգութեան տակ, բնագրական բաժանումներուն մէջ հեղինակին կողմէն ընդունուած մեթոտին համաձայն: Այս երկու կերպ աշխատութիւններէն զատ, ուրիշ անձնական բան մը չունինք այս գիրքին մէջ. նոյնութեամբ հետեւած ենք հեղինակին դասաւորութեան կերպին, եւ բնագիրներու հասկացողութեան ու ըմբռն-

նուճներուն մէջ, քանի մը սկզբունքի տեսակէտով անհամաձայն չէինք իրեն հետ: Այնպէս որ մեր այս գիրքին ազատ թարգմանութիւն անունը չպիտի վարանէինք տալ, եթէ նկատողութեան չառնէինք այն կարեւոր յաւելումները զորս յարմար դատեցինք ընել, մեր աչքին առջեւ ունենալով բազմաթիւ կարեւոր գործեր, որոնք հեռուէն կամ մօտէն աղերսներ ունէին Քրիստոնէական Բարոյականի հետ:

Սոյն գիրքին կազմութեանը ծառայող մեթոտին համար ուզեցինք որ Տորտ. Օթթօ ինքը խօսի, անոր համար հոս թարգմանեցինք անոր գիրքին ներածութիւնը, գրեթէ ամբողջութեամբ, եւ ասի անհրաժեշտ էր գործին ամբողջութիւնը կարենալ ներկայացնելու եւ ցոյց տալու համար այն դերը զոր գիրքը եւ գիրքին բովանդակութիւնը եղող «Քրիստոնէական Բարոյական»ը պիտի կատարեն մեզ նման կրօնապէս տրգէտ ժողովուրդի մը մէջ:

Քրիստոնէական Բարոյականը տուներու մէջ կարդացուած ատեն մեծապէս պիտի նպաստէ Աւետարանի Բարոյականին. այնքան անհրաժեշտ ու այնքան կարեւոր ըմբռնումին, Իսկ դպրոցներու բարձրագոյն կարգերուն համար պիտի կրնայ ծառայել թէ իբրեւ **Կրօնի** եւ թէ իբրեւ **Բարոյականի** գիրք, քանի որ մէկ կողմէն իր բնագիրներովը աշակերտը պիտի ընտելացնէ Նոր Կտակարանի այնքան անտեսուած ընթերցանութեան, եւ միւս կողմէն ցոյց պիտի տայ բարոյական ուսուցումին ընդհանուր եւ զլիսաւոր գիծերը, որոնք անհատին անձնական եւ ընկերական պարտաւորութիւնները կը նշանակեն կարելի եղած ամփոփումներով:

Եւ մենք այն հաւատքը ունինք, թէ «Քրիստոնէական Բարոյական»ը պէտք է կարդանք թէ իբրեւ Բարոյականի ուսուցում, եւ թէ իբրեւ պատմական ուսումնասիրութիւն Քրիստոնէական ըմբռնումներու:

Դպրոցականներու համար մասնաւոր պահանջներ չիւնենք կամ ընդլայնումի համար նիւթեր չի դրինք, քանի որ իւրաքանչիւր նիւթի տակ դրուած բնագիրներէն իւրաքանչիւր հատուածը, իբրեւ առած եւ իբրեւ բարոյականի սկզբունք, ահագին նիւթեր կը պարունակեն ընդլայնումի եւ գրական պարտականութիւններու համար:

Աւելորդ չենք համարիւր այս առթիւ ծանուցանել, թէ նախտակ ունինք, մօտ ժամանակէն տպագրութեան տալնան «Քրիստոնէական եկեղեցւոյ Վարդապետութիւն»ը, ուր Հայ. եկեղեցիի վարդապետութիւնը բաղդատութեան եզր ծառայած է, միւս Քրիստոնեայ եկեղեցիներու վարդապետութիւնները ներկայացնելու համար:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Բարոյականը անցեալին հաւատալիքներէն միակն է, որ հեղինակութիւն մը պահած է մեր ժամանակակից ընկերութիւններուն մէջ: Բայց այն ալ խախտած է մինչև իր առաջին հիմքերը: Առանց խօսելու այն յոռի բարքերու մասին, որոնք ամէն ժամանակներու վէրքը եղած են, և որոնք այսօր հազուադէպ անամօթութիւնով (cynisme) մը կը ցուցադրուին, մեր ելեւմտական դայթակղութիւնները չեն ցուցներ, թէ անցած է հին նախապաշարունակներուն պարզ պարկեշտութիւնը, ուրկէ մերկանալ կը փութան մարդիկ: Սուսն ու երգիծանքը ամէն վիճաբանութիւններու հոգին եղած չեն, և իբրեւ եզրակացութիւն, աղանդ մը, որ արիւնխաւանց անբաններէ կազմուած է միայն, չի յայտարարեր, թէ ներելի է կողոպտել կամ սպաննել իր դրացին, միայն անոր համար, որ թերեւս օգուտ մը քաղէ ընկերական դերի գործարանաւորութեան մը առաւելութիւններէն: Այսպէս, իրաւամբ, մեր օրերուն, բարոյականը կը կազմէ մտազբազումը բոլոր լուրջ խորհողներուն, և մասնաւորապէս բոլոր դպրոցներու փիլիսոփաներուն. որովհետեւ ասոնց ամէնքն ալ կ'ըմբռնեն, թէ առանց բարոյականի, և անհատական ընթացքութիւններու և կիրքերու բացարձակ տիրապետութեան նուրբ, ոչ մէկ տեսակ քաղաքակրթութիւն չէ կարելի: Դժբախտաբար իրենց կարծիքներու տեսականը (theorie) յարմար չեն թուիր չարիքը դարմանելու: Իրարու հակասելն է իրենց դոյզն յանցանքը: Ստուգութիւններու ճարաւի ենք և անոնք դրու-

Թիւններ կուտան մեզի : Երբեմն հանճարեղ են այս դրու-
 Թիւնները , բայց անոնք միշտ իրենց հետ կը բերեն շին-
 ծու կարգադրութիւններու նկարագիրը և ամբողջ բարո-
 յականին էական պայմաններու մասին — անձնիշխանու-
 Թիւն , պարտք , վարձք — յաճախ պարզ ուրացումներով
 կը սկսին խօսիլ :

Պատմութեան իւրաքսնչիւր դարաշրջան իր նկարա-
 գիրը ունի բարոյական հաւատալիքներու զարգացումին
 մէջ : Այսօր մենք պէտք ունինք բարոյականի մը , որ իր
 ապացոյցները ունեցած ըլլայ : Բրիտոնեացիական Բարոյա-
 կանը միայն կը համապատասխանէ այս պայմանին : Ա-
 նիկա է միակ ծառը , զոր պիտի կրնանք դատել իր պը-
 տուղներէն և Բրիտոնեացիական Բարոյականն է եղած ըս-
 կըզբունքը ընկերական բոլոր յառաջդիմութիւններուն ,
 ուրիշ ծագում առած է արդի քաղաքակրթութիւնը . և
 ա՛յն Թուրքիոյ՝ զոր անի դրոշմած է մարդկային գործու-
 նէութեան վրայ , առաջին պատճառն է եղած արուես-
 տական , գիտական և ճարտարարուեստական բոլոր զար-
 գացումներուն՝ որոնք մարդկութեան մեծութիւնը կը շի-
 նեն : Բոլոր այս կերպափոխութիւնները առաջ եկած են
 ծոցը ա՛յն ժողովուրդներուն , որոնք Բրիտոնեացիութիւնը
 ընդունած էին , ըստ բաւականին մաքուր և կատարեալ
 ձեւի մը տակ և խորապէս տողորուած էին անով . միւս-
 ները՝ ամէն ազգէ , որոնց ամենէն յառաջադէմները հա-
 սած էին Հռովմէական Պետութեան ունեցածին նման
 մշակութեան դիրքի մը , այլևս չեն կրցած քչել անցնիլ
 քաղաքակրթութեան այս աստիճանը : Իրենց պատմու-
 Թիւնը փոխանակ յառաջդիմական զարգացում մը ըլլա-
 լու , երկարաձգուած անկումի մը պատմութիւնը եղած է ,
 և մեր օրերուն , Եւրոպական ազգերու միջամտութիւնը
 պէտք է , անոնց մէջ նոր կեանք մը ծնցնելու համար :
 Տասնեկինն դարերէ ի վեր , աշխարհի մէջ նշանակելի

զարգացում մը տեղի չէ՝ ունեցած Բրիտոնեացիութենէն
 դուրս : Պատմական այս մեծ իրողութիւնը բոլոր հրաշք-
 ներէն աւելի փայլուն ապացոյց մը չէ՝ Բրիտոնեացիական
 Բարոյականին ազդուութեանը :

Եւ այժքան առատ պտուղներ արտադրած ըլլալէն
 վերջ սպառեցա՞ւ ծառին հիւթը : Եղբայրութեան օրէնքը
 յաջողած է կանոնաւորել ընկերական և անհատական բո-
 լոր յարաբերութիւնները : Ազգերը քոյր եղա՞ն , և հա-
 կառակ հին պատերազմներու սոսկումներու անհետացու-
 մին , անիրաւութիւնները արտաքսուա՞ծ են միջազգային
 օրէնքներէն . միթէ սպառազէն ժողովուրդները միշտ
 պատրաստ չե՞ն նոր բռնաբարումներու : Է՛հ , ուրեմն թո՛ղ
 Բրիտոնեացիութեան ուսուցման անդուլ ազգեցութիւնով
 հնութեան գերիները յաջորդաբար անցած ըլլան ստրուկ-
 ներու վիճակին , յետոյ վարձկաններու վիճակին , այս
 վերջին վիճակը կը համապատասխանէ՞ եղբայրներու ըն-
 կերակցութեան : Միթէ ճշմարիտ չէ՞ , թէ՛ նոյն իսկ շատ
 աւելի զարգացած քրիստոնեայ ժողովուրդներու մէջ ,
 մարդիկ ժառանգական երկու մեծ դասակարգերու բաժ-
 նուած են միշտ . մին՝ որ պզտիկ փոքրամասնութիւն մը
 կը կազմէ , և որ շատ դոյզն կերպով մասնակցելով հան-
 դերձ ընդհանուր արտադրութեան , իրեն արամադրու-
 Թեան տակ առած է ամբողջական արդիւնքին կէսը , մինչ
 միւսը՝ մարդերու անհուն մեծամասնութիւն մը , որ գրեթէ
 ամէն ինչ ինք կ'արտադրէ , ստիպուած է բաւականանալ
 այն անբաւական մասովը միայն , որ իրեն կը մնայ
 առանձնաշնորհուած դասակարգի մարդերուն կանխառու-
 մէն (prélèvement) վերջ : Այս երկու դասակարգերը՝ մէկ
 մէկու հանդէպ դրած չե՞ն ինքզինքնին կատաղի թշնա-
 միներու բոլոր ատելութիւնով լեցուած , և ամենէն անու-
 դոք պատերազմը չի՞ սպառնար պայթիլ իրենց մէջ , եր-
 կու աշխարհներու մէջ ալ : Ո՞վ ուրեմն պիտի համարձա-

կէր ըսելու, թէ Քրիստոնէական Բարոյականի պատուիրաններուն ժամանակը անցած է, և թէ՛ տիեզերական եղբայրութեան տիրապետութիւնը հասած ըլլալով, պէտք կայ նոր բարոյական մը պրպտելու:

Մտադրութիւն չունիմ բնաւ այս գիրքին մէջ ցուցընելու այն ճշմարտութիւնները, զոր արտայայտեցի: Իմ ծրագիրս շատ աւելի պարզ է: Եթէ Քրիստոնէական Բարոյականը դադրած չէ ապագայ զարգացումներու անհրաժեշտ պայմանը ըլլալէն, կրնայ օգտակար ըլլալ ճշգրիտ կերպով և բնագիրներու համաձայն հաստատելը, թէ ի՞նչ բանի մէջ կը կայանայ այս բարոյականը, թէ՛ որո՞նք են անոր մեր վրայ դրած պատուէրները, թէ՛ անիկա ի՞նչ նպատակի կը ձգտի, և թէ՛ անիկա ի՞նչ միջոցներով կը ձգտի այդ նպատակին հասնիլ: Ահա այս է, ստուգիւ, իմ առաջադրած միակ նպատակս:

Քրիստոնէական բարոյականը ամբողջովին ամփոփուած է Նոր Կտակարանին մէջ, գիրք՝ որ բազմահատոր չէ, և ամենուն տրամադրութեան տակ կը գտնուի, և կը թուի, թէ այդ գիրքին, (Նոր Կտակարան) ընթերցումը բաւական պիտի ըլլայ իւրաքանչիւրին կատարեալ ծանօթութիւններ տալ անոր մասին: Ասիկա ճշմարիտ է, բայց մէկ պայմանով միայն, պէտք է որ այս ընթերցումը խիստ ուշադիր և շատ լուրջ ուսումնասիրութիւն մը ըլլայ, և մենք ամէն մարդէ ասանկ աշխատութիւն մը չպիտի կրնայինք պահանջել: Որովհետեւ բարոյական բոլոր պատուիրանները ցրուած են՝ անկարգ և առանց մեթոտի աւետարաններուն և թուղթերուն մէջ, և թէ շատ անգամ անոնք ընկերացած կը գտնուին թէ վարդապետական ուսուցումներու և թէ զանազան պատահարներու և իրողութիւններու նկարագրութեան, այնպէս որ միշտ դիւրին չէ գնահատել անոնց իրական տարողութիւնը (portée), և անոնց ամբողջութիւնը ըմբռ-

նել: Նմանապէս շատ մը մարդերու մէջ Քրիստոնէական Բարոյական բառերը տարտամ և շփոթ դադարաբի մը կը համապատասխանեն միայն: Ուրեմն, ծառայութիւն մը մատուցած կը համարիմ զատելով այս պատուիրանները իրենց կցուած վարդապետական հաստատումներէն և պատմական նկարագրութենէն, զանոնք ցոյց տալով ամենէն յատուկ և ամենէն ճշգրիտ ձեւերուն տակ: Վերջապէս զանոնք մեթոտաւոր կարգի մը համեմատ դասաւորելով, այնպէս որ իրարու միացած ըլլան ցուցակի մը մէջ, կատարեալ և միանգամայն տրամաբանօրէն համակարգութեամբ մը: Այս ցուցակը իր մէջ պիտի պարունակէ Նոր Կտակարանին բարոյականի վերաբերեալ բոլոր հատուածները. իմ աշխատութիւնս պիտի ըլլայ բոլոր հատուածները, որոշ կարգի մը մէջ, որպէսզի իւրաքանչիւրին դիւրին ըլլայ, առանց դժուարութեան գտնել բոլոր այն բարոյական ուսուցումները՝ որոնցմով Քրիստոնէութիւնը օժտեց աշխարհը:

Քանի մը դիտողութիւններ անհրաժեշտ են այն ըսկըզբունքի մասին, որ զիս առաջնորդեց այս աշխատութեան մէջ, ինչպէս նաև ընտրութեանը և դասաւորութեանը մասին այն բնագիրներուն՝ զոր ես հաւաքեցի:

Ինծի համար բարոյականը օրէնքն է աշխարհի մէջ մարդերուն ունենալիք վարմունքին և անոնց փոխադարձ յարաբերութիւններուն. օրէնքը՝ որ մասամբ բնութեան օրէնքներու որոշադրականութեան (déterminisme) հպատակած այս նիւթական աշխարհին մէջ անոնց ազատ դործունէութիւնը կը կանոնաւորէ. օրէնքը՝ որ կը կանոնաւորէ անոնց ընկերական յարաբերութիւնները, անոնց պարտքերը և իրաւունքները: Արդ այս գիրքին մէջ բարոյականը խնդրոյ նիւթ կազմած է: Ես մէկդի կը թողում կրօնական պարտականութիւնները — ո՛չ թէ առ Աստուած եղած պարտքերը, որովհետեւ մեր բոլոր պարտ-

քերը շնորհապարտութիւններ (obligations) են հանդէպ Աստուծոյ, և միայն իրեն դէմ յանդիման եղած ատենն իսկ է որ իրապէս կեանք ունինք. ամէն ինչ որ դպրոցին մէջ կոչուած են պարսֆ առ ակնն կամ պարսֆ առ նրանն, պարտք եղած են միայն անոր համար, որ անոնք Աստուծոյ կողմէն դրուած են մեր վրայ — ըսել կ'ուզեմ բուն իսկ կրօնական պարտականութիւնները, այսինքն անոնք որոնք մասնաւորապէս հաւատքի և պաշտամունքի կը վերաբերին: Իրապէս այդ աստուածաբանական ուսուցումները երբեք բարոյականի մէջ հասկցուած չեն, բայց միայն երկու էական հիմնակէտով, ուրկէ դուրս բարոյականը գոյութիւն չպիտի ունենար: Առաջինը կը վերաբերի բարոյական պատուիրաններու աղբիւրին և հեղինակութեան: Այս բոլոր պատուիրանները յայտնապէս կ'ենթադրեն գոյութիւնը Աստուծոյ, որ միայն կրնայ մարդերու վրայ պարտականութիւններ դնել, զանոնք հպատակեցնել պարտքերու, և անոնց իրաւունքներ շնորհել: Անոնք կ'ենթադրեն նաև հաւատքը Անոր վրայ՝ որ զիրենք կը հպատակեցնէ և այն՝ իր աստուածային պաշտօնով: Երկրորդ հիմնակէտը կը վերաբերի հատուցումներուն՝ որոնցմով Աստուած կ'ապահովէ իր պատուիրաններուն կատարումը: Բարոյականը այս երկու կէտերով միայն կը կցուի հրամանակարգ վարդապետութեան (dogme) հետ:

Յիսուս Քրիստոսի ուսուցումը ամէն բանէ առաջ ընկերական էր. անիկա կը ձգտէր փոխակերպել Հռովմէական Պետութեան սկիզբները գոյութիւն ունեցող ընկերութիւնը — աշխարհի ընկերութիւնը, Աւետարանի բառով — Նոր ընկերութիւն մը որ պիտի հիմնուէր իր կողմէն մարդերու առաջադրուած բարոյական նոր իտէալին վրայ: Իր ծագումին մէջ, այդ ընկերութիւնը հոգեւոր միայն կրնար ըլլալ, անիկա իբրև միութեան

կապ կրնար ունենալ՝ միայն, հաւատքի միութիւնը, և միայն այն կազմակերպութիւնը՝ զոր անհրաժեշտ կ'ընէր նոյն իսկ այս հաւատալիքներու պահպանութիւնը և անոնց ընդհանրացումը: Որովհետև այս հոգեւոր ընկերութիւնը պիտի տեւէր միշտ, և աշխարհական ընկերութիւններէ դուրս, որոնք կրնային հետզհետէ քրիստոնէական հաւատալիքները ընդունիլ և յառաջդիմաբար գործնականացնել անոր բարոյականի իտէալը, ընական է որ Քրիստոսի ուսուցումներու մէջէն ոմանք նպատակ ունենային այս կարեւոր յարաբերութիւնները, և առաջադրուած ըլլային այդ մասնաւոր ընկերութեանը: Բայց իրաւունք չէ որ անկէ ոմանք եզրակացնեն, թէ Յիսուսի Քրիստոսի իր առաքելներուն և իր անմիջական աշակերտներուն վրայ դրուած ընկերական պատուիրանները կը վերաբերին միմիայն հոգեւոր ընկերութեան, և չեն պատշաճ իր աշխարհական ընկերութիւններու, որոնք յետոյ ապա կոչուեցան Քրիստոնէական Բարոյականը պարտքի և իրաւունքի իբրև հիմ առնելու: Բուն իսկ իրենց ընտրութիւնովը մասնաւոր հանգամանքներու վերաբերող ուսուցումներէն զատ, մնացածները ընդհանուր են, և պէտք է գործադրուին ամբողջ քրիստոնէական և աշխարհական ընկերութեան կողմէն, միայն այն պատճառաւ որ բարին միշտ բարի է, և թէ ամէն կարգի մարդերու յարաբերութիւնները կը վարէ քանի որ իր յատուկ ընտրութիւնովը, մասնաւոր կարգի մը մէջ չամփոփուիր: Ուրեմն մենք չպիտի վարանինք ընդհանուր պատուիրաններուն կարգը դասել նաև այն պատուիրանները որոնք՝ այս տեսակէտով կասկածներ յարուցած են: Գալով անոնց՝ որոնք միայն հոգեւոր ընկերութեան կը պատկանին, հրամանակարգ վարդապետութեան (dogme) կալուածինն են անոնք, և մենք անոնցմով չպիտի զբաղինք այս գործին մէջ:

Ինչպէս ըսի, Քրիստոնէական Բարոյականը ամբողջովին կը բովանդակուի Նոր Կտակարանին մէջ: Քրիստոնէական թուականի Բ. Դարու կէսէն սկսեալ, այս հաւաքածոյին մէջ պարունակուած բոլոր գրուածները, բացի թերեւս քանի մը երկրորդական կարեւորութիւն ունեցող թուղթերէ, ճանչցուած էին այն ատեն գոյութիւն ունեցող բոլոր եկեղեցիներէն, և ընդունուած իրենց ամբողջութեանը մէջ, իրրեւ հիմնական *sofիւռնան* քրիստոնէական կրօնի: Անկէ ի վեր անցնող դարերու երկար շարքին մէջ, իրարու յաջորդող բոլոր սերունդները այդ գիրքէն քաղած են իրենց հաւատքին և իրենց պարտքերուն կանոնը, ճանչնալու համար Քրիստոնէական Բարոյականը, այսինքն քրիստոնեայ ժողովուրդներու գաւանդած բարոյականը, բաւական է ուրեմն դիմել այն գիրքին՝ որուն տասնեկինը դարերէ ի վեր կրկնուած ուսուցումը բաւական խոր թափանցած է ժողովուրդներու սիրտին մէջ, հոն իրրեւ մարդկային գիտակցութեան բնական ձայնը երեւնալու համար: Նոր Կտակարանի բնագիրին և լրացուցիչ մասերուն վրայ հմուտ աշխատասիրութիւնները անօգուտ չեն եղած: Որչափ ատեն ասոնք աւելի լոյս կը սփռեն Յիսուսի և առաքեալներուն ուսուցմանը վրայ, անվիճելի ծառայութիւն մը կը մատուցանեն:


Նոր Կտակարանի բարոյականի վերաբերեալ հատուածները բազմաթիւ են. բայց անոնցմէ շատեր զանազան գրուածքներու մէջ կրկնութիւններ են միայն, մերթ բառական և մերթ քիչ մը տարբեր ձեւի տակ: Ինծի համար բաւական նկատուեցաւ իւրաքանչիւր պատուէրի համար օրինակել այն հատուածը որ աւելի յստակ և աւելի կատարեալ բացատրութիւն կուտար անոր մասին, իսկ մնացեալները նշանակելով միայն, որ գիրքերուն մէջ որ կան: Կրկնութիւնները՝ որոնց հաւաստիք մըն են

մեր դնելիք Տեւերը, միեւնոյն ժամանակ նշան են այն կարեորութեան որ կը տրուէր անոնց բացատրուած գաղափարին: Կարելի եղածին չափ ևս բարոյական պատուէրը տուի իր աւելի սեղմ և աւելի դրական ձեւին մէջ, զայն անջատելով պատահական հանգամանքներէն, մերկացնելով նոյն իսկ այն բանաստեղծական ձեւերէն, որոնցմով յաճախ զարդարուած է: Յաւելով է որ մէկըի ձգեցի կրքեմն այնքան գեղեցիկ և այնքան սրտառուչ այդ ձեւերը, բայց ևս խորհեցայ թէ բարոյական ուսուցումը շատ պայմանով միայն պիտի ստանայ իր ամբողջ ճշգրտութիւնը: Միեւնոյն պատճառով ևս մէկ կողմ ձգեցի հոյլ մը հատուածներ, որոնք բարոյական ձգտում մը ունենալով հանդերձ, աւելի մարդկային գործերու շարժառիթներուն կը նային, և աւելի հոգեբանական օրինապահումներ են: Վերջապէս անցումներէ (transition) և երկարութիւններէ խոյս տալու համար երբեմն բնագիրին վրայ բառեր (նօսք գրով) աւելցուցի, կամ անկէ պակսեցուցի երբեմն, երբ տեսայ, թէ այս յաւելումները և այս յապաւումները ո՛ր է անպատեհութիւն չունէին, և երբ անոնք և ոչ մէկ կերպով կը խանգարէին հատուածին իմաստը:

Կը մնայ քանի մը խօսք ըսել այն մեթոտաւոր կարգին համար, որուն հետեւեցայ դասաւորելու համար կտորները, ու բնագրական ցուցումները, իւրաքանչիւր հատուածէ առաջ դնելով զանոնք: Իմ նպատակս չէր գրել բարոյականի ճառ մը, որ հաստատուած ըլլար աւետարանական բնագիրներու վրայ, կամ գրել Քրիստոնէական Բարոյագիտութեան (Ethique Chretienne) զրութիւն մը, իր բովանդակ տրամաբանական սարքով, որ կրնայ յարմարիլ այս տեսակ գործի: Ոչ ալ մեկնութիւն մը գրել էր իմ մտադրութիւնս: Կատարակ է եղած միմիայն Նոր Կտակարանին բարոյականի վերաբերեալ բնա-

գրական հատուածները իրար բերել անանկ կերպով մը՝ որ անոնց ընթերցումը դիւրին և օգտակար ըլլայ. առ այս՝ զանոնք ղրկել իրենց բնական կարգովը: Այս կարգը մասնաւորապէս կը կայանայ մասնաւորը ընդհանուրին ստորադասելուն, և մասնաւոր պատուիրանները ընկերական յարաբերութիւններու պատշաճող իրենց կարեւորութեանը համեմատ դասաւորելուն մէջ: Աւելի յստակ ըլլալու համար, իւրաքանչիւր ցուցակի գլուխ դրինք ծանօթութիւն մը որ մինչև մէկ աստիճան ամփոփում մըն է՝ անոր բովանդակութեանը, և մեր արդի լեզուով կը թարգմանէ այն խօսքերը՝ որոնք կ'ուղղուէին արդի ժողովուրդներէն բոլորովին տարբեր ժողովուրդներու, և որոնք պէտք էր որ յարմարէին մեր ժամանակի զգացումներուն և գաղափարներուն: Կարելի եղածին չափ ղգուշացայ մասնակից ըլլալէ այն վիճաբանութիւններուն, որոնք բնագիրներու մեկնութեան մասին յարուցուած են, սակայն չվարանեցայ այդ բանը ընելու երբ բնագիրներուն բովանդակութիւնը և արամբանութիւնը զիս կը հարկադրէր: Պէտք չեմ տեսներ հոս նշանակել իմ ընդունած կարգս ու բաժանումները և անոնց շարժառիթները մէջ բերել. նիւթերու վրայ նետուած ակնարկ մը պիտի տայ անոր նշմարը, և ծանօթութիւններու շարքը՝ պիտի ունենայ իր մէջ անոր բաւական արդարացումը:

A. OTTO
Docteur en Droit



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԸ



Ա.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ՇԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

202
810

Քրիստոնէական բարոյականը՝ իր ծագումին մէջ, չենք կրնար բոլորովին անջատ և անկախ նկատել Հին Կտակարանի բարոյական օրէնքէն, որ իբրև Աստուծոյ հրաման մը կ'երեւի Հին Ուխտի պատմութեան մէջ: Ազատ էակին՝ մարդուն՝ գործելու կերպերը կանոնաւորապէս ճշդող, և անոր բարոյական տարբերութիւնները սահմանող ու և է օրէնք չլիտի կրնար պարտաւորիչ ըլլալ մարդուն համար, եթէ բարձրագոյն զօրութենէ մը, Ստեղծողէ մը բղխած չըլլար: Այս հաւատքը հաստատուն արմատ ձգած էր այն երկրին և այն մարդերուն մէջ, ուր մեծցաւ Յիսուս և որոնց քարոզեց, իր հրապարակային կեանքին մէջ: Ուրեմն, Յիսուս այդ մարդերու բարոյական ու վարդապետական ուսուցում մը ընելէ առաջ, պարտաւոր էր հաստատել թէ Աստուծմէն իրեն իշխանութիւն

և կարողութիւն տրուած էր, հին օրէնքը կատարելագործելու, ընդլայնելով, յապաւելով, և նորանոր պատուէրներ դնելով այն հիներուն տեղ, որոնք մարդուն տրուած էին հին ժամանակներուն մէջ: Առանց այս իրաւասութեան կարելի չլիտի ըլլար հին օրէնք մը կասարեղագործել:

Մենք հոս յառաջ պիտի բերենք Նոր կտակարանէն ամէնէն կարեւորները այն հատուածներուն՝ որոնցմով վարդապետական և բարոյական պատուիրաններէ անջատ՝ Յիսուս կը հաստատէ իր աստուածային առաքելութիւնը և կարողութիւնը. կը նշանակէ իր կատարելագործութեան ձեռնարկին յառաջդիմական նկարագիրը, քանի որ ինքը կը յայտարարէ թէ չէ եկած հին օրէնքը ջնջելու, այլ ընդլայնելու և կատարելագործելու զայն: Յիսուսով կ'ազնուանայ հին օրէնքին բարոյականը և աւելի մարդասէր նկարագիր մը կ'առնու: Հոս Աստուած կը դադրի նախանձուտ ու բարկացող տէր մը ըլլալէն և կ'ըլլայ սիրող և ողորմած Հայր մը. ալ երկիւղով չէ որ պիտի հնազանդինք Անոր պատուէրներուն, այլ՝ սիրով. վախը յարգանքի կը փոխուի Անոր անհուն գերագունութեան հանդէպ: Այս փոփոխութեան մէջն է Նոր Ուխտի բարոյականին առաւելութիւնը բազդատմամբ Հին Օրէնքի բարոյականին:

Յիսուս բարոյականի այդ կենսական կատարելագործումին մէջ անհրաժեշտ համարեց ցոյց տալ նաև այն միջոցը՝ որով կարելի պիտի ըլլար

իր բարոյականի ճշմարիտ ուսուցումը զանազանել և որոշել ո՛չ միայն հին օրէնքի անկատար բարոյականէն, այլ և սուտ մարդարէներու քարոզած սխալ վարդապետութիւններէն: Իրեն կողմէն ցոյց տրուած այդ վճռական միջոցն էր Մէկը ԻՐ ՊՏՈՒՂՆԵՐԷՆ ԿՍՄ ԻՐ ԱՐԴԻԻՆՔԷՆ ԴՍՏԵԼ: Ապագային մեծ ճշմարտացումն էր այս, որովհետև Քրիստոսի ժամանակ այդ պտուղներուն մէկ աննշան մասը միայն կրնար արտադրուիլ, աւետարանին քարոզութեան սահմանափակ հանդամանքին և տիրող ընկերական ու քաղաքական կայութեան պատճառով, մինչ ապագան շքեղօրէն կատարեց այդ խոստումը: Որովհետև արդի ամբողջ քաղաքականութիւնը Աւետարանէն ծնաւ:

ՄԱՏԹ. Ժ. 40. — Ան որ զիս կ'ընդունի, կ'ընդունի զայն՝ որ զիս զրկեց:

ՅՈՒՂ. ԺԴ. 6. — Ես եմ ճաւապարհն ու ճամարտութիւնը և կեանքը. մէկը հօրը քով չի գար, եթէ ոչ ինձմով:

ԻԲ. 48. — Ան որ զիս կ'անարգէ և իմ խօսքերս չ'ընդունիր, կայ մէկը, որ զանիկա կը դատէ. խօսքը՝ զոր ես խօսեցայ, ան պիտի դատէ զանիկա վերջին օրը:

ԻԲ. 49. — Ինչու որ ես ինքնիրմէս չխօսեցայ, հասպա Հայրը՝ որ զիս զրկեց ինքը ինձի պատուիրեց ինչ որ պիտի ըսեմ և ինչ որ պիտի խօսիմ:

ՄԱՏԹ. Ե. 17. — Մի կարծեք թէ ես օրէնքն ու մարգարէները ջնջելու եկայ, չէ թէ ջնջելու այլ կատարելագործելու:

Ե. 19. — Ով որ այս ամենափոքր պատուէրներէն

մէկը ջնջէ, և այնպէս սորվեցնէ մարդերուն, անիկա ամենախորք պիտի կոչուի երկնից թագաւորութեան մէջ:

ՅՈՎ. Ժ. 15. — Եթէ զիս կը սիրէք, իմ պատուիրաններս պահեցէք:

Ի. 21. — Ով որ իմ պատուէրներս կը բռնէ ու կը պահէ, ան է զիս սիրողը:

Ի. 23. — Թէ որ մէկը զիս կը սիրէ, իմ խօսքս պիտի պահէ, ու իմ Հայրս զանիկա պիտի սիրէ, և անոր պիտի երթանք և անոր քով պիտի օթեւանինք:

ՄՍՏԹ. ԺԱ. 28. — Եկէք ինձի բոլոր յողնածներ և բռնաւորուածներ, և ես պիտի հանգչեցնեմ ձեզ:

ԺԱ. 29. — Իմ լուծս առէք, ու ինձմէ սորվեցէք որ հեզ եմ ու խոնարհ՝ սրտով և ձեր անձերուն հանգիստ պիտի գտնէք:

ԻԱ. 30. — Որովհետեւ իմ լուծս քաղցր է և իմ բեռս՝ թեթեւ:

Ա. ՅՈՎ. Ե. 3. — Ինչու որ Աստուծոյ սէրը անոր պատուիրանները պահելուն մէջն է, և անոր պատուիրանները ծանր բան չեն:

Բ. ԿՈՐՆԹ. Ա. 3. — Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, զթութեանց Հայրը և մխիթարութեանց Աստուածը:

Ա. ՊԵՏ. Ա. 17. — Թէ որ Հայր կը կոչէք զԱնի, որ անաչառօրէն կը դատէ ամէն մէկը իր գործքին համեմատ, ուրեմն երկրի վրայ ձեր բնակութիւնը (պանդրստութիւնը) վախով անցուցէք:

(Տես նաև Յովհ. ԺԵ. 9. 10 Ա. Պետր. Բ. 17)

ՄՍՏԹ. Է. 15. — Զգոյշ կեցէք սուտ մարգարէներէն, որոնք ոչխարի հանդերձներով կուգան, բայց ի ներքուստ յափշտակող գայլեր են:

Է. 16. — Իրենց պտուղներէն պիտի ճանչնաք զանոնք. միթէ փուշերէն խաղող, և տատասկէն թուզ կը քաղուի:

Է. 17. — Ասանկ ալ ամէն բարի ծառ բարի պտուղ կուտայ և չար ծառ՝ չար պտուղ:

Է. 18. — Բարի ծառը չի կրնար չար պտուղ տալ, ոչ ալ չար ծառը՝ բարի պտուղ:

Է. 19. — Ամէն ծառ որ բարի պտուղ չի տար, կը կտրուի և կրակը կը ձգուի:

Է. 20. — Ուրեմն իրենց պտուղէն պիտի ճանչնաք զանոնք:

(Տես նաև Մատթ. Գ. 10. ԺԲ. 33. Դուկաս Զ. 43-44):

Բ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԻՏԷԱԼԸ

I

ՄԱՐԴՈՒՆ ԿՈՉՈՒՄԸ

Քրիստոնէական բարոյականին յառաջգիմութիւնը ընդունելէ վերջ, պէտք է վնասուել թէ այդ բարոյական օրէնքը ինչ կոչում կը վերագրէ մարդուս: Մարդիկ շատ անգամ սխալ դադափար կազմած են իրենց կեանքի մասին, և կարծած են, թէ իրօք աշխարհ եկած են, սոսկ ապրելոյ, և իրենց երջանկութեան կամ իրենց անձնական բաղձանքներուն գոհացումը վնասուել զանելու համար: Քրիստոնէական բարոյականը ատկէ բարձր կոչումի մը կ'առաջնորդէ մարդերը, և մեղի կը զգացնէ, թէ մենք աշխարհի մէջ մեղի համար

չենք ծնած, թէ մենք աստուածային գործի մը գործաւորներն ենք, ու միեւնոյն ժամանակ Աստուծոյ գործակիցները, իր արարչութիւնները և անոնց երեւոյթները ամբողջացնելու համար: Մեր այս կոչումը երբ ըմբռնենք, ալ դիւրին կ'ըլլայ մեզի համար համոզուիլ թէ մեր գերագոյն նպատակը պէտք է ըլլայ երկրի վրայ Աստուծոյ թագաւորութեան իրականացումը: Յիսուս իր աշակերաններուն աղօթք մը յանձնարարեց, ՀԱՅՐ ՄԵՐԸ, այդ աղօթքով արտայայտուած բաղձանքներուն առաջինն է Աստուծոյ թագաւորութեան հաստատութիւնը երկրի վրայ: Եւ մեր պարտականութիւններուն ամէնէն էականը և ամենէն անհրաժեշտն է Աստուծոյ կամքը կատարել երկրի վրայ, ինչպէս որ կատարուած է երկնքի մէջ: Մեր օրական հացին խնդիրը՝ որ աշխարհիկ մարդերու մտածումներուն մէջ առաջին և ամէնէն լայն տեղը գրաւած է, երկրորդական դերք մը միայն բռնած է այդ աղօթքին մէջ: Այս գերագոյն պարտականութեան հանդէպ պէտք է որ անհետ ըլլան ոչ միայն նիւթական վայելքներու մեր բոլոր տենջանքները այլ և կեանքին անհրաժեշտ պէտքերուն հոգը: Ասով արժանիքի պէտքը, հացի պէտքէն առաջ անցաւ: Որովհետեւ երբ արժանիքը մարդուս մէջ ի յայտ կուգայ այնպէս, ինչպէս քրիստոնէական բարոյականը կը պահանջէ, այն ատեն մարդ կրնայ ձեռք բերել իր բոլոր օրինաւոր պէսֆերուն գոհացումը, քանի որ բուն

արժանիքը մարդէն պիտի վտարէ այն տեսակ բաղձանքները, որոնք անիրաւի տեղ մը բռնած էին իր մէջ, այդ արժանիքին բարձրանալէն առաջ: Քրիստոնէական բարոյականով մեր վրայ գրուած Աստուծոյ գործաւորի մեր պարտականութիւնը կը չափաւորէ մեր անձնական գոհացումներուն համար մտքի ու մարմինի ամէն ձգտում, կ'արտաքսէ մեզմէ, անձնական ամէն մտահաճութիւն, բնահաճոյք և իր անձինն սէրը: Այս պատճառաւ է որ կը դատապարտուի՝ Աւետարանին կողմէ՝ մարդկային եռասիրութիւնը, իր բոլոր ձեւերուն ու արտայայտութիւններուն մէջ, որպէս զի մարդուն ունեցած ամէն կարողութիւնները և ընդունակութիւնները գործածուին այս աշխարհիս մէջ Աստուծոյ թագաւորութեան իրագործումին:

ՄԱՏԹ. 2. 9-10-11. Ո՛վ Հայր մեր որ երկինքն ես, սուրբ ըլլայ քու անունդ, թող քու թագաւորութիւնդ գայ, թող քու կամքդ ըլլայ, ինչպէս երկնքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ: Մեր ամէն օրուան հացը այսօր մեզի տուր:

2. 24. Մարդ չի կրնար երկու տիրոջ ծառայել, ինչու որ կամ մէկը պիտի ստէ և միւսը սիրէ, կամ մէկուն պիտի յարի և միւսը պիտի արհամարհէ. չէք կրնար ծառայել թէ Աստուծոյ և Մամոնային:

2. 31-32. 33. Ուրեմն հոգ մի ընէք ըսելով, թէ ի՞նչ պիտի ուտենք կամ ի՞նչ պիտի խմենք, կամ ի՞նչ պիտի հագնինք: Ինչու որ այդ ամէնը հեթանոսները կը խնդրեն. վասն զի Ձեր երկնաւոր հայրը զիտէ, թէ այդ բոլոր բաները ձեզի պէտք են: Նախ խնդրեցէք Աստու-

ծոյ թագաւորութիւնը և անոր արդարութիւնը, և այդ բոլոր բաներն ալ ձեզի պիտի արուին:

(Տես նաև Մատթ. 2. 25-30 Ղուկ. ԺԶ. 13 ԺԲ. 22-31 Հռովմ. ԺԴ. 17):

ՅՈՎՀ. ԺԵ. 1-2. — Ես եմ ճշմարիտ որթը, և իմ Հայրս մշակն է: Ամէն ճիւղ որ իմ վրաս է ու պտուղ չի բերեր, կը կտրէ զանիկա, և ան որ պտուղ կը բերէ, կը մաքրէ զայն որ աւելի պտուղ բերէ:

ԻԵ. 16. Ոչ թէ դուք էիք, որ զիս ընտեցիք, հապա ես ձեզ ընտրեցի, և դրի ձեզ, որ երթաք և պըտուղ բերէք ու ձեր պտուղը մնայ:

Ա. ԿՈՐՆԹ. Գ. 9. — Ինչու որ մենք Աստուծոյ գործակից ենք. Դուք Աստուծոյ մշակութիւնն էք, Աստուծոյ շինութիւնն էք:

ՄՐԿ. Ը. 35. Ով որ կ'ուզէ իր անձը ապրեցնել պիտի կորսնցնէ զանիկա, և ով որ ինձի ու Աւետատարանին համար իր անձը կորսնցնէ պիտի ապրեցնէ զանիկա:

ՅՈՎՀ. ԺԲ. 25. Ով որ իր անձը կը սիրէ, պիտի կորսնցնէ զանիկա, և ով որ այս աշխարհիս մէջ իր անձը կ'ատէ, յախտենական կեանքի համար պիտի պահէ զանիկա:

(Տես նաև Մատթ. Ժ. 39. ԺԶ. 25. Ղուկ. Թ. 24 ԺԷ. 33):

ՀՈՌՈՎՄ. ԺԴ. 7-8. Մեզմէ մէկը իր անձին համար չ'ապրիր ու մէկն ալ ինքզինքին համար չի մեռնիր:

Թէ որ ապրինք Տիրոջը համար կ'ապրինք, և թէ որ մեռնինք, Տիրոջը համար կը մեռնինք, արդ, թէ՛ ապրինք, և թէ՛ մեռնինք մենք Տիրոջն ենք:

ԺԲ. 11. Ձանքի մէջ թուլասիրտ չըլլաք, հոգիով բորբոքեցէք, Տիրոջը ծառայեցէք:

ԺԲ. 1. Կ'ազաչեմ ձեզ, եղբայրներ, Աստուծոյ ողորմութիւնովը, որ ձեր մարմինները ընծայէք կենդանի գոճ մը՝ սուրբ, Աստուծոյ հաճելի, որ է ձեր բանաւոր պաշտօնը:

II

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ

Մարդուն կոչումը քրիստոնէական բարոյականի համաձայն ցոյց տուած ժամանակնիս ըսինք թէ մարդուս գերագոյն նպատակն է երկրի վրայ իրականացնել Աստուծոյ քաղաւորութիւնը: Հիմա պէտք է ըսել թէ այդ Աստուծոյ թագաւորութեան իրագործումը ընկերական գործ մըն է ամէն բանէ առաջ: Այդ թագաւորութիւնը Գրիստոս հիմնեց աշխարհի վրայ ու մենք դարերու ընթացքին մէջ զայն պիտի ամբողջացնենք: Ամէն դար ու ամէն դարու մարդիկ պէտք է իրենց դերը ունենան այդ գործին մէջ, որովհետև Աստուծոյ թագաւորութիւնը աշխարհի մէջ ուրիշ բան չէ եթէ ոչ մարդկային ընկերութիւնը: Ամէն անհատ, որ այդ ընկերութեան մէջ կ'ապրի ու պիտի ապրի այդ թագաւորութեան մէկ անբաժան մասը կը կազմէ: Բայց որպէս զի անհատը այդ թագաւորութեան կամ այդ ընկերական մարմինին մէջ, իրական արժէք մը ունենայ ու զնահատուի, անհրաժեշտ է որ իր կոչումը և իր անդամակցութիւնը արժեցնող գործ մը կատարէ հոն որովհետև մեզմէ ամէն մէկերնիս յատուկ գործի մը մասնաւոր պաշտօնի մը համար կոչուած ենք, անդամակցութեանը այդ ընկերական մարմինին, այդ Աստուծոյ թագաւորութեանը, որ

Յիսուսի մարմինին հետ բաղդատուած է : Երբ այդ մարմինին անդամներէն մին կամ միւսը կը տկարանայ բարոյապէս, և չ'ուզեր կամ չի կրնար իր յատուկ գործը կամ պաշտօնը կատարել և այն ատեն անդամներու գործակցութեան կենսական սկզբունքին արդիւնքն եղող աստուածային ներգաշնակութիւնը կը խանդարի և դերագոյն նպատակին ծառայող այդ մարմինը կը տկարանայ : Աստուծոյ թագաւորութիւնը, իբրև ընկերական մարմին, բաղդատուած է շէնքի մը հետ, որուն անկիւնաքարն է Յիսուս Քրիստոս : Այդ ընկերական մարմինին շէնքը կառուցանելու և ամբողջացնելու համար անհրաժեշտ է որ մեզմէ ամէն մէկերնիս կենդանի քարեր ըլլանք, և մտնենք այդ շինուածքին մէջ : Հոն ամէն քար իր տեղն ունի. մեծի և պզտիկի խնդիր չիկայ բնաւ, բաւական է որ մեր ամբողջութիւնը հոն տանինք :

Աւետարանով քարոզուած այս սկզբունքները 'ի սկզբան հողեւոր ընկերակցութիւններու — Եկեղեցիներու միայն կը պատկանէին, որովհետև այն ատեն անոնք միայն կրնային կազմուիլ : Սակայն անոնց ապագայի ամենամեծ նպատակն էր նաև վարել աշխարհական ընկերութիւնները, որոնք աւելի վերջերը պիտի կազմուէին իրմով ներշնչուած : Եւ այսօր երբ քրիստոնէական բարոյականի ոգին թափանցած է, նոյն խակ մարդկութեան աշխարհային ձգտումներուն մէջ, այդ ընկերութիւններուն մէջ մարդկային անհատը այն

ատեն միայն իրեն սեփական արժէք մը կ'ունենայ, երբ անկիւն օգտակար պաշտօն մը կը կատարէ : Գործակցութեան ոգին և գործակցութեան աստիճանն է որ մեզմէ իւրաքանչիւրին իրաւունքները կը սահմանեն :

ՀՌՌՎՄ. ԺԲ. 4-5 Ինչպէս որ մէկ մարմնի մէջ շատ անդամներ ունինք, և ամէն անդամ միեւնոյն գործը չունի :

Այնպէս ալ մենք թէպէտ շատուոր, բայց մարմին մըն ենք Քրիստոսով և ամէն մէկերնիս իրարու անդամներ ենք :

Ա. ԿՈՐՆԹ. ԺԲ. 4-5. Պարզէնները զանազան են, բայց նոյն է հոգին :

Պաշտօնները զանազան են, բայց նոյն է Տէրը :

ԵՓԵՍ. Գ. 11. Ինքը մէկ քանինք տուաւ առաքեալներ ըլլալու, մէկ քանին՝ մարգարէներ, մէկ քանին՝ աւետարանիչներ, մէկ քանին՝ հովիւներ և վարդապետներ :

Ա. ԿՈՐՆԹ. ԺԲ. 14. Ինչու որ մարմինը մէկ անդամ մը չէ, հասկա՞ շատ :

ԻԲ. 21, 22. Աչքը չի կրնար ըսել ձեռքին, թէ դուն ինձի պէտք չես. և ո՞չ ալ գլուխը՝ ոտքերուն, թէ ինձի պէտք չէք :

Մանաւանդ մարմնոյն այն անդամները, որոնք շատ տկար կ'երևան, աւելի հարկաւոր են :

ԺԲ. 25. Որպէտզի մարմնոյն մէջ երկպառակութիւն չըլլայ, այլ՝ անդամները միեւնոյն հոգն ունենան իրարու հանդէպ :

ԺԲ. 27. Արդ դուք Քրիստոսի մարմինն էք, ու մասնաւորապէս անոր անդամները :

Ա. ԿՈՐՆԹ. Գ. 16. — Չէ՞ք գիտեր, որ Աստուծոյ

տաճար էք դուք, և Աստուծոյ հողին ձեր մէջ բնակած է :
ԵՓԵՍ . Բ . 20-21 . — (Դուք) շինուած (էք) առա-
քեալներուն և մարգարէներուն հիման վրայ, որուն ան-
կիւնին գլուխը Յիսուս Քրիստոս է :

Որով բոլոր շէնքը յարմարութեամբ կազմուած ,
կ'աճի սուրբ տաճար կ'ըլլայ Աստուծով :

Ա . ՊԵՏՐ . Բ . 4 . 5 . — Մօտենալով Տիրոջը , այն
կենդանի վէմին , որ թէպէտ մարդերէն անարգուած ,
բայց Աստուծմէ ընտրուած ու պատուական է :

Դուք ալ կենդանի քարերու պէս շինուիք հողեւոր
տաճար մը , սուրբ քահանայութիւն մը , Յիսուս Քրիս-
տոսի ձեռքովը Աստուծոյ հաճելի հողեւոր պատարագներ
մատուցանելու :

(Տես նաև , Ա . Կորնթ . Զ . 19) :

III

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

և

ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Մարդկութեան կամ մարդկային ընկերական
մարմինին բարոյական զարգացումն ու կատարե-
լագործութիւնը դարերու և սերունդներու կը
կարօտի : Այս պատճառաւ նոյն իսկ , երկրի վրայ
Աստուծոյ թագաւորութիւնը , ուղիղ բարոյականի
ընդհանրական տիրապետութիւնը , հետզհետէ ու
յառաջադիմաբար պիտի իրագործուի : Պատմական
երկար յեղաշրջութեան մը պտուղը պիտի ըլլայ
անիկա : Յիսուսի քարոզութիւնը այդ թագաւո-

րութեան ցանուած սերմը եղաւ աշխարհի վրայ :
Եւ այդ անարգուած սերմը պիտի մեծնայ հե-
տըզհետէ ընդգրկելու համար ամբողջ մարդկու-
թիւնը : Անոր զարգացումը տեղի պիտի ունենայ
ընկերական վերակազմութիւններով , որոնք քրիս-
տոնէական բարոյականի սկզբունքները դարերու
և իրերու անհրաժեշտ պէտքերուն համաձայն
յեղանակաւորած , պիտի դործնականացնեն , ըն-
կերական մարմինի բոլոր անդամներուն ազնուա-
ցումին համար : Եւ Աստուծոյ թագաւորութեան
այդ սերմը պիտի յայտնուի բարոյական սկզբունք-
ներուն անհրաժեշտ արդիւնքը եղող մարդկային
իմացական և նիւթական յառաջդիմութիւններուն
մէջ : Այդ կատարելագործութեան երբը մեր գի-
տակցութեան սահմանին մէջ չէ : Սա միայն գի-
տենք , աւետարանական առածէ մը , և դարերու
փորձառութենէն , թէ այս բարոյական և իմա-
ցական յառաջդիմութիւններուն ծառայող արի
գործաւորներուն բախտը պիտի բարւոքի անդա-
դար . համերաշխութիւնը աւելիլաւ պիտի գործէ .
արժանիքի գնահատումը իր լայն տեղը պիտի
դրաւէ , աշխատութեան ոտակը պիտի փնտռուի
և այսպէսով վերջէն եկող գործաւորներուն կա-
ցութիւնը աւելի գերազանց պիտի ըլլայ քան իրենց
նախորդներու կացութիւնը : Առանց ասոր չպիտի
կրնայինք ըմբռնել Աստուծոյ թագաւորութեան
երկրի վրայ յառաջդիմականութիւնը :

Նոր կտակարանին մէջ յայտնի կերպով ըսուած

չէ թէ երկրի վրայ ինչ ձեւով պիտի կազմուի Աստուծոյ թագաւորութիւնը : Բայց երբ քրիստոնէական բարոյականի պատուէրները փեղերապէս կիրարկուին, և երբ մարդիկ իրենց անհատական բոլոր յարաբերութիւնները և ընկերութիւններ՝ իրենց ամբողջ կազմակերպութիւնները անոնց յարմարցնեն, այն ատեն յառաջ կուգայ ինքնին Աստուծոյ թագաւորութեան երկրի վրայ հաստատութեան ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԵՒԸ : Այս առթիւ երկու կէտերու մասին միայն բնագրական ցուցումներ արբուած են մեզի . 1. Աստուծոյ թագաւորութիւնը իր մէջ պիտի պարունակէ բոլոր մարդերը որոնք մէկ հօտ պիտի կազմեն . 2. Այդ հօտին միութիւնը պիտի կազմէ հասարակաց հաւատալիքը . այդ հօտը մէկ հովիւ պիտի ունենայ և ա՛ն պիտի ըլլայ նոյն ինքն Յիսուս Քրիստոս :

ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ

ՄԲԿ. Դ. 26-29. — Յիսուս կ'ըսէր . Այսպէս է Աստուծոյ թագաւորութիւնը որպէս թէ մարդ մը հողին մէջ սերմ ձգէ . ու քննայ և արթննայ տիւ և գիշեր . և սերմը բուսնի և մեծնայ, և ինքը չը գիտեր թէ ինչպէս . որովհետեւ հողը ինքնիրմէն պտուղ կուտայ . նախ խոտը, ետքը հասկը, անկէ ետեւ լեցուն ցորենը հասկին մէջ . — Եւ երբոր պտուղը հասուննայ, շուտ մը մանգաղը կը զրկէ, ինչու որ հունձքի ատենը հասած է :

ՂՈՒԿ. Ը. 11. Սերմը Աստուծոյ խօսքն է :

ՄԱՏԹ. ԺԳ. 31. 32. 33. — Ուրիշ առակ մըն ալ

խօսեցաւ անոնց և ըսաւ . Երկնքի թագաւորութիւնը մանկսոյ հատի նման է, որն որ մարդ մը առաւ և իր արտին մէջը ցանեց . — Որ ամէն սերմերէն պզտիկ է, բայց երբոր կ'աճի ամէն խոտերէն մեծ է, ու ծառ կ'ըլլայ, այնպէս որ երկնքի թագուհիները կուգան և անոր ճիւղերուն վրայ կը հանգչին :

Ուրիշ առակ մըն ալ ըսաւ անոնց . Երկնքի թագաւորութիւնը խմորի նման է, որն որ կնիկ մը առաւ, երեք գրիւ ալիւրի մէջ պահեց, մինչև որ ամէնն ալ խմորսեցաւ :

(Տես նաև ՂՈՒԿ. ԺԳ. 18-21) :

ՄԱՏԹ. Ի. 1-16. Երկնքի թագաւորութիւնը կը նմանի տանուէր մարդու մը, որ առտուն կանուխ ելաւ իր այգիին համար բանուորներ փնտուելու :

Բանուորներուն հետ օրական մէկ դահեկան սակարկեց, ու զանոնք զրկեց իր այգին :

Ժամը երեքին ատենները ելաւ, տեսաւ ուրիշները, որ շուկային մէջ պարապ կայներ էին :

Ըսաւ անոնց . Դուք ալ գացէք իմ այգիս, և ինչ որ արժան է կուտամ ձեզի :

Նորէն ժամը վեցին ու իննին ատենները ելաւ անակ ըրաւ . Ժամը տասըմէկին ատենները ելաւ, գտաւ ուրիշներ որ պարապ կայներ էին, և անոնց ըսաւ . Ինչո՞ւ հոս բոլոր օրը պարապ կայներ էք :

Ըօին իրեն . որովհետեւ մէկը մեզ վարձքով չըռնեց . անոնց ըսաւ . Դուք ալ այգին գացէք, և ինչ որ արժան է պիտի առնէք :

Երբոր իրիկունս եղաւ, այգիին աէրը իր անտախն ըսաւ . բանուորները կանչէ, և անոնց վարձքը տուր, վերջիններէն սկսելով մինչև առաջինները :

Ժամը տասըմէկին գացողները երբոր եկան, մէկ մէկ դահեկան առին :

Եւ առաջինները գալով, կը կարծէին թէ իրենք աւելի պիտի առնեն, բայց անոնք ալ մէկ մէկ դահեկան առին :

Երբոր առին, տանտիրոջը դէմ կը արտոնջէին ու կ'ըսէին թէ, այդ վերջինները մէկ ժամ միայն գործեցին և զանոնք հաւասար ըրիր մեզի, մենք որ օրուան ծանրութիւնը ու տաքութիւնը քաշեցինք :

Բայց անիկա պատասխան տուաւ անոնցմէ մէկուն և ըսաւ. ընկե՛ր, ես քեզ չեմ զրկեր, չէ՞ որ դուն իմ հետս մէկ դահեկանի սակարգեցիր. ա՛ն քուկդ ու դնա՛, կ'ուզեմ որ աս վերջինին ալ քեզի տուածիս պէս տամ : Միթէ իշխանութիւն չունի՞մ իմ բաներուս վրայ՝ ինչ որ ուզեմ ընելու. կամ թէ քու աչքդ չա՛ր է, որովհետեւ ես բարերար եմ :

Այսպէս յետինները առաջին պիտի ըլլան և առաջինները յետին :

ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԸ

ՅՈՎ. Ժ. 1-2. Ծշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի. ան որ ոչխարներու բակը դուռնէն չի մտներ հապա՛ ուրիշ տեղէ՛՝ անիկա գող է ու աւազակ. բայց ան որ դուռնէն կը մտնէ, անիկա ոչխարներուն հովիւն է :

Ժ. 7. Ծշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, ես եմ ոչխարներուն դուռը :

Ժ. 14. Ես եմ բարի հովիւը, կը ճանչնամ իմիններս և կը ճանչցուիմ իմիններէս :

Ժ. 16. Ուրիշ ոչխարներ ալ ունիմ, որոնք այս բակէն չեն, զանոնք ալ պէտք է որ բերեմ, և իմ ձայնիս պիտի լսեն և պիտի ըլլան մէկ հօտ և մէկ հովիւ :

ՄԻԿ. ԺԳ. 10. — Յիսուսի քաղաքորդներէն առաջ, պէտք է որ աւետարանը քարոզուի ամէն աղքերու :

Ա. ՏԻՄ. Բ. 1. — Ամէն բանէ առաջ, ձեզի կ'աղաչեմ աղօթք ընել, խնդրուածք, աղաչանք, գոհութիւն ամէն մարդու համար :

Բ. 3. 4. — Որովհետեւ այն է լաւն ու ընդունելին մեր Աստուծոյն, մեր Փրկչին — որ կ'ուզէ որ ամէն մարդիկ փրկուին, և դան ճշմարտութիւնը ճանչնալ :



ՆԱԽՈՐԴ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԷԱԿԱՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ ԿԸ ՀԱՍՏԱՏՈՒԻՆ

- I Հին օրէնքի սասուէրներ
- II Գասապարտուած մուրաբիւններ
- III Հին առաքինութիւններ. — Ողորմութիւն.

I

Քրիստոնէական կամ Աւետարանի քարոզութիւնը կ'ուզուէր իր ծագման օրերուն, Հրեայ ժողովուրդին և անոնց դրացիներուն որոնք Միջերկրականի երկիրները կը բնակէին : Այդ հին ժողովուրդները աւելորդ է ըսել թէ մշակութեան բարձրագոյն աստիճանին հասած էին : Այս ժողովուրդներուն ամենքն ալ, Հռովմէական պետութեան հպատակ, կրցած էին ապրիլ ու զարգանալ շնորհիւ այն բարոյական ուսուցումին, որ յարմարած էր իրենց ֆիզիքական և իմացական վիճակին : Եւ պէտք է խոստովանել, թէ այդ ժո-

ղովուրդները իրենց յաջողութիւնն ու մեծութիւնը իրենց պատշաճած այդ բարոյական գործնականացումին կը պարտին :

Այն ժամանակներուն , երբ Քրիստոնէութիւնը սկսաւ իր փրկարար դերը , երբեմն այնքան արդիւնաւոր եղող հին բարոյականին յառաջդիմական ուժը սպառած էր այլ եւս : Այդ հին բարոյականին սկզբունքները իրաւ է որ իրենց մէջ տակաւին ունէին իրենց վարած ժողովուրդները պահպանելու կարեւոր ուժը , բայց ալ անկարող եղած էին անոնց մէջ նորանոր յառաջդիմութիւններ ծնցնել : Այս պարագան կրնայ որոշ կերպով հաստատել պատմութիւնը Պարսկաստանի , Հնդկաստանի և Չինաստանի ժողովուրդներուն , որոնք ամբողջ դարեր Քրիստոնէութեան առջև փակեցին իրենց դուռները , և որոնց քաղաքակրթութիւնը նման էր Հրէից և իրենց դրացի ժողովուրդներուն քաղաքակրթութեանը : Այս պատճառաւ էր անշուշտ որ Քրիստոնէութեան երեւումին , Հռովմէական պետութեան մէջ անպայման կերպով վէճի տակ ձգուած էին այն հաւատալիքները՝ որոնք այդ բարոյականին հիմ կը ծառայէին : Շատերու համար այդ վարդապետութիւնները տեղի տուած էին սկեպտիկութեան , կամ զգայապաշտ եպիկուրեանութեան , և կամ անհիմն և անարժէք աւելորդապաշտութիւններու : Արդ , յառաջդիմութեան անհրաժեշտ պայմաններէն մէկն է չկորսնցնել անգամ մը ձեռք ձգուած

ները , որոնց վրայ փորագրուած ըլլան նախորդ զարգացումները : Այս պայմանին համաձայն , անհրաժեշտ էր որ նոր ուսուցումը — Քրիստոնէութիւնը — զօրացնէր հին բարոյականին միշտ արժէք ունեցող պատուէրները , և անոնց տար իրենց բովանդակ ուժն ու հեղինակութիւնը , և զանոնք կարող չինէր նոր յառաջդիմութիւններ ստեղծելու :

II

Յիսուս , իր քարոզութեան միջոցին իր աչքին առջև ունէր մասնաւորապէս Իսրայէլացիները : Ուրեմն իրեն համար , քարոզութեան պահուն , բաւական էր անոնց յիշեցնել Մովսէսն ու մարգարէները : Չմոռնանք , սակայն , թէ բարոյականի այդ միեւնոյն սկզբունքները , որոնք օրէնքէն և մարգարէներէն քարոզուած էին , տարբեր ձեւերով կը գտնուէին նաև բազմաստուածեան ժողովուրդներու մօտ , որոնց համար Ս. Պօղոս կ'ըսէ . « Օրէնքին գործքը իրենց սրտին մէջ գրուած կը յուցնեն իրենց խղճատանքին վկայութեամբը (Հռովմ. Բ. 15) : Եւ առաքեալները բարոյականի այս տեսակէտով ո՛ր և է խախտ չդրին իրենց նորագարձներուն մէջ : Այդ բարոյական ուսուցումը կը պարունակէր ինչ ինչ ընդհանուր պատուէրներ , որոնք ծանօթ էին ընդհանուր հին աշխարհին , և որոնց մէկ մասը Հրէաները Տասնաբանեային մէջ ամփոփած էին : Այդ ուսուցումներու երկրորդ մասը

կը կազմէր մօլութիւններու դատապարտութիւնը
և առաքինութիւններու ներքողը : Առաջինները
Աստուծմէ անարգուած և երկրորդները ներքո-
ղուած ամէն ժամանակ :

Մօլութիւնները ընդհանուր կերպով դատա-
պարտուած են Աւետարաններու և Առաքելական
Թուղթերու բազմաթիւ հատուածներուն մէջ, իբրև
մարմինի գործեր, որոնք հոգիի արգասիքներուն
կը հակառակին : Աւելորդ պիտի ըլլար այս պա-
տուէրներէն ամէնքն ալ յառաջ բերել. անոնցմէ
մէկը բաւական պիտի ըլլայ ամբողջ կերպով ներ-
կայացնելու անոնց ամբողջութեան իմաստը կամ
բովանդակութիւնը :

III

Հին առաքինութիւններու ուսուցումը ընդ-
հանրապէս կը շփոթուի նոր կտակարանին մէջ,
նոր առաքինութիւններու ուսուցումին հետ : Ուստի
անոնց մասին պիտի խօսինք, երբ կարգը դայ
քրիստոնէական առաքինութիւնները ներկայացնել :
Բացառութիւն մը պիտի ընենք, հոս, քանի մը
պատուիրաններու մասին միայն որոնք մասնաւոր
կարեւորութիւն մը ունէին Հրէաներուն համար,
և որոնք բացառիկ տեղ մը կը գրաւէին անոնց
մէջ : Այդ Հրէական առաքինութիւններն են .
1. Այրիներու օժանդակութիւն . 2. Ասպնջակա-
նութիւն . 3. Ողորմութիւն : Բարբերու օրըստօ-
րէական փոփոխութիւնը պատճառ եղաւ որ առա-

ջին երկուքը իրենց շահեկանութիւնը կորսնցնեն .
բայց ողորմութեան վերաբերած առաքինական
պատուէրները չպիտի դադրին հարկաւոր և պար-
տաւորէչ ըլլալէ, որչափ ատեն մարդկային ընկե-
րութեան մէջ անտեսական կարգն ու սարքը հա-
մաձայն չըլլայ քրիստոնէական արդարութեան, և
որչափ ատեն ողորմութեան կարօտ դժբախտներ
գտնուին : Ողորմութեան պատուէրներուն շատ
աւելի ուժ տուաւ Քրիստոս որչափ հին օրէնքը
տուած չէր անոր :

I

ՄՏԹ. ԻԲ. 36-40. — Վարդապետ, օրէնքին մէջ
օր պատուիրանը մեծ է : Յիսուս ըսաւ անոր. քու Տէր
Աստուածդ սիրես քու բոլոր սրտովդ, բոլոր անձովդ,
և քու բոլոր մտքովդ [1] Այս է առաջին պատուիրանը :
Երկրորդը ասոր նման է. քու ընկերդ քու անձիդ պէս
սիրես [2] : Այս երկու պատուէրներէն կախուած են բո-
լոր օրէնքն ու մարգարէները ([1] Տես Բ. օր. 2. 5.
[2] Ղեւտ. ԺԹ. 18) :

ՄՏԹ. Է. 12. — Ամէն ինչ որ կուղէք որ մարդիկ
ձեզի ընեն, դուք ալ անոնց այնպէս ըրէք, այս է օրէնքն
ու մարգարէները (ՏՈՎԲ. Դ. 16) Տես նաև ՄՐԿ. ԺԲ.
29-33 ՂՈՒԿ. 2. 31. Ժ. 25-28) :

ՄՐԿ. Ժ. 17-19. — Ինչ ընեմ որ յաւիտենական
կեանքը ժառանգեմ. Յիսուս ըսաւ. Պատուիրանները
գիտես, մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ դողնար, մի՛ սուտ
վկայեր, մի՛ զրկեր, պատուէ հայրդ ու մայրդ :

Տես նաև ՄՏԹ. ԺԹ 16-19 ՂՈՒԿ. ԺԸ 20.
ՀԻՈՎՄ. ԺԳ. 9 :

II

ԳՍՂ. Ե. 19-21.— Մարմինն գործերը յայտնի են, չնութիւն, պոռնկութիւն, պղծութիւն, գիճութիւն, կռապաշտութիւն, կախարդութիւն, թշնամութիւններ, երկպառակութիւններ, բաժանումներ, չար նայուածքներ, մարդասպանութիւններ, գինովութիւններ, անառակութիւններ և ինչ որ նման են ասոնց, որ հիմակուց ես ձեզի կը զրուցեմ, թէ ասանկ բաներ գործողները Աստուծոյ արքայութիւնը չպիտի ժառանգեն:

Տես նաև ՀՌՈՎՄ. Ա. 24-32. Բ. 14, 15. Ա. ԿՈՐՆԹ. Ե. 1. 2. 11. Զ. 18. ԵՓԵՍ. Դ 25, 26, 29, 31. ԿՈՂ. Գ. 5. 9 Ա. ՏԻՄ. Ա. 9. 10. Բ. ՏԻՄ. Գ. 2-5. ՅԱԿ. Գ. 5-8 Դ. 1. 3:

III

ՄՍՏ. ԻԳ. 14. Վայ ձեզի կեղծաւորներ, դպիրներ, ու Փարիսեցիներ, որ որբեւարիներուն տունը կուտէք, և մարդոց երեւնալու համար աղօթքը կ'երկարէք:

Ա. ՏԻՄ. Ե. 3. Պատուէ որբեւարիները, որոնք ճշմարտապէս որբեւարի են:

ՅԱԿ. Ա. 27 Աստուծոյ և Հօրը քով մաքուր և անարատ կրօնասիրութիւնն է, որբերուն և այրիներուն այցելել անոնց նեղութեան ատենը:

ՀՌՈՎՄ. ԺԲ. 13. Հիւրասիրութեան ետեւէ եղիք:
ԵԲԲ. ԺԳ. 2. Հիւրասիրութիւնը մի՛ մոռնաք:

Ա. ՊԵՏՐ. Գ. 9. Իրարու հիւրասիրութիւն ըրէք առանց տրանջալու:

ՂՈՒԿ. ԺԱ. 41.— Ողորմութիւն տուէք և ահա ամէն բան մաքուր կ'ըլլայ ձեզի:

ԳՈՐԾԳ. Ի. 35. Յիշեցէք Յիսուսի խօսքը որ ըսաւ. աւելի երանելի է տալը քան առնուլը:

ՂՈՒԿ. ԺԳ. 13-14. Երբոր հացկերոյթ ընես, աղքատներ, անկարներ, կաղեր ու կոյրեր հրաւիրէ ու երանելի պիտի ըլլաս, որովհետև անոնք չեն կրնար քեզի փոխարինել, և փոխարէնը արդարներուն յարութիւն առած ատենը պիտի տրուի քեզի:

ՄՏԹ. Զ. 2-4. Երբ ողորմութիւն ընես, առջեւէդ փող մի՛ զարներ, ինչպէս կ'ընեն կեղծաւորները ժողովարաններուն և փողոցներուն մէջ... Ճշմարիտ կըսեմ ձեզի թէ անոնք իրենց վարձքը առած կըլլան: Երբ ողորմութիւն կ'ընես, ձախ ձեռքդ թող չգիտնայ թէ ինչ կը գործէ աջ ձեռքդ, որ քու ողորմութիւնդ գաղտուկ ըլլայ, և քու Հայրդ, որ դաղտնին կը տեսնէ, քեզի յայտնապէս պիտի հատուցանէ:

ՄՍՐԿ. ԺԲ. 41-44. Յիսուս գանձանակին դիմացը նստած կը դիտէր թէ, ժողովուրդն ինչպէս դրամ կը ձգէ գանձանակին մէջ, և շատ մը հարուստներ շատ բան ձգեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ, և երկու լումայ ձգեց որ նազարակիտ մըն է: Այն ատեն աշակերտները կանչելով ըսաւ անոնց. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս աղքատ այրին ստակ ձգողներէն ամենէն աւելին ձգեց գանձանակը, որովհետև ամէնքը իրենց աւելցածէն ձգեցին, մինչդեռ ասիկա իր չքաւորութենէն ունեցածին ամէնը ձգեց, որ իր բոլոր ապրուստն էր:

(Տես նաև Ղուկ. ԻԱ. 1-4. Հռովմ. ԺԲ. 8):

Պ.

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿԱՆԻ ԱԻԵԼԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ

I

ՆՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆԵ

Յիսուս Աստուծոյ թագաւորութիւնը ուզեց հիմնել աշխարհի մէջ: Բարոյական պատուիրաններու գոյութիւնը անհրաժեշտ էր այդպիսի նըպատակ մը իրագործելու համար: Հին օրէնքին պատուէրները կային մէջ տեղ. բայց անոնք անզօր էին այդ թագաւորութիւնը կարենալ հաստատելու համար. քանի որ այս թագաւորութիւնը բարոյական նոր յառաջդիմութիւն մը պիտի ըլլար. և հին օրէնքը ինչպէս ըսինք նոր յառաջդիմութիւններ ծնցնելու կարող ուժը չունէր այլ եւս: Ասկէ առաջ կուգար բոլորովին նոր պատուիրաններու անհրաժեշտ պէտքը: Այդ նոր պատուիրանները որոնք հին օրէնքը պիտի ամբողջացնէին, կոչում պիտի ունենային բարեփոխելու մարդկութեան ապականուած սիրտը, որպէս զի կարելի ըլլար անհասնելու բարեփոխումովը մարդկային ընկերական կարգ ու սարքն ալ բարեփոխել: Մաքուր սիրտերու անմիջական արդիւնքը պիտի ըլլար

մաքուր ընկերականութիւնը: Այս նպատակով Յիսուսի կողմէն հաստատուած նոր ուսուցումներէն ոմանք բացարձակ ընդհանրականութիւն մը ունին, իսկ միւսները՝ ասոնց հետեւութիւններն են միայն, և որոնց ամբողջութեան մէջ ամփոփուած են էական և անհրաժեշտ պայմանները Աստուծոյ թագաւորութեան իրականացումին:

Այդ նոր ուսուցումներու առաջինն է սիրոյ մեծ պատուէրը կամ մարդասիրութիւնը (charité): Պէտք է ըսել, թէ սիրոյ այս օրէնքը միմիայն քրիստոնէական բարոյականին յատուկ է: Հին օրէնքին ինչ ինչ տրամադրութիւնները սէրը պարտաւորիչ կ'ընէին միմիայն ընկերին կամ քաւրեկաւրին համար: Յիսուս չափազանցօրէն կը լայնցնէ սիրոյ շրջանակը, և իր նոր ուսուցումով մեղմէ կը պահանջէ որ ոչ միայն սիրենք մեր ընկերը, մեր անձին պէս, այլ և ուրիշներն ալ սիրենք այնպէս, ինչպէս ինքը մեզ սիրեց: Քրիստոնէական սէրը սիրեղբերական եղբայրութիւն մը կը ստեղծէ մարդկութեան համար, և այդ պայմաններուն մէջ ապրող մարդկութեան իւրաքանչիւր անդամէն կը պահանջէ որ պատրաստ ըլլան ամբողջովին զոհուելու իրենց եղբայրներուն համար, կամ Աւետարանիչին ըսածին պէս, իրենց անձերը իրենց եղբայրներուն համար տալու: Այս սկզբունքով ամենէն աւելի յարձակում կը կրէ եասիրութիւնը, որ ժխտումն է նմաններու հանդէպ պարտական եղած մեր սիրոյն, որ մեզի ընել կուտայ ամէն

ինչ որ մեր եւր պիտի արգիլէր ընել: Այդ տիեզերական մարդասիրութեան աւետարանական սկզբունքին մէջ մարդերու խաիր դոյութիւնն չունի այլ եւս, այնպէս որ այդ նոր ուսուցումին հետեւանքով ոչ միայն պարտաւոր պիտի ըլլանք սիրել մեր բարեկամները, այլ և պարտական պիտի ըլլանք սիրել զանոնք, որ մեզի չարիք կը հասցընեն, մեզի դէմ անիրաւութիւններ կ'ընեն, և որոնք մէկ խօսքով մեր ԹՇՆԱՄԻՆՆԵՐՆ են: Այս հանգամանքով մեզի աւանդուած սիրոյ պատուէրը, բացարձակ պատուէր մըն է, և յատուկ է Աւետարանի:

ՅՈՎՀ. ԺԳ. 34-35. Նոր պատուիրան մը կուտամ ձեզի, որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզի սիրեցի. — ասով ամէնը պիտի դիմանան, թէ դուք իմ աշակերտներս էք, թէ որ իրարու վրայ սէր ունենաք:

ՅՈՎՀ. ԺԵ. 12. 13. Այս է իմ պատուէրս, որ մէկզմէկ սիրէք, ինչպէս որ ես ձեզ սիրեցի. — ասկէ աւելի մեծ սէր մէկը չի կրնար ունենալ, որ մէկը իր կեանքը բարեկամներու համար դնէ:

Ա. ՅՈՎՀ. Գ. 16. Ասով գիտցանք Քրիստոսի սէրը, որ անիկա իր կեանքը մեզի համար դրաւ, մենք ալ պարտաւոր ենք մեր կեանքը մեր եղբայրներուն համար դնել:

ՅՈՎՀ. Ժ. 11. Ես եմ բարի հովիւր, բարի հովիւր իր կեանքը ոչխարներուն համար կը դնէ:

ՄՏԹ. Ե. 38-44. Լսեր էք, որ ըսուեցաւ. աչքի տեղ աչք և ակռայի տեղ ակռայ: — Բայց ես ձեզի կ'ըսեմ չարին հակառակ մի՛ կենաք, հապա թէ որ մէկը ապտակ մը զարնէ աջ ծնոտիդ միւսն ալ դարձուր

անոր (!): — Թէ որ մէկը կ'ուզէ քեզի դէմ դատ վարել և քու շապիկդ առնուլ, թող տուր որ քու վերարկուդ ալ առնու: Ո՛վ որ քեզ պահակ բռնէ, ու մղոն մը ճամբայ քշէ, երկուք ալ գնա՛ անոր հետ: — Բեզմէ ուզողին տուր, և երես մի՛ դարձներ անկէ, որ քեզմէ փոխ առնուլ կ'ուզէ: Լսեր էք, որ ըսուեցաւ, ընկերդ սիրես, ու թշնամիդ ատես: Բայց ես կըսեմ ձեզի. սիրեցէք ձեր թշնամիները, բարի ըրէք ձեզ ատողներուն, և աղօթք ըրէք անոնց համար, որոնք ձեզ կը չարչարեն ու կը հաւաճեն: — 48. Կատարեալ եղիք, ինչպէս ձեր երկնաւոր հայրը կատարեալ է:

Ա. ԿՈՐՆԹ. ԺԳ, 1-8. Թէ որ մարդոց և հրեշտակներուն լեզուները խօսիմ և սէր չ'ունենամ, ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ հնչուն ծնծղաներու պէս: Եւ եթէ մարդարէութիւն ունենամ, և հասկնամ ամէն խորհուրդ ու գիտութիւն, և թէ որ ունենամ ամբողջ հաւատքը մինչև լեռները տեղափոխելու, ու սէր չունենամ, ոչինչ եմ: Եւ եթէ իմ ամբողջ ստացուածքս աղքատներուն կերցնեմ, և իմ մարմինս այրուելու տամ, և սէր չունենամ օգուտ մը չեմ ունենար: Սէրը երկայնամիտ է, քաղցր է, սէրը չի նախանձիր, սէրը չի գոռոզնար, չի հպարտանար, — Սէրը անվայել վարմունք չունենար, իրենը չի փնտռեր, բարկութեան չի գրգռուիր, չարութիւն չի խորհիր, անիրաւութեան վրայ չի խնդար, այլ ճշմարտութեան կը խնդակցի. — Ամէն բանի կը զի-

(!) Որպէս զի այս կտորը ԹիբրիմացուՍեան տեղի չտայ, հոս կը դնենք աստուածաբան հեղինակի մը բացատրութիւնը, որ ասոր կ'ակնարկէ. «Յեր մէկը քեզի անիրաւութիւն կ'ընէ, կորով ունեցիր և քու հաստատամտութեամբդ վերջ դիր անիրաւութեան: Թշնամանքը դատապարտէ, բայց ներէ՛ Թշնամանողին. և թէ տակաւին յարատեւէ, զանիկա զոնէ քու բարութեամբդ ամոր զլսուն վրայ կրակի կայծեր զիղելով» (Հռովմ. ԺԲ. 19-20):

ջանի, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը համբերէ: Սէրը բնաւ չիյնար, բայց եթէ մարգարէութիւններ ըլլան, պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի դադրին, եթէ գիտութիւն պիտի խափանի: —13— Հիմա կը մնայ հաւատք, յոյս, սէր, այս երեքը, ու ասոնց մեծագոյնը սէրն է:

Ա. ՅՈՎՀ. Դ. 18. Սիրոյ մէջ վախ չկայ. կատարեալ սէրը վախը մէկդի կը թողու. որովհետեւ վախը տանջանքի ենթակայ է, ուստի ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ:

ԳԱՂ. Զ. 2. Իրարքու նեղութիւնները կրեցէք ու այնպէս կատարեցէք Քրիստոսի օրէնքը:

(Տես նաեւ ՂՈՒԿ. Զ. 27-36. ԵՓԵՍ. Ե. 1. 2. ԿՈՂ. Գ. 14. Ա. ՏԻՄ. Ա. 5. Ա. ՊԵՏ. Ա. 22. Ա. ՅՈՎՀ. Բ. 8-10. Գ. 11-15. 17. 23. Դ. 8-11. 20-21:

II

ՆԵՐՅԷԼ ԹԵՆԱՄԻՆԵՐՈՒՆ

Սիրոյ օրէնքին կիրարկութիւնը իր զանազան երեւոյթներուն մէջ տարբեր վիճակներու կ'առաջնորդէ մարդս, և ինքն ալ իր կողմէն տարբեր անուններ կ'առնու: Տառապողներուն հանդէպ դուժի և օժանդակութեան առաջնորդող սէրը, կարեկցոյթիւն կը կոչուի. բարերարներու հանդէպ զմեզ շնորհակալութեան յորդորող սէրը կը կոչուի երախտագիտութիւն. իսկ թշնամիներու հանդէպ ցոյց տրուելիք սէրը, իր բարոյական հետեւութիւնով, կ'ըլլայ ներողութիւն:

Երբ Աւետարանը, իր հիմնած նոր օրէնքով

—Սէր— մեղի կը հրամայէ սիրել ո՛չ միայն մեր ընկերը, մեր բարեկամը, այլ և մեր թշնամին, ան մեղի տուած կ'ըլլայ իբրեւ երկրորդ պատուէր մը, որ անընդմիջական հետեւանքն է առաջինին, և որ է ներել եղած թշնամանքներուն: Այս պատուէրը, միմիայն քրիստոնէական բարոյականին կը պատկանի, հնութիւնը այս սկզբունքին չկրցաւ բարձրանալ բնաւ, որովհետեւ վրիժառութիւնը հին օրէնքին խարխիւսը կը կազմէր: « Ակն ընդական »ը ամենէն յատկանշող կողմը կը մնայ հին բարոյականին, որուն մէջ վրիժառութիւնը պարտք մըն է, ու միեւնոյն ժամանակ պատուաբեր դործ մը: Եւ այդ զգացումը այնքան խորունկ արմատ ձգած էր հին բարոյականին մէջ, որ անով ապրող մարդիկ իրենց նկարագիրովը չազուած Աստուած մը ուղեցին տեսնել երկինքի մէջ, « Վրէժխնդիր և նախանձուտ աէր » մը:

Նոր օրէնքը հինին վրէժխնդրութիւնը կը ջնջէ, և անոր տեղ կը դնէ ներողութեան սկզբունքը, որ հիներուն համար սկարոպիւն կը նշանակէր: Թշնամանքը անիրաւութիւն մըն է. և Աւետարանը այդ անիրաւութեան ջնջումին կը ձգտի: Ներողութիւնը պիտի ծառայէ, ո՛չ թէ քաջալերելու անիրաւութիւնները, այլ զանոնք բառնալու. մինչդեռ վրէժխնդրութիւնը անիրաւութիւնը աւելցնելու կը ծառայէ միայն. որովհետեւ « ով որ չարիքի փոխարէն չարիք կը հատուցանէ, ուրիշին չարիքը կ'աւելոյնէ առանց իրենինէն բան մը պակ-

սեցնելու, կամ մանաւանդ անիկա ընկերին չարիքը կ'աւելցնէ, և կ'ըլլայ նոր չարիք մը աւելի դէշ քան զայն, զոր ինքը ընդունած էր » : Եւ արդէն եթէ քիչ մը լաւ խորհինք, պիտի տեսնենք, որ թշնամիին դէմ վրէժխնդիր ըլլալով ո՛չ միայն զինքը պիտի դրդենք աւելի եւս հեռանալու արդարութեան սկզբունքէն, այլ և մենք հաւասարած ու նմանած պիտի ըլլանք անոր : Ընդհակառակը, սիրելով ո՛չ միայն զինքը զինամթափ ըրած պիտի ըլլանք, այլ և միեւնոյն ժամանակ ցոյց տուած պիտի ըլլանք անոր մեր մեծութիւնը, և արդարութեան համար մեր ունեցած պատկառանքը :

Ոմանք, ինչպէս Թողթոյի, ներողութեան օրէնքը շատ հեռուները տարին, և անիրաւութիւններու դէմ օրինաւոր ամէն պաշտպանութիւն, որ նուիրական է, չարիք մը նկատեցին : Աւետարանին ներման օրէնքը, այսպէս չարաչար դործածողները, անդգալաբար և թաւախաբար քաշալերած կ'ըլլան անիրաւութիւնը, եւ վնասած Աւետարանի ոգիին :

Որովհետեւ թշնամանքի դէմ ներումը բարոյական գործերէն ամենէն ծանրը և ամենէն դժուարինն է, տակաւին այսօր, կան անհատներ, ինչպէս նաեւ ժողովուրդներ, որոնք հին ճամբէն կը քալեն, և հին բարոյականով կը վարուին թըշնամիներու հանդէպ : Այնպէս որ ամենամեծ զստութիւններու պատրաստ անհատներ ու ժողո-

վուրդներ, չեն կրնար իրենց սրտէն արմատախիլ ընել այն ռիսկալուծութիւնը՝ զոր խորունկ ու ծանր թշնամանք մը դրած է իրենց մէջ :

ՄՏԹ. Զ. 12-14-15.— (Հայր մեր). Մեզի ներէ մեր պարտքերը, ինչպէս որ մենք կը ներենք մեր պարտականներուն, որովհետեւ եթէ դուք մարդոց ներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ.— Բայց եթէ դուք ներէք մարդոց իրենց յանցանքները, ձեր Հայրն ալ ձեզի չի ներէր ձեր յանցանքները :

ՄՏԹ. ԺԸ. 15-17. 21. 22.— Եթէ եղբայրդ քեզի դէմ մեղանչէ, դնա՛ յանդիմանէ զանիկա, երբ երկուքդ առանձին էք. թէ որ քեզ մտիկ ընէ, չահեցար եղբայրդ :— Իսկ եթէ մտիկ չընէ, հետդ ուրիշ մը կամ երկուք ալ ա՛ռ, որ երկու կամ երեք վկաներուց բերնով ամէն բան հաստատուի : Եւ եթէ անոնց ալ մտիկ չընէ, հեթանոսի ու մաքսաւորի պէս թող ըլլայ քեզի : Պետոս ըսաւ (Յիսուսին), Տէ՛ր, քանի՞ անգամ ներեմ եղբորս, երբ անիկա ինձի դէմ մեղանչէ, մինչև եօթն անգամ : Յիսուս ըսաւ անոր. քեզի չեմ ըսեր թէ մինչև եօթն անգամ, այլ մինչև եօթանասուն անգամ եօթն :
ՂՈՒԿ. Զ. 36. Գթած եղիք, ինչպէս ձեր Հայրն ալ գթած է :

ՄՐԿ. ԺԱ. 25. Երբոր աղօթքի կայնիք, ներեցէք եթէ մէկուն դէմ բան մը ունիք, որպէս զի ձեր Հայրն ալ, որ երկիրքն է, ձեզի ներէ ձեր յանցանքները :

ՀՈՌՎՄ. ԺԲ. 17.— Չարութեան փոխարէն մէկուն չարութիւն մի՛ հատուցանէք :

Տես նաև ՄՏԹ. ԺԸ. 23-35. ՄՐԿ. ԺԱ. 26. ՂՈՒԿ. ԺԵ. 3-4. ՀՈՌՎՄ. ԺԲ. 19-21. Ա. ՊԵՏ. Գ. 9 :

III

ՔՐԻՍՏՈՆԷՍԱԿԱՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիրոյ և ներողութեան պատուէրները գործադրելով, մենք ի յայտ բերած կ'ըլլանք քրիստոնէական առաքինութիւններու շարք մը, որոնք առաջիններուն անմիջական արդիւնքն ըլլալով հանդերձ, անոնց անուղղակի պատճառներն են միանգամայն : Մարդկային մտածումներն ու գործերը գլխաւորաբար երկու հանգամանքով կը ներկայանան մեզի, անոնք կամ չար են և կամ բարի : Չար միտումներն ու գործերը կը կոչուին յնդուքիւն (vice) . իսկ բարիները՝ առաջինուքիւն (vertus) : Քրիստոնէութեան նպատակն է չարութիւնները արմատախիլ ընել մարդկութեան մէջէն, միութիւնը դատապարտելով և առաքինութիւնը քաջալերելով : Որովհետեւ այս էր միակ միջոցը հիմնական կերպով կարենալ Աստուծոյ քազառորութիւնը հաստատելու :

Առաքինութիւններու քարոզութիւնը նոր չէ բոլորովին : Հին օրէնքը իր մասնաւոր բաժինը ունի անոր մէջ : Քրիստոնէութիւնը, սակայն, մեծագոյն գործը կատարած եղաւ ճշգրտելով առաքինութիւններու սահմանն ու բնոյթը, լայնելով անոնց հին շրջանակը և դտելով զանոնք այն անձնահամար արամագրութիւններէն, որոնք՝ բնականօրէն՝ այլ եւս տեղի պիտի տային սիրոյ և զոհո-

ղութեան սգիին առջև : Քրիստոնէական այդ առաքինութիւններու գեղեցիկ շղթան կը կազմեն արդարութեան, համակրանքի և ողորմածութեան զգացումները, սրտի պարզութիւնը, հեղութիւնը, խաղաղասիրութիւնը, խոնարհութիւնը, ողջախոհութիւնը, պարկեշտութիւնը, անկեղծութիւնը և բարեգործութիւնը : Գրեթէ ասոնք են, որոնք՝ իրենց ստորաբաժանումներովը՝ իրենց մէջ կը բուսնան քրիստոնէական առաքինութիւններու ամբողջ շարքը կամ ԱՌԱՔԻՆՈՒԹԻՒՆԸ :

Որովհետեւ մարդիկ կրքերու մասնաւոր տրամադրութիւնով մը անձնատիրութեան գոհացում տալու համար պատրաստ կը զգան ինքզինքնին ՚ի հարկին փնասել ուրիշին, արդարութիւնը իրբեւ հիմ դրաւ քրիստոնէական առաքինութիւններուն : Այդ ոգին է որ մարդը պիտի շինէ ողորմած, հեղ և խաղաղասէր, այն իմաստով, որով Քրիստոս խաղաղութիւնը ուղեց մատնանշել մարդերուն (Յովհ. ԺԴ. 27) : Բայ աստի արդար մարդն է, որ կրնայ համակրել, խոնարհիլ, ողջախոհիլ, պարկեշտ ու անկեղծ ըլլալ միանգամայն :

Առաքինութիւնը իրբեւ հիմն քրիստոնէական կեանքի, անշուշտ իր դժուարութիւնները ունի իր գործնականին մէջ : Նուազ ջանք և յարատեւութիւն չի պահանջեր անիկա, մեր կեանքին մէջ կարենալ իր տեղը բռնելու համար : Անոր համար է որ ըսուած է թէ « առաքինութիւնը կռիւի վիճակ մըն է, անոր կարենալ հասնելու համար մարդ-

միշտ կռիւ մը պիտի ունենայ իր անձին դէմ : »

Որչափ ալ դժուարին ըլլայ, սակայն, առաքինի ըլլալը, քրիստոնէական ըմբռնումով անհրաժեշտ է, որ առէն մարդ առաքինի ըլլայ : « Առաքինութիւնը հարստութեան, զօրութեան կամ փառքի պէս, առանձնաշնորհով կամ բացառութեան գործ մը չէ, անիկա կարգաւորութեան (ordre) տիրապետութիւնն է այն հոգիին մէջ, որ զանի կ'ուղէ. անիկա ինքնաբեր արդասիրն է սիրոյն, որ մեր բնութեան հասարակաց հիմն է, և թէ աղքատին հիւղակը նոյնչափ բաց ապաստանարան մըն է առաքինութեան համար, որչափ թագաւորներուն պալատը : »

Հոս յառաջ պիտի բերենք այն բնագիւրները միայն, որոնք առաքինութիւնը իր ընդհանրակառնութեան մէջ միայն կ'որակեն : Եւ ուրիշ գլուխի մը պիտի վերապահենք ամէն անոնք, որոնք անհատներու իրարու հետ ունեցած յարաբերութիւններուն կը վերաբերին :

ՄՏԹ. Ե. 3-9. — Երանի հոգիով աղքատներուն, որովհետեւ անոնցն է երկնքի թագաւորութիւնը : Երանի սգաւորներուն, որովհետեւ անոնք պիտի մխիթարուին : Երանի հեղերուն, որովհետեւ անոնք պիտի ժառանգեն երկիրը : Երանի անոնց, որոնք անօթի և ծարաւ են արդարութեան, որովհետեւ անոնք պիտի յագենան : Երանի ողորմածներուն, որովհետեւ անոնք ողորմութիւն պիտի գտնեն : Երանի անոնց, որոնք սրտով մաքուր են, որովհետեւ անոնք պիտի տեսնեն զԱստուած : Երանի խաղա-

ղարաններուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիները պիտի կոչուին :

ՄՏԹ. ԻԵ. 34-36. 40. — Այն ատեն, թագաւորը պիտի ըսէ իր աջակողմը եղողներուն. Եկէք իմ Հօրս օրհնածները, ժառանգեցէք այն թագաւորութիւնը որ աշխարհիս սկիզբէն ձեզի համար պատրաստուած է : Որովհետեւ անօթեցայ և ինծի ուտելիք տուիք, ծարաւեցայ և ինծի խմցուցիք. օտարական էի և զիս ներս առիք : — Մերկ էի ու զիս հագուեցուցիք. հիւանդ էի ու եկաք զիս տեսնել. բանտին մէջն էի ու ինծի եկաք : — Ըշմարիտ կ'ըսեմ ձեզի, որովհետեւ այս իմ եղբայրներուս ամենէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք :

ՂՈՒԿ. ԺԸ. 9-14. — Յիսուս այս առակը ըսաւ. երկու մարդ ազօթելու համար տաճարը ելան, մէկը փարիսեցի մըն էր ու միւսը մաքսաւոր : — Փարիսեցին կանգնած այսպէս կ'աղօթէր. Ո՛վ Աստուած, շնորհակալ եմ քեզմէ որ ուրիշ մարդոց պէս չեմ յափշտակող, անիրաւ, շնացող, և կամ այս մաքսաւորին պէս : — Շարաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, և բոլոր ստացուածքիս տասանորդը կուտամ : Մաքսաւորը հեռուն կանգնած, չէր համարձակեր անգամ աչքը երկինք վերցնել, ու իր կուրծքը ձեծելով կ'ըսէր. Աստուած, ողորմէ ինծի, մեղաւորիս : — Ձեզի կ'ըսեմ թէ անիկա աւելի արդարացած իր տունը իջաւ քան թէ միւսը, որովհետեւ ով որ իր անձը կը բարձրացնէ, պիտի խոնարհի, և ով որ իր անձը խոնարհեցընէ, պիտի բարձրանայ :

ՅՈՎՀ. ԺԳ. 5. 12-15. — Յիսուս կոնքին մէջ ջուր լեցուց ու սկսաւ աշակերտներուն ոտքերը լուալ : — Եւ երբ անոնց ոտքերը լուաց, ըսաւ անոնց. Գիտէ՞ք, ի՞նչ բրի ձեզի : — Դուք զիս վարդապետ ու տէր կը կոչէք և աղէկ կ'ըսէք, որովհետեւ այնպէս եմ. արդ, թէ որ ես տէրս ու վարդապետս, ձեր ոտքերը լուացի, պէտք է որ դուք ալ մէկմէկու ոտքերը լուաք : — Որովհետեւ

ձեզի օրինակ մը տուի, որ ինչպէս ես ձեզի ըրի, դուք ալ ընէք:

ԳԱՂ. Ե. 16. 22. 23.— Հոգիով գացէք, և մարմինն ցանկութիւնը պիտի չկատարէք: — Հոգիին պտուղները ասոնք են. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն:

ԿՈՂ. Գ. 12.— Աստուծոյ ընտրեալ սուրբերու և սիրելիներու պէս վրանիդ հագէք գութը, ողորմութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեղութիւնը, երկայնամտութիւնը:

ՓԻԼԻՊ. Բ. 3. — Բան մը մի ընէք զգրգռութիւնով կամ սնապարծութիւնով, այլ խոնարհութիւնով մէկզմէկ ձեր անձէն լաւ սեպելով:

Ա. ՊԵՏՐ. Ե. 5.— Ամէնքդ իրարու հնազանդելով, խոնարհութիւն հագէք, որովհետեւ Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ և խոնարհներուն շնորհ կուտայ:

ՀՌՈՎՄ. ԺԲ. 9. 12. 15. — Թող ձեր սէրը անկեղծ ըլլայ. չարէն զզուեցէք, բարիին յարեցէք: — Յուսով ուրախ եղիք, նեղութեան մէջ համբերեցէք: — Խընդացողներուն հետ խնդացէք, լացողներուն հետ լացէք:

ԵԲԲ. ԺԳ. 5.— Բարքերնիդ արծաթասէր չըլլայ, ձեր ունեցածովը բաւականացէք:

ԵՓԵՍ. Դ. 26.— Երբ բարկանաք, մեղք մի գործէք, արևը ձեր բարկութեան վրայ թող մարը չմանէ:

ՀՌՈՎՄ. ԺԳ. 14. — Մարմնոյ խնամք մի՛ տանիք ցանկութիւններու համար:

Տես նաև ԴՈՒԿ. Զ. 20-21. Թ. 46-48. ԺԴ. 7-11. — ՀՌՈՎՄ. ԺԲ. 3. Ա. ՏԻՄ. Զ. 11.— Բ. ՊԵՏ. Ա. 5-7:

IV

ԳՈՐԾԵՐՈՒ ԱՆՆՈՒԹԵՏՈՒԹԻՒՆԸ

Բարոյական օրէնքները իրենց սկզբունքէն շատ բան կը տուժեն, եթէ մարդիկ գործնական հրահանգութիւնով մը ցոյց չտան անոնց արդիւնքը: Ծառը կը պտուղէն ճանչնալու սկզբունքը պէտք է ճշմարտուի հաւատքի ու բարոյականի խնդիրներու մէջ, եթէ չենք ուզեր որ կեղծաւոր հաւատացեալներ և երեւոյթով միայն պարկեշտներ ըլլանք: Քրիստոնէութիւնը իր գերազանց բարոյականովը շատ աւելի իրաւունք ունի արդիւնքի սպասելու, և այդ արդիւնքը մեր գործերով միայն պիտի յայտնուի: Առանց գործքի բարոյական մը գիրքերու բարոյական մը կրնայ ըլլալ միայն, ու չի կրնար իր նպատակին ծառայել:

Նոր Կտակարանը այդ տեսակէտով ամենէն խստասպահանջը եղած է: Նոր օրէնքին առջև բաւական չէ միայն բերնով ընդունիլ անոր բարոյական պատուիրանները, բաւական չէ անկեղծօրէն հաւատալ անոնց ճշմարտութեանը և հեղինակութեանը Անոր՝ որ զանոնք ստովեցուց, այլ ամէն բանէ առաջ պէտք է գործադրել զանոնք, քանի որ մեր հաւատքին և մեր յարգանքին իբր միակ ապացոյց մեր գործերը պիտի կրնանք մէջտեղ դնել: Քրիստոնէութիւնը կեանք մըն է ամենէն առաջ, որուն մշտատեւ վաւարանն է Քրիստոս . . .

մարդկային բովանդակ գոյութեան նախաակն է
գործը, այնպէս որ երբ մեզի կը հրամայուի կա-
նոնաւորել մեր խորհուրդները, պատճառը այն է
որ լաւ գործելու առաջին պայմանն է այն :

Գործերու անհրաժեշտութիւնը այնքան կարե-
ւոր և անհրաժեշտ նկատուած է բարոյական
օրէնքի հիմնադիրներուն համար, որ նոր կաակա-
րանը պէտք չտեսներ անոր մասին շեշտել յաճախ :
Բայց հոս ու հոն տեսնուած պատուէրները՝ թուով
ցանցաւ՝ այնքան շեշտուած հանգամանքով մը կը
ներկայանան մեզի, որ ստիպուած ենք տեղ տալ
« Քրիստոնէական Բարոյական »ին մէջ, իբրև այդ-
բարոյականին խարխալը կազմող պատուիրան :
Գործքերով ապայուցուած հաւատքը, և գործքե-
րով ցոյց տրուած բարոյականը քրիստոնէական
տիեզերական եղբայրութեան գերազանց ցուցա-
կութիւնը պիտի ըլլայ, քանի որ արտաքին երե-
ւոյթներէ բոլորովին հեռի, Քրիստոնէութիւնը
իրական նորոգութեան մը ատաղձը կը բերէ մեզի :

ՄՏԹ. է. 21. 24. 26. — Ոչ թէ ան որ ինծի Տէ՛ր,
Տէ՛ր, կ'ըսէ պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը,
այլ ան, որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ : —
Արդ, ով որ իմ այս խօսքերս կը լսէ ու կը կատարէ
զանոնք, զանիկա պիտի նմանցնեմ իմաստուն մարդուն,
որ իր տունը վէմի վրայ շինեց : — Եւ ով որ այս իմ
խօսքերս կը լսէ ու չի կատարեր, կը նմանի անխելք
մարդուն, որ իր տունը աւազի վրայ շինեց :

ՅՈՎ. Ժ. 17. — Եթէ դուք այս բաները գի-

Ա. ՅՈՎ. Գ. 18. — Որդեակներս, չէ թէ խօս-
քով ու լեզուով սիրենք, այլ գործքով ու ճշմարտու-
թիւնով :

Ա. ԿՈՐ. Թ. Գ. 20. — Աստուծոյ թագաւորութիւնը
ոչ թէ խօսքով է, այլ զօրութիւնով :

ՅԱԿ. 4. 23-25. — Եթէ մէկը միայն լսող ըլլայ
խօսքին, ու կատարող չըլլայ, կը նմանի այն մարդուն,
որ աչքերը հայելին յառած, իր բնական դէմքը կը
դիտէ. — Ինչու որ դիտելով տեսաւ ինքզինքը ու ան-
ցաւ զնաց, և թէ չուտ մը մոռցաւ թէ ինչպէս մէկն
էր ինքը : — Բայց անոր ազատութեան կատարեալ օրէն-
քին աչք անկելով կը նայի, և անոր մէջը կը կենայ,
անիկա լսող ու մոռցող չըլլալով, այլ գործը կատարող,
երեւելի պիտի ըլլայ իր կատարելուն մէջ :

ՅԱԿ. Բ. 14. 17. 26. — Ի՞նչ օգուտ, եղբայրներս,
եթէ մէկը ըսէ թէ հաւատք ունի, ու գործք չունենայ,
միթէ հաւատքը կրնայ փրկել զանիկա. ու թէ որ եղբայր
մը կամ քոյր մը մերկ ըլլայ, կամ օրուան կերակուրին
կարօտ, ու ձեզմէ մէկը անոնց ըսէ, գացէք խաղաղու-
թեամբ, տաքցէք ու կշտացէք, և մարմինն պէտք
եղածները անոնց չիտանք, ի՞նչ օգուտ է : Ասանկ ալ
հաւատքը, եթէ գործք չունենայ, ինքնին մեռած է :
Որովհետեւ ինչպէս մարմինը առանց հոգիի մեռած է,
այնպէս ալ առանց գործքի հաւատքը մեռած է :

(Տես նաև ՏԻՏ. Գ. 8. 14.)

Ե.

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական բարոյականի ուսուցումը աշխարհի մէջ իրագործեց այն տեսակ յառաջդիմութիւն մը, որ՝ ընկերական տեսակէտով՝ Քրիստոնեայ ժողովուրդներուն բոլորովին ինքնուրոյն դիրք մը կուտայ հանդէպ հին ընկերութեան կամ սոյն ժողովուրդներուն, որոնք ցարգ Քրիստոնէութենէն դուրս ապրած են առաւել կամ նուազ համեմատութեամբ: Այդ յառաջդիմութիւնը իրագործուած է, առանց սակայն իր կատարելութեան ամբողջական ծրագիրին հասնելու, զգացումի և տրամաբանութեան յամրուանքնդհատ աշխատութիւնով մը: Մտազարային ու քաղաքական յարաբերութիւններու մէջ եթէ ոչ բոլորովին գործնապէս, դէթ սկզբունքով ջնջուած են հին կազմակերպութիւններու ծնցուցած անհատական առախճանաւորումներն ու քաղաքերը, և Քրիստոնէութեան մէջ ամէնքն ալ միեւնոյն անունով քաղաքայիներ են: Ամէնքն ալ՝ առանց բացառութեան՝ միեւնոյն պարտականութիւնները ունին, և միեւնոյն իրաւունքները կը վայելեն ամէնքն ալ: Ընկերական այդ հաւասարութեան մէջ անոնցմէ իւրաքանչիւրին ազատութիւնը քմահաճոյքի բռնագատումէն բոլորովին զերծ, սոյն խոչնդոտներուն

միայն կը հանդիարին, որոնք ՚ի հարկէ երեւան կուգան հաւաքական շահուն և անհատական իրաւունքներու անվթար պահպանումի ատեն: Քրիստոնէական բարոյականով առաջնորդուած ընկերութիւններու մէջ անհատներէն իւրաքանչիւրը առաւել կամ նուազ չափով կը մասնակցի հասարակաց գործին և իր որոշ բաժինը ունի հոն: Քրիստոնեաներու կառավարական իշխանութիւնը համեմատաբար արդար սահմաններով գծուած է: Այդ բարոյականի շնորհիւ ազգերը իրարու փոխադարձ իրաւունքները կը յարգեն, ու պարտքերնին կը ճանչնան մասամբ. բռնաբարումը արհամարհող սկզբունքը գոնէ իր տեսականին մէջ հիմնուած՝ և ամէնուն կողմէն ընդունուած է այլ եւս: Հին ատեն միմիայն ուժի վրայ հիմնուած յարաբերութիւնը, իր խարխիւր արդարութեան վրայ փոխադրած է և արդարութիւնը իբր գերազանց ուժ ճանչցուած է գոնէ: Ազատ վարչութեան սկզբունքը այլ եւս այնքան տեղ բռնած է համոզումներու մէջ, որ անով ներշնչուած մարդկութեան յառաջդիմական ընթացքը օրէ օր կ'ընթանայ դէպի հաւատալիքներու, բարքերու և շահերու միութիւնը:

Որովհետև Յիսուսի խօսքերուն մէջ այս նոր ձեւերը՝ բոլորովին օտար իր ժամանակին՝ տակաւին սաղմնային վիճակ մը ունէին, առաքեալները ձախող փորձի մը ենթարկեցին ինքզինքնին Քրիստոնէական նախնական հանրավարութիւնը հիմնե-

լով (Գործք. Դ. 32 Ե. 11) : Եւ երբ այդ սխալ կաղմակերպութիւնը տեղի կուտար Եկեղեցիին յարածուն քարոզութիւնովը, ալ չէին կրնար նոր բարոյականին քարոզիչները՝ կանխատեսել այն պատուհաները՝ որոնք այդ քարոզութեան յամր զարդացման անընդմիջական արգիւնքը պիտի ըլլային :

Այդ նոր սկզբունքները, որոնք այս նոր քաղաքակրթութիւնը պիտի ծնցնէին, պարզապէս ասոնք էին . 1. Քրիստոնէական սիեզերական եղբայրութիւն . 2. Հաւասարութիւն . 3. Ազատութիւն . 4. Քրիստոնէական իշխանութիւն :

I

ՏՈՒՆՆԵՐԱԿԱՆ ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական քաղաքակրթութիւնը ծնցնող առաջին ազգակը Էջաւ Քրիստոնէական սկզբունքը տիեզերական եղբայրութեան, որ անմիջական և ուղղակի արդիւնքը պիտի ըլլար Մարդասիրութեան կամ Սիրոյ մեծ պատուիրանին : Հին աշխարհին համար եղբայրութիւնը կը սահմանափակուէր ընտանիքի նեղ շրջանակի մէջ : Մէկ ընտանիքի կամ մէկ հօր զաւակները միայն եղբայրներ էին իրարու : Ընտանիքին ճշգրիտ կաղմակերպութեան վերջ, երբ ցեղերը սկսան զատորոշուիլ կամ ազգերը կազմուիլ, և իրենց անդամներուն յարաբերութեան կապերը ճշգրեւ, տեսակ մը եղբայրութեան սկսան կապուիլ : Երբ կարգուի անհատ

ներուն մէջ : Հին աշխարհի ընկերական այդ դրութեան տակ, հին բարոյականը կրցած է մինչև սա բարձրութեանը հասնիլ, և յաջողած էր իւրաքանչիւր անդամի զգացնել թէ ամէն մարդ պարտական է ինքզինքը զոհել իր ընտանիքին և իր ազգին համար, երբ հարկը կը պահանջէր, թէ պէտք էր սիրել մէկզմէկ իբրև ընտանիքին ու ցեղին հաւասար անդամները : Եւ աշխարհ իբ բոլոր մասերուն մէջ շատ քիչ տարբերութիւնով այն պատուէրներով յառաջ վարեց մարդկային ընկերութեան մեծ ու կնճռոտ մեքենան խաղաղութեան և պատերազմներու ժամանակ, որովհետև ընտանիքին և ցեղին սէրը համեմատաբար բաւական լայն տեղ մը գրաւած էր հողիներուն խորը :

Յիսուս, շատ նեղ դտաւ ընտանիքն ու ցեղը, եղբայրութեան գաղափարին համար : Չստուած երկնաւոր Հայր քարոզելով ամբողջ մարդկութեան, և ինքզինքը՝ իբրև Աստուծոյ որդի՝ եղբայր հռչակելով մարդկութեան, սա համազման առաջնորդեց տիեզերքը, թէ ամէնքն ալ Աստուծոյ որդի և իր եղբայրներն էին, ու հետեւաբար միեւնոյն ատեն իրարու ալ եղբայր էին, առանց ընտանիքի և ցեղի խտրութեան : Այս ըմբռնումին առջև կը քակուէր բաժանումի միջնորմը՝ Քրիստոնէայ ցեղեբու մէջէն, ու նոր Բարոյականին շունչին տակ, կարծես նորէն կը ստեղծուէր մարդկութիւնը :

Տիեզերական եղբայրութեան առաջնորդող Յիսուսի հետ եղբայրութեան կապով էր որ անմի-

Նապէս դէպի Քրիստոնէութեան վաղեցին ստրուկները, ծառաները, դերինները, անժառանգներն ու արհամարհուածները. ասով էր որ հաւատքի դարձան և տակաւ բարեփոխուեցան ամենէն վայրենի ժողովուրդները, և այն ատենի Հռովմէական պետութեան յաղթական բարբարոսները: Ասով էր որ՝ Միջին Դարուն՝ ընկերակցութիւններ և գործաւորական եղբայրակցութիւններ կազմուեցան, գերութիւնը վերջաւ, պատերազմի կատաղի սովորութիւնները մեղմացան և ամէն տեսակ բարերար կազմակերպութիւններ ծնունդ առին: Այդ եղբայրութիւնն էր որ ներշնչեց ու ծափահարեց ամենէն վեհանձն զգացումները, ամենէն անձնուէր և առաքինի դործերը, որոնք այս մեծ դարը աշնուացուցին:

Եղբայրութեան զգացումին այսքան բարերաստիկ արդիւնքները ծափահարելով հանդերձ, պէտք է ըսենք թէ Քրիստոնէական այդ սկզբունքը դեռ իր վերջնական նպատակին չէ հասած: Տակաւին մարդկութիւնը չէ կրցած իրագործել Յիսուսի մեծ ծրագիրը տիեզերական եղբայրութիւնը հիմնելու համար, որ անշուշտ ժամանակի կը կարօտի:

ՄՐԿ. Գ. 31-35. — Յետոյ անոր մայրը ու եղբայրները եկան, և դուրսը կենալով մարդ զրկեցին ու կանչեցին զանիկա. — Եւ ժողովուրդը անոր շուրջը նստած էր, և անոր ըսին. ահա մայրդ ու եղբայրներդ դուրսը կեցեր են և քեզ կ'ուզեն. — Բայց անոնց պատասխան տուաւ Յիսուս և ըսաւ. — Ո՛վ է իմ մայրս, և եղբայր-

ներս: Ու իր բոլորաիքը նստողներուն նայելով ըսաւ. — Ահա իմ մայրս ու եղբայրներս. որովհետեւ ով որ Աստուծոյ կամքը կը կատարէ, ան է իմ եղբայրս և քոյրս և մայրս:

Տես նաև ՄՏԹ. ԺԲ. 46. 50 ԴՈՒԿ. Ը. 19. 21:

ԴՈՒԿ. Ժ. 29. 37. — Օրինական մը ըսաւ Յիսուսին. ո՞վ է իմ ընկերս: Յիսուս ըսաւ. — Մարդ մը երուսաղէմէն երիքով եկած ատեն, աւազակներուն ձեռքը ինկաւ, որոնք մերկացուցին զինքը, և վիրաւորելով կիսամեռ թողուցին ու դացին: — Պատահեցաւ որ նոյն ճամբէն քահանայ մը իջնէր, ու զանիկա տեսնելով միւս կողմէն անցաւ. — Նոյնպէս Դեւտացի մը նոյն տեղը հասնելով, գնաց ու տեսաւ, և անդիի կողմէն անցաւ: Բայց Սամարացի մը, որ ճամբորդութիւն կ'ընէր, եկաւ անոր քովը, և զանիկա տեսնելով խղճաց: — Մօտեցաւ, անոր վէրքերը վաթթեց, վրան ձէթ ու գինի թափելով, ու զանիկա իր զրաստին վրայ դրած տարաւ պանդուկ մը, և անոր հոգ տարաւ: — Հետեւեալ օրը երբոր կ'ելլէր անկէ, երկու դահեկան հանեց, պանդուկապեալին տուաւ և անոր ըսաւ. հոգ տար ատոր, ու ինչ որ աւելի ծախք ընես, դարձիս քեզի կը վճարեմ: Հիմայ, այս երեքէն ո՞րն է աւազակներուն ձեռք գերի իյնողին ընկերը: Եւ անիկա ըսաւ. — Ան որ անոր ողորմութիւն ըրաւ: Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. գնա՛, դուն ալ այնպէս ըրէ:

II

ՀԱՆԱՍՏՐՈՒԹԻՒՆ

Տիեզերական եղբայրութեան Քրիստոնէական սկզբունքը իր կողմէն ծնունդ տուաւ հաւասարութեան այն անհատներուն, որոնցմով պիտի կազ-

մուէր այդ եղբայրութիւնը : Բարոյական այդ հաւասարութիւնով մարդիկ համարժէք կ'ըլլան իրենց կազմած ընկերութեան մէջ, և ամէնքն ալ հաւասարապէս նոյն պարտքերը և նոյն իրաւունքները կ'ունենան : Այս հաւասարութիւնով կը ջնջուին բոլորովին, ծնունդի կամ տոհմի, աստիճանի, հարստութեան և ընկերական պայմաններու վրայ հաստատուած ամէն առանձնաշնորհութիւններ : Այս բարոյական հաւասարութիւնը շատ բնական մէկ հետեւութիւնն էր սա սկզբունքին թէ ամէն մարդ մեր ընկերն է . սկզբունք զոր՝ ինչպէս նախորդ հատուածին մէջ ցոյց տուինք, այնքան դեղեցիկ կերպով բացատրուած է Երկրորդի ճամբուն վրայ վիրաւոր մարդուն առակովը կամ պատմութիւնովը :

Սակայն, Քրիստոնէութեան քարոզած այս բարոյական հաւասարութիւնը չլիթներ բնաւ նիւթական հաւասարութեան հետ, որուն կը տեսնան ընկերվարականները : Ժառանգականութիւնը, դաստիարակութիւնը անհուն զանազանութիւն մը պիտի բերեն շարունակ մարդերուն մէջ, և շարունակ պիտի հեռացնեն նիւթական հաւասարութեան գործնականացումը, որ կարծես չպիտի կրնար ուղիղ համեմատիլ բարոյական հաւասարութեան աւերտարանական սկզբունքին հետ : Կ'ըսուի թէ « հոն՝ ուր հաւասարութիւնը կը տիրէ, իւրաքանչիւր մարդ իր գործերուն համեմատ կ'ընդունի . վարձքերը ինչպէս նաև պատիժները անձնական

են : » Եթէ բարոյական հաւասարութիւնը գոյութիւն չունենար, այս անձնական հատուցումները կամ պատիժները թերեւս տարբեր կերպով անօրինուէին այսօր օրէնքին կողմէն : Բայց այսօր օրէնքն է որ դրապէս և գործնապէս կը ճանչնայ թէ « Մարդիկ իրաւունքի տեսակէտով հաւասար կը ծնին և կը մեռնին : » Գործքերով հաստատուած արժանիքն է միայն, որ տարբերութիւններու շարժառիթը կ'ըլլայ ընկերական առաւելութիւններու բաշխումին մէջ :

Արդ, բարոյական հաւասարութեան սկզբունքը մարդերը կը հարկադրէ որ յարգեն իրարու մէջ ամէն ինչ որ հաւասարօրէն ունին բուն մարդը կազմելու համար . բայց ան երբէք չպիտի արգիլէ որ համեմատաբար աւելի իմաստուններ, աւելի կորովիներ, աւելի հարուստներ, աւելի կարողներ գոյութիւն ունենան աշխարհի վրայ : Ինչպէս որ ասոնց գոյութիւնն ալ չպիտի կրնայ վնասել երբէք այն բարոյական հաւասարութեան, որ ընկերային, քաղաքային և քաղաքական հաւասարութիւններուն հիմը կը կազմէ :

ԳԱՂ. Գ. 1-7. — Որչափ ատեն ժառանգէ տղայ է, ծառայէն տարբերութիւն մը չունի և թէպէտ ամէնուն տէրն է ինքը, բայց խնամակալներու և հոգաբարձուներու ձեռքին տակն է, մինչև հօրը որոշած ժամանակը : Այսպէս ալ մենք, երբ տղայ էինք, աշխարհիս տարրական սկզբունքներուն ծառայ էինք : Բայց երբ ժամանակը լրացաւ, Աստուած զրկեց իր որդին, որ

կնիկէ մը եղաւ, ու օրէնքի տակ մտաւ, որպէս զի օրէնքի տակ եղողները փրկէ, որպէս զի մենք որդեգրուինք: Եւ որովհետեւ դուք որդի էք, Աստուած իր որդիին հոգին ձեր սրտերուն մէջ շրկեց, որ կ'աղաղակէ Աբբայ, Հայր: Ուստի այլ ևս ծառայ չես, այլ որդի, և եթէ որդի՝ ուրեմն Յիսուսով ժառանգ Աստուծոյ:

ԳԱՂ. Գ. 28. — Այսուհետև ոչ Հրեայ կայ, ոչ Յոյն, ոչ ծառայ, ոչ ազատ, ոչ արու և ոչ էգ, ինչու որ դուք ամէնքդ ալ մէկ էք Յիսուսով Քրիստոսով:

ԿՈՂ. Գ. 9-11. — Ձեզմէն մերկացէք հին մարդը իր գործքերով և հագէք նորը, որ գիտութիւնով նորոգուած է իր ստեղծողին պատկերին պէս. ու ուր Յոյն, Հրեայ, թլփատութիւն և անթլփատութիւն, բարբարոս, Սկիւթացի, ծառայ կամ ազատ չկայ, այլ ուր Քրիստոս է ամէնը և ամէն բանի մէջ:

III

ԱԶՍՏՈՒԹԻՒՆ

Տիեզերական եղբայրութեան սկզբունքին երկրորդ բարոյական արդիւնքը պիտի ըլլար անհասնելու ազատութիւնը: Տեսնուած էր որ, հոն ուր մարդուս բարոյական ազատութիւնը բռնաբարուած էր կամ օրէնքին և կամ առանձնաշնորհեալ մարդերու կողմէն, անձնական կիրքերը և անհատական մտահաճութիւնները մեծ դեր կը խաղային: Քրիստոնէութիւնը մարդուն համար դժեց բացարձակապէս բարոյական գործունէութեան մը նպատակը, ու միեւնոյն ժամանակ անոր տուաւ այդ նպատակին հասնելու միջոյր:

Նախ շնորհեց մարդուն, իր կապտուած հոգեկան և բարոյական ազատութիւնը, և ատով իսկ զերծեց զանի հին պաշտամունքներու ծէսերէն ու կանոնադրութիւններէն: Այդ ազատութիւնը սակայն, որուն վրայ պիտի հիմնուէր մարդկային ամբողջ նուիրապետութիւնը, ամէն օրէնքներէ հաւասարապէս զերծում մը պիտի չըլլար: Արդար օրէնքներու սահմանումին մէջ պիտի ամփոփուէր բուն իսկ ազատութեան ոգին, որ այնուհետև մարդուս կատարել պիտի տար ոչ թէ ինչ որ իրեն հաճոյ կը թուէր, այլ ինչ որ արդար կը նկատուէր: Անոր համար Քրիստոս երբ մէկ կողմէն այդ բարոյական ազատութեան շնորհիւ զերծեց մարդը հին պաշտամունքներու ծէսերէն, միւս կողմէն շեշտեց թէ պարտաւոր է հաւատացեալը Քրիստոնէութեան պատուէրները կատարել:

Աւետարանի քարոզութեան սկզբնաւորութեանը ատեն, մարդուս բարոյական ազատութեան այդ սկզբունքները սաղմնային վիճակի մը մէջ կը գտնուէին դեռ: Ասի տարբեր ձեւով չէր կրնար ըլլալ, որովհետև այն ժամանակ դարուն այն ընկերական պայմաններուն մէջ, ուր կ'ապրէին, ո՛չ Քրիստոս և ո՛չ ալ առաքեալները կրնային քացատրել բարոյական ազատութեան սկզբունքին այս գործնական հետեւութիւնները, առանց Հռովմէական պետութեան քաղաքային և քաղաքական կարգին դէմ ընդօրինելու: Անոնք սերմանեցին միայն սկզբունքը, կարելի չգուշաւորութիւնով, սա համոզումով թէ,

Քրիստոնէական ընկերութիւնները իրենց շարունակական զարգացումովը և յառաջդիմութիւնովը պիտի վայելէին այդ սկզբունքին փրկարար պատուները : Քարոյական ազատութեան սկզբունքին քարոզութենէն սկսեալ որչափ պաշտպանութեան կռիւներ մղուեցան ստրկութիւններու դէմ, և որչափ դէպի ազատութիւն խոյանքներ թռիչք առին Քրիստոնէական ընկերութիւններու մէջ : Քրիստոնէութեան կողմէ նոր հիմնուած մարդկութիւնը այս մասին բոլորովին տարբեր պատկեր մը կը ցուցադրէ հանդէպ հին մարդկութեան, որ ստրկութեան կեանքը կ'ապրէր, բարոյական ազատութեան սկզբունքէն զրկուած : Այս սկզբունքով մարդ իրաւունքի կ'ունենայ քարոյականի հակառակ չեղած ամեն գործ ընելու կամ « Ազատութիւնը կը կայանայ կատարելուն մէջ ամէն բանի, որ չ'վստեր ուրիշին » (Declaration des droits de l'homme. IV) : Այս պայմաններուն մէջ, ալ ո՞րն է այն օրինաւոր ազատութիւնը որ կրնայ զլացուիլ մարդերու, քանի որ նոյն իսկ աշխարհական ընկերութիւնները, Քրիստոնէական բարոյականի սկզբունքէն վարուած, իրաւունք ունին արգելելու բարոյականի հակառակ գործերը, թէ իսկ անոնք չ'վստեն հաւարական շահերու կամ ուրիշին ազատութեանը :

Ինչպէս դարաւոր ճիգերու արդիւնքով, բարոյական հաւասարութեան սկզբունքին հետեւանքը եղաւ քաղաքային և քաղաքական հաւասարու-

թիւնը, նմանապէս տրամաբանական կերպարանափոխութիւնով մը, բարոյական ազատութիւնը քաղաքային և քաղաքական ազատութիւնը եղաւ :

ՅՈՎ. Հ. Ը. 31. 32. 34. 36. — Թէ որ դուք իմ խօսքիս մէջ կհնաք, ճշմարտապէս իմ աշակերտներս կ'ըլլաք. — և ճշմարտութիւնը պիտի ճանչնաք, և այն ճշմարտութիւնը ձեզ պիտի ազատէ : — Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ ով որ մեզք կը գործէ, մեզքի ծառայ է. — և ծառան տան մէջ յաւիտեան չի մնար : Բայց որդին յաւիտեան կը մնայ : — Ուստի եթէ որդին ձեզ ազատ կ'ընէ, ճշմարտապէս ազատ պիտի ըլլաք :

ՀՈՎ. Մ. Զ. 18. — Դուք մեզքէն ազատ ըլլալով, արդարութեան ծառայ եղաք :

Ա. ԿՈՐՆԹ. Է. 23. — Դուք գինով ծախու առնուեցաք, մարդերու ծառայ մի' ըլլաք :

Բ. ԿՈՐՆԹ. Գ. 17. — Ուր որ տիրոջը հոգին կայ, հոն ազատութիւն կայ :

ԳՍ. Գ. Գ. 31. — Եղբայրներ մենք ազախինի զաւակներ չենք, այլ ազատի. — (Ե. 1) Ուստի ամուր կեցէք այն ազատութիւնովը, որով Քրիստոս մեզի ազատեց :

Ե. 13. — Դուք ազատութեան կոչուած էք, միայն թէ ձեր ազատութիւնը մարմնոյ ցանկութիւններու պատճառ չըլլայ, այլ սիրով իրարու ծառայութիւն ըրէք :

ՅԱԿ. Բ. 12. Անանկ խօսեցէք, և անանկ գործեցէք, որպէս թէ ազատութեան օրէնքովը պիտի դատուիք :

Տես նաև ՅԱԿ. Գ. 25. Ա. ՊԵՏՐ. Բ. 16 :

IV

ՔՐԻՍՏՈՆԷՍԿԱՆ ԻՇԵՍՆՈՒԹԻՒՆ(*)

Եղբայրութեան օրէնքին իբրև հետեւանք, նոյն իսկ ընկերական իշխանութեան սկզբունքը արմատական կերպարանափոխութիւն մը պիտի կրէր : Այսուհետև իշխանութիւնը այլ եւս Տիրոջ մը հեղինակութիւնը չէր, ամէն բանէ առաջ ծառայութիւն մըն է անիկա, և անոր մէջ իրաւունք մը ունենալու համար, ամէնուն մէջ ամէնէն անձնուէրը ըլլալ պէտք է : Յիսուս Քրիստոս այդ սկզբունքը հոգեւոր իշխանութեան պատշաճեցուցութեայ անիկա, աշխարհական իշխանութիւններուն ալ օրէնքը պիտի ըլլար, երբ Քրիստոնեայ ազգերը կազմուէին : Սակայն տակաւին շատ ժամանակներ աշխարհական իշխանութիւնը ուժի կամ տոհմի վրայ հիմնուած առանձնաշնորհութիւն մը մնաց, և անոնք, որոնք զանկէ կ'ընդունէին, ամենամեծ վայելքներու միջոց մը միայն նկատեցին : Հազիւ դարէ մը 'ի վեր է որ Քրիստոնեայ մեծ ազգերը սկսան բացարձակ և ժառանգական թագաւորութիւնները փոխանակել Աւետարանի բարոյականին աւելի համաձայն սահմանադրութիւններով :

(*) ՕՍի այս յօդուածը նոյնուժեամբ յառաջ կը բերենք, առանց ընդլայնելու կամ յարսեւելու :

Այսպէս են Քրիստոնէութենէն սրուած ընդհանուր սկզբունքները : Բայց ասոնց յայտարարուած ատեն, ոչ ոք կրնար համոզում կազմել իրերու վիճակին վրայ, որ անոնց պատշաճեցումէն պիտի յառաջածագէր : Եւ երկար ժամանակ ալ մարդիկ դադարիար մը չունեցան, թէ ասանկ կերպարանափոխութիւն մը անհրաժեշտ պիտի ըլլար : Բնակուն է, ուրեմն, որ այս բոլորովին նոր դադարները, հաւատացեալներուն մէջ ուղղակի հորձք մը (effervescence) արտադրէին : Ստորին դասակարգի մարդերու համար բարոյական մեծ գոհացում մը եղած պիտի ըլլար զերծ մնալ այն յարգանքներէն կամ հպատակութիւններէն, զորս իրենցմէ կը պահանջէին հարստութեան և աստիճանի առանձնաշնորհեալները, հոգեւորապէս ինքզինքնին հաւատար զգալով անոնց, և նոյն իսկ անոնցմէ գերազանց՝ իրենց մարդասիրութեան եռանդովը : Ասիկա ամենուն համար ձերբազատութիւն մըն էր, Հրէական կամ Հեթանոս ծիսական և արարողական օրէնքներուն ջնջումէն աւելի, որոնք անհատը աւելորդապաշտութիւններու չըջանակով մը կը պարփակէին : Ասով կրնայ բացատրուիլ Յիսուսի և առաքեալներուն շուրջ խռնուած ունկնդիրներու, մանաւանդ աղքատներու և զոհեալներու կուտակումը : Բաց աստի, զանազան կետերու վրայ գոյութիւն ունեցող վիճակին և նոր ուսուցումներու միջև եղած հակադրութիւնը այնքան ուղքաու էր, որ չէր կրնար գործնականին

մէջ դժուարութիւններ չյարուցանել: Այս պատճառով, Քրիստոնէական վարդապետութեան տարածումը անկարելի չընելու համար, հարկ տեսնուեցաւ նորանոր յաստիքներու, որոնք առանց սկզբունքներուն վնասելու անոնց գործադրութիւնը կը յետաձգէին: Նոյն ինքն Քրիստոս զանազան պարագաներու մէջ ինքզինքը բռնադատուած զգաց առժամեայ կամ խուսափողական պատասխաններ տալու այն հարցումներուն, որոնք այս տեսակ դժուարութիւններ կը յարուցանէին և որոնք իրեն կ'ուղղուէին իր աշակերտներուն անիմաստութենէն կամ իր թշնամիներուն նենգութենէն:

Կլխաւորաբար երկու կէտերու մասին կրնային տարակիւյսներ յարուցուիլ: Առաջին թէ, պէտք է հաստատուած իշխանութիւնները ճանչնալ, և անոնց տուրք վճարել: Երկրորդ, թէ անոնք որ դերի ունենալով Քրիստոնէութեան կը դառնան, պարտախան են անմիջապէս ազատագրել իրենց դերիները: Այս հարցումներու առաջինին հանդէպ Յիսուս խոյս տուած էր իր միտքը բացատրել: Բայց յայտնապէս նոր վարդապետութեան տարածումը արդէն բաւական դժուարութիւններու կը հանդիպէր, և հարկ էր զգուշանալ քաղաքական յաւակնութիւններով զայն խառնամանալէ: Եթէ այդպէս չընէին, Յիսուսի աշակերտները փոխանակ ինքզինքնին խաղաղութեան և սիրոյ կրօնքին յառաջընթացները յայտարարելու, խուլաբարներու երեւոյթը պիտի առնէին: Ուստի առաք-

եալներն ալ միաձայնութեամբ, հաստատուած իշխանութիւններու հնազանդութիւն պատուիրեցին: Անկարելի չէ, որ սակայն որ առաքեալներէն տաք դուխները քաղաքական ցոյցերու բերումն ունեցած ըլլան (*) : Ասով պիտի բացատրուէր առաքեալներուն կողմէն յեղյեղուած յանդիմանութիւնները: Իրենք ալ սակայն զիտէին դիմադրել հաստատուած իշխանութիւններու, երբոր անհրաժեշտ ըլլար, և անդէս չէին, որ եթէ կարեւոր է երբեմն հնազանդիլ մարդերու, պէտք էր միշտ Աստուծոյ հնազանդիլ:

Գերութեան անմիջական ջնջումի մասին ալ անոնք ոչ նուազ լուրջ դժուարութիւններու հանդիպեցան այն ընկերութեան մէջ, ուր գործաւորները մեծ մասամբ գերիներ էին, և ուր մանաւանդ գերիները ծանրաբեռնուած էին առանին բոլոր ծառայութիւններով: Այս խորհուրդը ծայր տուաւ նորադարձներու առաջին մտեռանդութեան պահուն, ինչքերուն հասարակաց ըլլալու խորհուրդին հետ, որուն հետեւութիւնն էր: Բայց այս երկրորդ կէտն ալ անյարմար էր Քրիստոնէական հաւատածաւարման պահանջներուն: Առաքեալներն ալ այս, ինչպէս նաև բազմաթիւ նկատումներով ստիպուած էին անդի տալ պատեհա-

(*) Կ'երեւի որ Փրիստոնէաններն ալ մասնակցած էին Հրեաներուն կողմէ յարուցուած այն շարժումներուն, որոնք ստիպեցին Գողգոթա կայսր այս վերջինները արտաքսելու Հռովմէն, մեր թուականի 52 տարին: (ՍՈՒԷՏՈՆ, ԿՂՈՒԻՈՍ 25)

կանութեան պատճառներուն սպասելով որ պատմական յեղաշրջութիւնը (évolution) ինքնին իրականացնէ նոր սկզբունքը իր բոլոր հետեւութիւններուն մէջ:

ՄՐԿ. Ժ. 42-44. — Յիսուս ըսաւ. Գիտէ՞ք որ ազդերու իշխան նկատուածները անոնց կը տիրեն, և անոնց մեծամեծները կ'իշխեն անոնց — Բայց ձեր մէջը այնպէս պիտի չըլլայ, այլ ձեզմէ ով որ մեծ ըլլալ կուզէ, անիկա ձեր սպասաւորը պէտք է ըլլայ. — և ով որ ձեզմէ առաջին ըլլալ կուզէ, անիկա ամենուն ծառան պէտք է ըլլայ:

ՄՏԹ. ԻԳ. 10-12. — Թող մէկը զձեզ վարդապետ չանուանէ, որովհետեւ ձեր վարդապետը մէկ է, Քրիստոս: Եւ ձեր մէջէն մեծը ձեր սպասաւորը պիտի ըլլայ: — Ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ, պիտի բարձրանայ:

(Տես նաև ՄՏԹ. Ի. 25. 28. ՄՐԿ. Թ. 34. ԴՈՒԿ. ԻԲ. 24-26:

ԽՈՇԵՄՈՒԹԵԱՆ ԱՌԺԱՍԵԱՅ ԿԱՆՈՆԵՐ

ՄՐԿ. Թ. 39. — Ով որ մեզի հակառակ չէ մեր կողմէն է:

ՄՏԹ. ԻԲ. 21. — Ան որ կայսերն է կայսեր տուէք, և այն որ Աստուծոյ է Աստուծոյ տուէք:

ՅՈՎՃ. ԺԸ. 36. — Յիսուս պատասխան տուաւ Պիղատոսին. իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ, եթէ այս աշխարհէն ըլլար իմ թագաւորութիւնս, իմ սպասաւորներս կը կռուէին, որ ես Հրէից ձեռքը չմատնուիմ. բայց հիմա իմ թագաւորութիւնս ասկէ չէ:

(Տես նաև ՄՐԿ. ԺԲ. 17. ԴՈՒԿ. Թ. 50, Ի. 25. Բ. ՏԻՄ. Բ. 3. 4:)

Ա. ՊԵՏ. Բ. 13. 14. 17. — Հնազանդ եղիք ամէն մարդկային սահմանադրութեան Աստուծոյ սիրոյն համար, թէ թագաւորին՝ իրրե վեհապետի մը. — թէ կուսակալներուն, իրրե անոր կողմէն զրկուածներ, չարագործները պատժելու և բարեգործները նպաստաւորելու համար: Ամէնքը պատուեցէք, եղբայրները սիրեցէք Աստուծոյ վախցէք. թագաւորը պատուեցէք:

ՀՈՒՎՄ. ԺԳ. 1-7. — Ամէն մարդ իր վերին իշխանութիւններուն թող հնազանդի. որովհետեւ չկայ իշխանութիւն մը, որ Աստուծոյ չըլլայ, և անոնք որ կան Աստուծոյ հաստատուած են: — Ուրեմն ով որ իշխանութեան դէմ կը կենայ, Աստուծոյ հրամանին դէմ կը կենայ, և անոնք որ դէմ կը կենան, անձերնուն դատապարտութիւնը կ'ընդունին: — Որովհետեւ իշխաններէն պէտք չէ վախնան բարի գործողները, այլ չար գործողները: Կուզես չվախնալ իշխանութենէն. բարի գործէ, և անկէ գովութիւն պիտի ընդունիս: Որովհետեւ իշխանը Աստուծոյ սպասաւորն է, եթէ դուն բարիք ընես, բայց եթէ դուն չար կը գործես, վախցիր, որովհետեւ պարապ տեղը չէ որ սուր կը կրէ: Անիկա Աստուծոյ սպասաւորն է, անոր վրէժխնդրութեան գործիքի (agent) հանդէպ անոր, որ չար կը գործէ: Ուստի պէտք է հնազանդ ըլլալ ոչ միայն բարկութենէն վախնալով, այլ և խղճմտութեամբ: Այս միեւնոյն պատճառով է որ տուրք ալ կուտաք, ինչու որ Աստուծոյ սպասաւորներն են նոյն այս բանին ալ հոգ տանելու համար: Ուրեմն հատուցէք ամենուն պէտք եղածը, որուն որ տուրք տրուելու է՝ տուրքը, որուն որ մաքս՝ մաքսը, որուն որ վախ՝ վախը, որուն որ պատիւ՝ պատիւը:

ԳՈՐԾԲ. Ե. 27. 29. — Քահանայապետը հարցուց առաջնաքննորդն, ըսելով. ձեզի չպատուիրեցինք, որ այս անունով չսովորեցնէք, — և անա Երուսաղէմը ձեր վարդապետութիւններովը լեցուցիք, — Պետրոս և միւս

առաքեալները պատասխանեցին. աւելի Աստուծոյ հնազանդիլ պէտք է, քան թէ մարդերու :

(Տես նաև Ա. ՏԻՄՈՒ. Բ. 2. ՏԻՊ. Գ. 1. ԳՈՐԾՔ. Դ. 19.) — Հաստատուած իշխանութիւններու հնազանդութեան առաքեալներու կողմէն եղած մերժումին առթիւ, տես նաև Գործք. Դ. Ե. Թ. Ժ. Գ. Ի. Բ. և Բ. ԿՈՐՆԹ. ԺԱ. 32. 33 :

Ա. ԿՈՐՆԹ. Է. 21. — (Ծառայ = գերի) վիճակիդ մեջ, կոչուեցար, հոգ մի՛ ըներ այդ մասին, բայց եթէ կրնաս ազատ ըլլալ, աւելի զայն ընտրէ :

ԵՓԵՍ. Զ. 5. 7. 9. — Ծառաներ (=գերիներ), դուք իբրև Քրիստոսի հնազանդ եղէք ձեր մարմնաւոր տէրերուն վաստով ու յարգանքով, ձեր սրտին պարզութիւննովը ու ոչ թէ մարդահաճոյի պէս աչքի առջև ծառայելով, այլ Քրիստոսի ծառաներու պէս սրտանց Աստուծոյ կամքը կատարելով : — Յօժարութեամբ ծառայելով ոչ թէ իբրև մարդերու այլ իբրև Տիրոջը : — Դժուր ալ, ղ՛վ տէրեր, նոյնը ըրէք անոնց, մէկդի ըրէք սպառնալիքը, գիտնալով որ ձեր ալ, անոնց ալ տէրը երկինքն է, և թէ անոր քով աչառութիւն չկայ :

Ա. ՏԻՄ. Զ. 1. 2. — Անոնք որ ծառայութեան լուծի տակ են (=գերի) թող իրենց տէրերը ամէն պատիւի արժանի սեպեն, որ Աստուծոյ անունն ու վարդապետութիւնը չհայհոյուի : Եւ անոնք որ հաւատացեալ (=քրիստոնէս) տէրեր ունին, թող չարհամարհեն, եղբայրներ ըլլալնուն համար, այլ աւելի ծառայութիւն ընեն, որովհետև անոնք հաւատացեալ են և արժանի սիրուելու :

Ա. ՊԵՏՐ. Բ. 18. — Ծառաները (=գերիները) ամէն բանի մէջ վաստով հնազանդ թող ըլլան տէրերուն, ո՛չ միայն երբ անոնք բարերար են ու հեղաբարոյ, այլ և երբ անոնք անիրաւներ են :

Տես նաև ԿՈՂ. Գ. 22. 23. Դ. 1. ՏԵՊ. Բ. 9. 10 :

Զ.

ԱՆՀԱՏԸ. — ԱՆՁՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

I

Ա Ն Հ Ա Տ Ը

Մեր մինչև ցարդ ցոյց սուած բնագիրները Քրիստոնէական ընդհանուր ուսուցումներ էին միայն, մարդկային կեանքի այս կամ այն վիճակներու վերաբերմամբ : Բայց Քրիստոնէական ուսուցումը ընդհանուր պարտքերու մէջ սահմանափակուած չէ միայն : Աւետարանին տեսակէտով հիմնուած նոր մարդկութեան առաջադրուած կարգն ու սարքը կարենալ երաշխաւորելու համար անհատին նորոգումէն կախումն ունի շատ բան : Անոր համար շատ մը կէտերու մասին, Քրիստոնէական ուսուցումը պէտք է մատնանշէր նաև անհատական պարտականութիւններու գլխաւոր նկատուած մանրամասնութիւնները :

Հին ընկերութեան մէջ անկատար բարոյականին անմիջական հետեւանքով խուժանին մեծ զանգուածին մէջ կորսուած անհատը նոր ընկերութեան մէջ կը գտնէ իր որոշ տեղը, կը ճանչնար իր ունենալիք գիրքը, և իր կատարելիք գերը : Անհատը այլ եւս գիտէ թէ ինչ է բարոյական ար-

ժէքը այդ ընկերութեան մէջ, քանի որ Քրիստոնէական ուսուցումը որոշ կերպով ցոյց տուած է այն բոլոր բարեմասնութիւնները, որոնք ճշմարիտ Քրիստոնեան պիտի յատկանշեն : Արդէն մենք տեսանք, թէ, Յիսուսի գաղափարով, Քրիստոնէութիւնը ձերբազատուած ու դիտակցող գործարանաւորութիւն մըն է (organisation) որուն մէջ իւրաքանչիւր անհատ՝ փոխադարձ պարտքի և իրաւունքի սկզբունքին վրայ հիմնուած, մասնաւոր պոչտօն մը կը կատարէ իր շնորհքին, կամ նոր լեզուով, իրեն շնորհուած կարողութեան կամ տաղանդին համեմատ : Իր առաջին պարտքն է արժեցնել իրեն շնորհուած տաղանդը, օգտակար ընել, և արդիւնաւորել զանի հասարակաց գործին և շահուն համար : Գանդարաթաքոյցները իրենց տեղէն ու դիրքէն կը զրկուին : Անհատին մէջ պարտաճանաչութիւնը աւելի կը շեշտուի, « իրաւունքը բարոյական ուժ մը, և պարտքը բարոյական հարկաւորութիւն մը » կ'ըլլայ իրեն համար : Պարտքը, ինչպէս նաև քրիստոնէական պարտաւորութիւններու ընդհանուր զգացումը, ամենէն տիրող տարրը կը դառնայ, « իբր սրտին գանձը և իբր աչքին լոյսը » : Եւ Յիսուսի անձին օրինակը, անհատին տիպարը կը դառնայ, անոնցմէ իւրաքանչիւրին տրուած ուժերուն կամ շնորհներուն համեմատութեամբ : Յիսուսի ամենամեծ ուրախութիւնը եղաւ ինքզինքը Աստուծոյ տալ և աստուածային կեանքը հաղորդել մարդերուն : Այս

կատարեալ ընելու համար Ան ըրաւ կարելի եղած բոլոր զոհողութիւնները : Անհատներու համար ալ գոյութիւն ունին միեւնոյն պարտականութիւնները, որոնք իրենց սովորական վիճակէն դուրս կ'ելլեն և զոհողութեան կ'առաջներդեն անհատը : Պարտքը ինչ ձեւի տակ ալ, որ ներկայանայ անհատին, ըլլայ զոհողութիւն թէ անձնուրացութիւն, պէտք է կատարէ զանի, ոչ թէ ահամայ՝ բռնադատուած մարդու մը պէս, այլ իր բովանդակ կամ քով, սիրտով և իմաստութիւնով : Նոր ուսուցումին մէջ անհատին համար ալ կը դադրին գոյութիւն ունենալէ անձնական նկատումները կամ անձնական դիւրութիւնները : Երբ պարտքը կը խօսի, պէտք է պատրաստ զգայ ինքզինքը, նոյն խօսք — չափազանցուած բացատրութիւնով մը — խելու իր աչքը, որ զինքը կը գայթակրեցնէ, կամ մթադնած է մարմինի կիրքերով և կտրելու իր տարքը, որ զինքը իր պարտականութենէն տարբեր ուղղութիւններու կ'առաջնորդէ : Եւ որովհետև անհատը այդ զոհողութիւններու ճամբուն մէջ պիտի հանդիպի ձախողանքներու և նիւթական վնասներու, պարտականութեան այդ խորունկ համոզումն է միայն, որ պիտի կրնայ զինքը վեր բռնել յուսահատութենէ, և պիտի մեղմէ անոր մէջ այդ ձախողանքներուն պատճառած վիշտերը :

Ղ.ՈՒԿ. ԺԲ. 42. 48. — Տէրը ըսաւ, ուրեմն ո՛վ է այն հաւատարիմ և իմաստուն անտեսը, զոր իր տէրը իր գերզաստանին վրայ պիտի դնէ, ատենին անոնց

ուտելիքը տալու համար: Երանի՛ այն ծառային, որ իր տէրը եկած ատեն այդպէս ըրած պիտի գտնէ: — Ծշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ զանիկա իր բոլոր ունեցածին վրայ պիտի դնէ: — Բայց թէ որ ծառան իր միտքովը՝ ըսէ. տէրս իր գալուստը կ'ուշացնէ, և սկսի ծառաներն ու աղախինները ծեծել ուտել խմել ու գինովնալ. — այն ծառային տէրը իր չսպասած մէկ օրը պիտի գայ, այն ժամուն՝ զոր չգիտեր, և զանիկա մէջ տեղէն պիտի կտրէ, ու անոր բաժինը անհաւատարիմներուն կարգը պիտի դնէ: Այն ծառան որ իր տիրոջը կամքը գիտէ, ու չի պատրաստուիր, և անոր կամքը չի գործադրեր, շատ ծեծ պիտի ուտէ: Բայց այն որ չի գիտեր, ու ծեծի արժանի բան մը կընէ, քիչ ծեծ պիտի ուտէ: Շատ պիտի ուզուի անկէ, որուն շատ տրուեցաւ, և ալ աւելի պիտի պահանջուի անկէ, որուն աւելի յանձնուեցաւ:

ՄՏԹ. ԻԵ. 14-30. — Նոյնպէս օտար երկիր դացող մարդ մը, կանչեց իր ծառաները և ունեցածը անոնց յանձնեց: Մէկուն տուաւ հինգ տաղանդ, մէկուն՝ երկուք և միւսին՝ մէկ, ամէն մէկուն իր կարողութեանը համեմատութեամբ, ու անմիջապէս ճամբայ ելաւ: — Այն որ հինգ տաղանդ առած էր, գնաց անոնցմով գործ տեսաւ, և ուրիշ հինգ տաղանդ շահեցաւ: — Նմանապէս այն որ երկուք առած էր, ուրիշ երկուք ալ շահեցաւ: — Իսկ այն որ մէկ առած էր, գնաց գետինը փորեց, և իր տիրոջ ստակը հոն պահեց: — Շատ ժամանակ վերջ, ծառաներուն տէրը եկաւ, և անոնցմէ հաշիւ պահանջեց: Հինգ տաղանդ առնողը եկաւ, ուրիշ հինգ տաղանդ ալ բերաւ, և ըսաւ. Տէ՛ր հինգ տաղանդ յանձնեցիր ինծի, ահա հինգ տաղանդ ալ անոնց վրայ շահեցայ. — Տէրը անոր ըսաւ. ապրի՛ս, բարի և հաւատարիմ ծառայ, որովհետեւ դուն քիչին մէջ հաւատարիմ եղար, շատ բաներու վրայ պիտի կեցնեմ քեզի. քու տիրոջդ ուրախութեան մէջ մտիր: — Երկու զնտաանդ առնող

ալ եկաւ ու ըսաւ. Տէ՛ր. երկու տաղանդ յանձնեցիր ինծի, ահա ուրիշ երկու տաղանդ ալ անոնց վրայ շահեցայ. — Տէրը ըսաւ անոր. ապրի՛ս բարի և հաւատարիմ ծառայ, դուն որ քիչին մէջ հաւատարիմ եղար, շատ բաներու վրայ պիտի կեցնեմ քեզի. քու տիրոջդ ուրախութեանը մէջ մտիր: — Մէկ տաղանդ առնողն ալ եկաւ, ու ըսաւ. Տէ՛ր, գիտէի որ դուն խիստ մարդ մըն ես չսերմանած տեղէդ կը հնձես ու չցանած տեղէդ կը ժողվես. ուստի վախնալով գացի քու տաղանդդ գետնին տակը պահեցի. և ահա քուկդ քեզի: Տէրը անոր պատասխան տուաւ ու ըսաւ. չա՛ր և ծոյլ ծառայ, քանի որ գիտէիր թէ չսերմանած տեղէս կը հնձեմ, ու չցանած տեղէս կը ժողվեմ, ուրեմն պէտք էր որ դուն իմ ստակս սեղանաւորներուն տալիր, որ եկած ատենս իմա շահովը առնէք: Հիմա՛, ատկէ առէ՛ք տաղանդը, և տասը տաղանդ ունեցողին տուէք: Որովհետեւ ամէն ունեցողին պիտի տրուի ու աւելնայ, և չունեցողէն իր ունեցածն ալ պիտի առնուի: — Եւ այդ անպիտան ծառան դուրսի խաւարը հանեցէք, հոն պիտի լայ ու ալուաները կրճատէ:

(Տես նաև ՄՏԹ. ԻԴ. 45-51. ՂՈՒԿ. ԺԹ. 12-26. ՄՐԿ. Դ. 25. ՂՈՒԿ. Ը. 18:)

ՄՏԹ. Զ. 19-23. — Ձեզի գանձեր մի գիզէք երկրի վրայ, ուր ցեցն ու ժանգը կ'ապականեն և որ գողերը պատ ծակելով կը գողնան: — Այլ ձեզի գանձեր դիզեցէք երկինքը, ուր ո՛չ ցեցը ո՛չ ժանկը կ'ապականէ, և ուր ոչ գողերը կը գողնան: Որովհետեւ ուր որ է ձեր գանձը, հոն պիտի ըլլայ նաև ձեր սիրտը: Մարմինին ճրագը աչքն է, եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ: Բայց եթէ քու աչքդ վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ, եթէ ուրեմն քու մէջդ եղած լոյսը խաւար է, ալ բուն խաւարը որչափ մեծ կ'ըլլայ: ՏՄԹ. Ե. 29. — Եթէ աջ ձեռքդ քեզ կը գայթակ-

դեցնէ, կտրէ զանիկա ու քեզմէն ձգէ. որովհետեւ՝ քեզի համար՝ աւելի աղէկ է որ անդամներէդ մէկը կորսուի, քան թէ ամբողջ մարմինդ գետինը ձգուի:

ՂՈՒԿ. Զ. 45. — Բարի մարդը իր սիրտին բարի գանձէն բարութիւն դուրս կը բերէ, և չար մարդը իր սիրտին չար գանձէն չարութիւն, որովհետեւ բերանը իր սիրտին աւելորդէն կը խօսի:

ՄՐԿ. Է. 18-20. 22. — Ամէն ինչ որ դուրսէն մարդուն ներսը կը մտնէ չի կրնար զանիկա պղծել. — ինչ որ մարդուն ներսէն կ'ելլէ, ան է որ կը պղծէ մարդը: — Որովհետեւ ներսէն մարդոց սիրտերէն կ'ելլեն չար խորհուրդները, չնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, ագահութիւններ, չարութիւններ, նենգութիւն, գիճութիւն, չար աչք, հայհոյութիւն, ամբարտաւանութիւն, անզգամութիւն:

Ա. ԿՈՐՆԹ. ԺԶ. 13. 14. — Արթուն կեցէ՛ք, հաւատքի մէջ հաստատուն մնացէ՛ք, ժիր եղի՛ք, զօրացէ՛ք. — ձեր ամէն բաները թող սիրտով ըլլայ:

Բ. ՏՐՄ. Գ. 7. — Աստուած ձեզի երկչոտութեան հոգի չտուաւ, այլ զօրութեան, սիրոյ և զգաստութեան:

ԵՓԵՍ. Ե. 15. 17. — Նայեցէ՛ք, թէ ինչպէ՛ս զգուշութեամբ պիտի քալէ՛ք, ոչ թէ անմիտներու պէս, այլ իմաստուններու պէս: Ժամանակը ծախու առէ՛ք, ինչու որ օրերը չար են: Ուստի անմիտ մի՛ ըլլաք, այլ իմացէ՛ք թէ ի՛նչ է Տիրոջը կամքը:

Ա. ԹԵՍ. Ե. 19. 21. — Մի մարէ՛ք հոգին, ամէն բան փորձեցէ՛ք ու բարին գնահատեցէ՛ք:

ՅԱԿ. Գ. 13-15. — Զեր մէջ իմաստուն և խելացի ո՞վ կայ. թող անիկա բարի վարմունքով ցոյց տայ իր գործերը, խմաստութեան հեղութիւնով: Բայց եթէ դառն նախանձ և հակառակութիւն ունենաք սրտերնուդ մէջ, մի՛ պարծենաք ու ճշմարտութիւնը սուտ հանէ՛ք: Այս իմաստութիւնը վերէն եկած չէ՛:

ՅԱԿ. Ա. 2-4. — Եղբայրներ, բոլորովին ուրախութեան արժանի բան սեպեցէ՛ք այն տեսակ սեսակ փորձութիւնները, որոնց մէջ կ'իյնաք. — Գիտնալով որ ձեր հաւատքին փորձութիւնը (épreuve) համբերութիւն յառաջ կը բերէ. անոր, համբերութիւնը թող կատարեալ գործ ունենայ, որպէս զի դուք կատարեալ և ամբողջ ըլլաք, ու ա՛յ բանի մը պէտք չունենաք:

(Տես նաև ՂՈՒԿ. ԺԲ. 33-34. ՄՐԿ. Թ. 42-47 ՄՏԹ. ԺԵ. 11. 17-19. ՀՌՈՎՄ. ԺԲ. 11-12. Ա. ՊԵՏՐ. Գ. 7. 12. 13):

II

ԱՆՉՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երբ անհատին դիրքը կամ դերը կը ճշգուծ քրիստոնէական-բարոյական գործարանաւորութեան մէջ, ա՛յլ դիւրին կըլլայ մեզի համար գիտնալ, թէ անհատները ինչ անձնական յարաբերութիւններ պիտի ունենան, և թէ ինչպէս պիտի վերաբերուին իրարու հետ: Ստոյգ է որ նմաններուն հետ մեր ունենալիք վերաբերումներուն մէջ միշտ սէրը կամ զոհողութեան պատրաստ մարդասիրութիւնն է որ դերագոյն օրէնքը կը կազմէ. բայց մենք թերեւս չպիտի կրնայինք մեր կեանքի սովորական յարաբերութիւններուն մէջ այդ սիրոյ ու մարդասիրութեան սկզբունքները կիրարկել, եթէ առաքեալները զանոնք մեզի ցոյց տալու ջանացած չըլլային: Այդ անձնական յարաբերութիւններուն քանի մը էական կէտերը նոյն խկ Գրիստոսի կողմ

մէն հաստատուած ու ճշգրտած են : Խօսքի անկեղծութիւնը առաջին տեղը կը բռնէ : Երդու մի բոլոր ձեւերը կը վտարուին անկէ , քանի որ ճշմարտութեան իբրև ապացոյց անկեղծութիւնը փոխ կը տրուի : Այնուհետև կը դատապարտուին կարգ մը մոլութիւններ , որոնք պիտի կրնային անձնական յարաբերութիւններուն գոյութեանը վստահել , և վտանգել բուն իսկ անկեղծութիւնը : Այս դատապարտուածներու կարգէն է , ամբարտաւան միտքը կամ ամբարտաւանութիւնը , որ իբրև բրնարարումը բարոյական հաւասարութեան և բարոյական ազատութեանը անհատին , պիտի կրնար շուտով անհամաձայնութիւններու շարք մը ստեղծել յարաբերութիւններու շրջանակին մէջ . որովհետև ան պիտի մղէ անհատը ուրիշները դատելու և անոնց փոքր թերութիւնները քննադատելու : Կը պահտարակուին այն ամբոխումները , զոր մեր վարմունքը կրնայ ուրիշներու խղճին մէջ ծնցնել : Նոր կտակարանին մէջ ընդհանրապէս գայրակողորքիւն բառով նշանակուած են այդ ամբոխումները (*) : Եւ նոր բարոյականը մեծ ուշադրութիւն տուած է գայթակղական գործերու , որոնց յաճախակի կամ շարունակական գոյութիւնը կը վտանգէ Քրիստոնէական տիեզերական եղբայրութիւնը : Վերջապէս անձնական յարաբերութիւն-

(*) Գայթակղութիւն նշանակող յունական բառին բուն իմաստն է որոգայթ մը , ուր մտրդ ոտքէն կը բռնուի , արգելք՝ որ սայթաքել կուտայ :

ներու մէջ կ'արգելուին փոխադարձ թշնամութիւնները , սոսիւթիւնները , երկպառակութիւնները , վրէժխնդրութիւնները , և նոյն իսկ դատաւարութիւնները : Եւ ասոնց ամենուն տեղ կը դրուի չարին բարիով փոխանակելու նոր սկզբունքը :

Անձնական յարաբերութեան պատկանող բնագիւրները իրենց պարունակութիւնով , արդէն ըստ ամենայնի առատ են , նոյն իսկ կարենալ ինքզինքնին բացատրելու , և անհատներու պարտականութիւնները ցոյց տալու համար :

ՀՈՒՎՄ . ԺԲ . 10 . 18 . — Եղբայրասիրութեան մէջ իրարու մասին գորովալից եղէք . պատուելու մէջ զիրար գերազանցեցէք : — Կարելի եղածին չափ , ամէն մարդու հետ խաղաղութիւն ունեցէք :

ԵՓԵՍ . Գ . 1-3 . — Կաղաչեմ որ այնպէս քալէք , ինչպէս որ կը վայլէ այն կոչումին՝ որուն կոչուեցաք : Բոլոր խոնարհութիւնով , հեղութիւնով , երկայնատութեամբ և սիրով իրարու նետելով ու աշխատելով հօգիին միութիւնը պահպանել խաղաղութեան կապովը :

ԿՈՂ . Գ . 13 . Իրարու համբերելով և իրարու ներելով , եթէ մէկը ուրիշի մը դէմ տրտունջ մը ունենայ . ինչպէս որ Քրիստոս ձեզի ներեց , նոյնպէս ալ դուք :

ԵԲԲ . ԺԳ . 1-3 . — Պահեցէք միշտ եղբայրսիրութիւնը : Յիշեցէք կապուածները , իբր թէ դուք ալ անոնց հետ կապուած ըլլայիք , և չարչարուածները՝ իբրև ալ մարմինին մէջ ապրողներ :

Ա . ԿՈՐՆԹ . Ժ . 24 . — Չըլլայ որ մէկը միայն իր անձին օգուտը փնտռէ , այլ և ընկերինը :

Փիլիթ. Բ. 4. — Մինակ անձերնուդ շահը մի նա-
յիք, այլ ամէն ոք՝ իր ընկերինին ալ :

(Տես նաև Ա. ՊԵՏՐ. Գ. 8 Դ. 8. 10):

ՄՏԹ. Ե. 33-34. 37. — Լսեր էք թէ առաջիններ-
բուն ըսուեցաւ. սուտ մի՛ երդնուր, այլ ըրած երդում-
ներդ վճարէ Տիրոջ : Բայց ես ձեզի կ'ըսեմ ամենեւին
երդում մի՛ ընէք — այլ ձեր խօսքը ըլլայ, այո՛ն, այո՛,
և ո՛չն, ո՛չ, որովհետև ասկէ աւելին չարէն յառաջ
կուգայ :

(Տես նաև ՅԱԿ. Ե. 12):

ՄՏԹ. ԺԲ. 36-37. — Ձեզի կըսեմ, թէ մարդիկ
իրենց խօսած ամէն դատարկ խօսքի համար հաշիւ պիտի
տան դատաստանին օրը. — վասն զի քու խօսքերէդ
պիտի արդարանաս, և քու խօսքերովդ պիտի դատա-
պարտուիս :

ԵՓԵՍ. Գ. 25. — Ստուծիւնը մէկդի ձգելով, թող
ամէն մարդ իր ընկերին հետ ձյմարտութեամբ խօսի.
որովհետև մէկ մէկու անդամներ ենք մենք : — Ե. 4—
թող ձեր մէջը չիշուին գարշելի բաներ, կամ յիմարա-
կան խօսքեր, կամ խեղկատակութիւն, որ չվայլեր, այլ
մանաւանդ գոհութիւն :

ՅԱԿ. Գ. 2. 5-8. — Ամենքնիս ալ շատ յանցանք
կը գործենք, եթէ մէկը խօսքով յանցանք չգործեր,
անիկա կատարեալ մարդ է, որ կարող է բոլոր մարմինն
ալ սանձել : Լեզուն պզտիկ անդամ մըն է, ու մեծ բա-
ներ կը խօսի. ահա պզտիկ կրակը որչա՛փ բան կ'այրէ :
Լեզուն ալ կրակ մըն է, անիրաւութեան տիեզերք մը,
լեզուն մեր անդամներուն մէջ այնպէս դրուած է, որ
բոլոր մարմինը կ'ապականէ. մեր ամբողջ բնութիւնը կը
բռնկցնէ, որովհետև ինքն ալ դժոխքի կրակէն վառ-
ուած է : Բոլոր գաղաններուն և թռչուններուն և սո-
ղուններուն և ծովուն մէջ եղածներուն բնութիւնը կը
նուաճուի, և նուաճուած է մարդկային բնութիւնէն :

Բայց և ոչ մէկ մարդ կրցած է լեզուն նուաճել, անիկա
անդուսպ չար է, և մահաբեր թոյնով լեցուն :

Գ. 11. — Եղբայրներ, զիրար մի՛ բամբասէք, այն
որ իր եղբայրը կը բամբասէ, կամ իր եղբայրը կը դատէ,
օրէնքը կը բամբասէ և օրէնքը կը դատէ :

(Տես նաև Ա. ՊԵՏ. Բ. 1. Գ. 10):

ՂՈՒԿ. Զ. 37. — Մի՛ դատէք, ու չպիտի դատ-
ուիք, մի՛ դատապարտէք ու չպիտի դատապարտուիք :
Ներեցէք և ձեզի պիտի ներուի :

ՄՏԹ. Է. 3-5. Ինչո՞ւ քու եղբորդ աչքին մէջ
գտնուած շիւղը կը տեսնես, և քու աչքիդ մէջ գտնուած
գերանին չես նայիր. — կամ ինչպէ՞ս կրնաս ըսել եղ-
բորդ, թող տուր աչքիդ շիւղը հանեմ, մինչդեռ քու
աչքիդ մէջ գերան կայ : — Կեղծա՛ւոր, նախ քու աչք-
քէդ գերանը հանէ՛, և անիս ատեն պիտի տեսնես, թէ
ինչպէ՞ս պիտի կրնաս քու եղբորդ աչքէն շիւղը հանել :

ՄՏԹ. ԺԸ. 6. 7. — Եթէ մէկը ինծի հաւատացող
այս պղտիկներէն մէկը գայթակղեցնէ, լաւ է անոր վի-
զէն իշու աղացքի քար մը կախուի, և ծովուն անդունդը
նետուի : — Վա՛յ աշխարհին՝ գայթակղութիւններու
պատճառաւ, որովհետև պէտք է որ գայթակղութիւն-
ները գան, բայց վա՛յ անոր, որուն ձեռքով կուգայ
գայթակղութիւնը :

ՀՈՌՈՎՄ. ԺԳ. 13. — Զիրար չդատենք, աւելի
որոշեցէք միտքերնուդ մէջ, խոչ կամ գայթակղութիւն
չդնել եղբորը :

(Տես նաև ՄՏԹ. Է. 1. 3. ՄԲԿ. Թ. 41. ՂՈՒԿ.

Զ. 41-42. ԺԷ. 1. 2):

ՄՏԹ. Ե. 21-26. — Լսեր էք որ առաջիններուն
ըսուեցաւ. սպանութիւն մի՛ ըներ, և ով որ կը սպաննէ
պարտաւոր պիտի ըլլայ դատաստանին : Իսկ ես ձեզի
կ'ըսեմ. ո՛վ որ պարսպ տեղը իր եղբորը սրդողի, պար-
տաւոր պիտի ըլլայ դատաստանին : Եւ ով որ իր եղբորը

յիմար ըսէ, ատեանի պարտաւոր պիտի ըլլայ, և ով որ անմիտ ըսէ. գեհննի կրակին պարտաւոր պիտի ըլլայ:— Ուրեմն եթէ ընծադ սեղանին վրայ բերես, և հոն յիշես թէ քու եղբայրդ քեզի դէմ բան մը ունի, քու ընծադ հոն սեղանին առջև ձգէ, ու գնա նախ եղբորդ հետ հաշտուէ, ու ետքը եկուր քու ընծադ մատուցանելու: Քու ոսոխիդ հետ շուտով հաշտուէ, քանի որ դեռ ճամբան ես անոր հետ, որպէս զի մի գուցէ քու ոսոխդ զքեզ դատաւորին մատնէ, և դատաւորը՝ դահիճին, և բանտարկուիս: Ըշմարիտ կ'ըսեմ քեզի, անկէ բնաւ չպիտի ելլես, մինչև որ վերջին նագարակէտը վճարես:

ՀՌՈՎՄ. ԺԳ. 8. — Բնաւ մէկուն պարտական մի գտնուիք, բայց միայն մէկզմէկ սիրելու: ԺԲ. 17 — Չարութեան փոխարէն չարութիւն մի հատուցանէք:

(Տես նաև ՂՈՒԿ. ԺԲ. 58-59. Ա. ԹԵՍ. Ե. 15:)

III

Ա Ր Դ Ա Ր Ո Ւ Թ Ի Ն

Տիեզերական եղբայրութեան և բարոյական հաւասարութեան սկզբունքը նոր ընդլայնումներ կուտար արդարութեան օրէնքին, որ կոչուած էր ըլլալ ո՛չ միայն մարդկային ընդհանուր ընկերութեան ամենանուիրական կապը, այլ և իբրև գործնական ճշմարտութիւն, պիտի ըլլար կենդանացնող սնունդը, որուն պէտք պիտի ունենային շարունակ ժողովուրդներ: Ըշմարիտ արդարութիւնը, եթէ պէտք ըլլար բացատրել լայն իմաստով մը, պիտի ըսէինք թէ քարոյական ազատութիւն է այն, և ընկերական հաւասարութիւնը,

որոնց երկուքն ալ մարդերու կողմէն ճանչցուած են արդեամբ և իրաւամբ, քանի որ միեւնոյն իրաւունքն է որ կը վարէ ամէնքն ալ:

Պէտք է ըսել թէ արդարութիւնը 'ի հիման նորութիւն մը չէ Գրիստոնէական բարոյականին մէջ: Արդէն Հին Կտակարանը բաղմաթիւ հատուածներով ցոյց կուտայ մեզի արդարութեան գլխաւոր պայմանները, որոնք քարոզուած էին Իսրայէլի ժողովուրդին: Օրինակի համար այդ մատնանշուած հատուածներուն մէջ կ'ըսուի, թէ Աստուած աշառութիւն չընէր բնաւ, թէ իւրաքանչիւր մարդու կը հատուցանէ իր գործերուն համեմատ: Այսու հանդերձ Հինին քարոզած արդարութիւնը անհունապէս կը տարբերի նորին արդարութենէն, քանի որ արդարութեան գործադրութիւնը անոր մասին կազմուած ուղիղ կամ սրխալ սկզբունքներէն միայն կախումն ունէր: Արդ, Հին Կտակարանի Հրեայ մատենագիրները ճանչնալով հանդերձ Աստուծոյ անաշառութիւնը, և անոր վարձատրութեան բանաւոր կերպը, զանոնք Իսրայէլի ազգին միայն կը վերապահէին, և կ'ընդունէին միեւնոյն ժամանակ թէ վարձատրութիւնը կամ պատիժը կը հասնի արժանաւոր կամ յանցաւոր հօր մը բոլոր սերունդին: Յիսուս արդարութիւնը զերծեց Հրեայ ազգին տոհմային մենաշնորհի իր հանգամանքէն, և անով տիեզերական օրէնք մը շինեց, և սերունդներու շղթան քակելով, անհատը մատնանշեց իբրև իր գործին պա-

տասխանատուն : Ասով՝ շրջանակուած արդարութիւնը կը ձեռքազատուէր քմահաճոյքներու ազդեցութենէն , և կ'ըլլար ամէնուն բողձանքը , ամէնուն նպատակակէտը , և ամէնուն մտապատկերը : Ստոյգ է՝ որ Հին բարոյականը կը հրամայէր անհատներուն իրենց պարտքը կատարել , բայց այն ատեն խնդիր էր գիտնալ թէ ո՛վ ինչ կը պարտէր : Հին օրէնքին մէջ մէկու մը պարտական ըլլալը կատու մն ունէր տոհմէն , աստիճանէն , անհատներու հարստութենէն և բոլոր այն անհաւասարութիւններէն որոնք նուիրագործուած էին՝ նոյն այդ արդարութեան օրէնքով՝ գոյութիւն ունեցող վարչութիւններու կողմէն : Պոսիւէ կը գրէր թէ « իրաւունքի հակառակ իրաւունք չկայ » (il n'y a point de droit contre le droit) բայց հին բարոյականը արդարութեան սկզբունքին անհասկցողութիւնովը , արդարութեան մէջ տարբեր արդարութիւն մը ստեղծած էր , մարդկութեան բարոյական հաւատարութիւնը ու ազատութիւնը բռնաբարելով :

Կատարուած բռնաբարումին դէմ՝ մաքառումը անհրաժեշտ էր , ուրեմն , բուն արդարութիւնը՝ նոր օրէնքին արդարութիւնը՝ կտրենալ հաստատուելու համար : Նոյն ատենի տիրող քաղաքական և ընկերական հանգամանքը զօրաւոր պատճառ մըն էր անոր յամր զարգացումին , դանդաղ իրագործութեանը : Եւ տակաւին այսօր չենք կրնար որոշ կերպով ճշգրել , թէ արդարութեան այս նոր սկզբունքը ո՛րչափ կրցած է զարգանալ նոյն իսկ Քրիստոնէական հասարակութիւններու մէջ : Սա ստոյգ է միայն , թէ այդ Քրիստոնէական սկզբունքը դարերու ընթացքին մէջ եղաւ , ու պիտի ըլլայ միշտ , ընկերական վերակազմութեան ամենէն ուժով խմորներէն մէկը :

ՂՈՒԿ . Ի . 21 . — Փարիսեցիները հարցուցին Յիսուսի ըսելով . վարդապետ , գիտենք որ շիտակ կը խօսիս և կը սորվեցնես , և աչառութիւն չես ընեն :

ՀՈՒՎՄ . Բ . 10 . 11 . — Փառք , պատիւ , խաղաղութիւն ամէն անոնց , որոնք բարիք կը գործեն , նախ Հրեային և յետոյ հեթանոսին : — Ինչու որ Աստուծոյ քով աչառութիւն չկայ :

ԵՓԵՍ . Զ . Ծ . — Գիտնալով որ ամէն մէկը , ըլլա ծառայ (= գերի) թէ ազատ , ինչ որ բարիք ընէ , նոյնը Տիրոջմէն պիտի ընդունի :

ՅՍԿ . Բ . 1-4 . 9 . — Իմ եղբայրներս , չըլլայ որ մէկուն աչառութիւն ընէք . — Որովհետեւ , եթէ ձեր ժողովքին մէջ մէկը մտնելու ըլլայ , ու ոսկի մատանի և փառաւոր հանդերձներ ունենայ , և եթէ հոն ազտոտ զգեստներով աղքատ մըն ալ մտնելու ըլլայ , և փառաւոր հանդերձ ունեցողին վրայ նայիք ու ըսէք , թէ , դուն հող նստէ պատուով , և այն աղքատին ըսէք , թէ , դուն հող ոտքի վրայ կանգնէ , կամ թէ , եկուր պատուանդանիս քով նստէ . — ձեր մէջ խտրութիւններ ընող և չար խորհուրդներու դատաւոր չէ՞ք ըլլար : — Եթէ աչառութիւն ընէք , մեղք կը գործէք , ու օրէնքէն կը յանդիմանուինք իբրև օրինազանցներ :

(Տես նաև ՄՏԱ . ԻԲ . 16 . ԳՍՂ . Բ . 6 . Ա . ՊԵՏ . Ա . 17) :

ՄՏԹ . ԻԶ . 27 . — Մարդուն որդին իր հօրը փառքովը պիտի գայ իր հրեշտակներուն հետ , և այն ատեն ամէն մէկուն իր գործերուն համեմատ հատուցում պիտի ընէ :

ՀՌՌՎՄ. Բ. 6. — Աստուծոյ արդար դատաստանը ամէն մէկուն իր գործքերուն փոխարէնը պիտի հատուցանէ :

Ա. ԿՈՐՆԹ. Գ. 8. — Ամէն մէկը իր աշխատութեան վարձքը պիտի առնէ իր աշխատութեան չափովը : (Տես նաև Բ. ԿՈՐՆԹ. Ե. 10) :

ՄՏԹ. Է. 2. — Ինչ դատաստանով որ դատէք, անով պիտի դատուիք, և ինչ չափով որ չափէք, նոյն չափով պիտի չափուի ձեզի :

ՂՈՒԿ. Զ. 38. — Տուէք ու ձեզի պիտի տրուի, աղէկ չափով, կոխուած՝ ցնցուած, առլի պիտի տրուի ձեր գոգը, որովհետև ձեր չափած չափովը ձեզի պիտի չափուի :

(Տես նաև ՄՐԿ. Դ. 24) :

ՂՈՒԿ. ԺԱ. 46. — Յիսուս ըսաւ. վա՛յ ձեզ օրինականներու որ դժուարակիր բեռներ կը բեռցնէք մարդոց և դուք մէկ մատովնիդ անգամ այն բեռներուն չէք դաշխիր :

Ա. ԿՈՐՆԹ. Զ. 9. — Չէք գիտեր թէ անիրաււները չպիտի ժառանգեն Աստուծոյ արքայութիւնը :

Ա. ԹԵՍ. Դ. 6. — Չըլլայ որ մէկը չափը անցնի, ու իր եղբայրը զրկէ, որովհետև տէրը այդ բոլոր բաներուն համար վրէժխնդիր է :

Ե.

ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ

Հին աշխարհին մէջ ամուսնութիւնը չափազանց տարօրինակ երեւոյթներ կը ցուցադրէ : Այդ բոլոր տարօրինակութիւններուն մէջ, սակայն, ուր յարիշտակութեամբ ու զնորանով ամուսնութիւններն անգամ օրինաւոր կը նկատուէին, և կը նուիրագործուէին ամուսնութեան արարողութիւնով. սա ստոյգ է թէ, նոյն իսկ հեթանոս աշխարհը — Հռովմ և Յունաստան — ամուսնութեան մէջ կը տեսնէր տեսակ մը կրօնական գործ, որովհետև նախնեաց պաշտամունքին հետ կապուած էր անմիջապէս : Այս պատճառով, անոնց հին մատենագրութեան մէջ, ամուսնութիւնը փոխանակ իր սովորական բառով γάμος կոչուելու պարզապէս, նշանակուած է յաճախ πέλός բառով, որ կը նշանակէ « սրբազան արարողութիւն (*) » : Ինչպէս դիտել կը տրուի ամուսնութեան այդ կրօնական արարողութիւնը չէր կատարուեր ո՛չ մեհանին մէջ և ո՛չ ալ հասարակաց գերագոյն Աստուծոյն անունով, այլ ընտանեկան վառարանին մօտ, և ընտանեկան աստուածներուն անունով : Այդ հին

(*) Ընկերվարականներու կողմէն քարոզուած «ազատ սիրոյ» և անոր աղետարեր հանգամանքին մասին խօսուած է մեր «Ընկերվարութիւն և Հայ ընկերվարականներ» գործին մէջ :

ընտանիքներու մէջ, հոյլ մը անկարեւոր պատճառներու մէջ, ամուլթիւնը անհրաժեշտ պայման մըն էր ամուսնալուծութեան : Ե. էրկան գերակշռութիւնը ընտանիքին շեշտուած կողմը կը մնար :

Նմանապէս Հին Ուխտի պատմութեան մէջ ամուսնութիւնը նուիրական բան մը նկատուած է, և ասոր ծագումը կ'ընծայուի Աստուծոյ (Ծննդ. Բ. 19-24) : Բայց հակառակ այդ ծագումին, ամուսնութիւնը գրեթէ գնումով տեղի կ'ունենար (Ծննդ. 1Ա. 15 1Գ. 12. Եղբ. ԺԲ. 16-17) : Բաղմակնութիւնը յաճախադէպ իրողութիւն մըն է, և գրեթէ հրամայուած մասնաւոր սեղմումներով : (Եղբ. ԺԱ. 7-11) : Հոն կարելի եղածին չափ խնամք կը տարուի պահպանելու համար ամուսնական կեանքի մաքրութիւնը, կամ նոր բառով սրբութիւնը և կը պատժուի ամուսնական անհաւատարմութիւնը (ՂեւՏ. ԺԹ. 20. Ի. 10) : Հոս կամայ կամայ ըմբռնումները կը փոխուին, և կինը ամուսնական կեանքին մէջ աղախիկի հանգամանքը կ'որսրնցնելով իր ամուսինին օգնակաւոր կ'ըլլայ . բայց էական գերիշխանութիւնը կը մնայ շարունակ : Ամուսնալուծումը գոյութիւն ունի միշտ, ամուլթեան և շնութեան իբրև հետեւանք, բայց կան նաև հազուադէպ իրողութիւններ, ուր ամուլ կիներ կապուած կը մնան իրենց ամուսիններուն : Սամուէլի և Յովհաննէս Մկրտիչի ծնողաց պատմութիւնը երկու ամենէն մեծ վկայութիւններն են ամուլ կենակցութիւններու :

Քրիստոնէութիւնը, ամուսնական կեանքին վերաբերմամբ, կ'առնու Հինէն ինչ որ կայ մաքուր և նպատակայարմար, և բոլորովին նոր ընդլայնումով մը ամուսնութեան կուտայ անոր նուիրական դրոշմը : Յիսուս կը բողոքէ բարքերու թուլացումին դէմ, որուն հետեւանքը եղած էր կամայական ապահարգանք : Իր շուրջը տիրող հեթանոսական բարքերու գուեհկութեան մէջ կնոջ ստորնացումը, կատարուած իրողութիւն մըն էր այլեւս : Պէտք էր փրկանաւորել կինը, ընտանիքը կարենալ դնելու համար նոր ուսուցումին բոլորովին նպատակայարմար կուսանի մը վրայ : Որովհետև ընտանիքին փրկանաւորումէն կախումն ունէր մարդկային ընկերութեան ալ փրկանաւորումը : « Ընկերութիւնը ընդլայնումն է ընտանիքին . եթէ մարդ իր ընտանիքէն ապականուած դուրս ելլէ, անիկա ապականուած պիտի մտնէ քաղաքին մէջ : » Հետեւաբար Յիսուս և իր առաքեալները ճշգեցին կնոջ դիրքը ընտանիքին մէջ, շեշտելով էրկան և կնկան բարոյական հաւասարութեան սկզբունքը, ամուսիններու փոխադարձ սէրը, ամուսնացած կնոջ գերազանցապէս պատուաւոր դիրքը, ամուսնութեան անքակտելիութիւնը, և սիրոյ պարտքը, որ այսպէս ըմբռնուած ամուսնական կեանքի մը կամ ընտանիքին մէջ, գոյութիւն պիտի ունենար ծնողաց և որդիի յարաբերութիւններուն միջև : Քրիստոնէութիւնն էր, ուրեմն, որ կատարելագործեց ամուսնութիւնը և ընտանեկան կեանքը, ընկերա-

կան բարոյական վերակազմութեան իբրև անկիւնաքարը նկատելով ընտանիքին բարւոք վերակազմութիւնը :

Որովհետև ասիէ առաջ արդէն յառաջ բերած ենք երկու սեռերուն հաւասարութիւնը նուիրագործող հատուածները, թողունք որ Աւետարանը և առաքեալները խօսին ամուսնական և ընտանեկան կեանքի նոր կազմակերպութեանը վրայ, չմոռնարով միեւնոյն ժամանակ յայտարարել, թէ զանց պիտի ընենք այն հատուածները, որոնք առաքելական դարու սովորոյթներուն և յարմարութիւններուն կը վերաբերէին, և հետեւաբար սեւէ յարաբերութիւն չունի արդի կեանքին հետ :

ՄՏԹ. ԺԹ. 3-9. — Փարիսեցիները Յիսուսի կըսէին. արժան է, որ մարդ իր կինը արձակէ ամէն պատճառի համար : — Անիկա ալ պատասխան տուաւ. չէ՞ք կարդացեր, թէ այն որ կանուխէն ստեղծեց, արու և էգ ստեղծեց զանոնք և ըսաւ : Այս պատճառաւ մարդ հայրն ու մայրը պէտք է թողու և իր կնոջ ետեւէն երթայ, և երկուքը մէկ մարմին պէտք է ըլլան : — Ուստի ալ երկուք չեն, այլ մէկ մարմին, ուրեմն Աստուծոյ միաւորածը պէտք չէ որ մէկը զատէ : Անոնք ըսին Յիսուսի : Ուրեմն ինչո՞ւ Մովսէս պատուիրեց արձակման թուղթ տալ և արձակել : — Ըսաւ անոնց. Մովսէս ձեր կարծրասրտութեան համար ձեզի հրաման տուաւ կնիկնիդ արձակել, բայց սկիզբէն այդպէս չեղաւ. ձեզի կ'ըսեմ. ո՛վ որ առանց պոռնկութեան պատճառի իր կինը արձակէ և ուրիշ մը առնէ, շնութիւն կ'ընէ, և ով որ արձակուածը առնէ, շնութիւն կ'ընէ :

ՄՏԹ. Ե. 27. 28. — Լսեր էք որ ըսուեցար, շնութիւն մի՛ ըներ, բայց ես ձեզի կ'ըսեմ, թէ ով որ կնոջ կը նայի անոր ցանկալու մտօք, ալ անիկա իր սիրտին մէջ չարութիւն ըրաւ անոր հետ(*) :

(Տես նաև ՄՏԹ. Ե. 31. 32. ՄՐԿ. Ժ. 2-12) :

Ա. ԿՈՐ. Է. 3. 10-11. — Էրիկը իր կնկան թող պարտքը վճարէ, նոյնպէս կնիկն ալ իր էրկանը : — Ամուսնացածներուն կը պատուիրեմ, ո՛չ թէ ես, այլ՝ Տէրը, որ կնիկը էրիկէն չզատուի. իսկ եթէ զատուի, առանց ամուսնանալու մնայ, կամ իր էրկանը հետ հաշտուի, ու էրիկը իր կինը թող չձգէ :

ԵՔԲ. ԺԳ. 4. — Ամուսնութիւնը բոլորովին պատուական է, և անկողինը՝ սուրբ : Բայց պոռնիկները ու չնացողները Աստուած պիտի դատէ :

(Տես նաև Ա. ԿՈՐՆԹ. Է. 4. 5) :

ԵՓԵՍ. Ե. 22-25, 28. 31. 33. — Պէտք է որ կիները հնազանդ ըլլան իրենց էրիկներուն որպէս թէ Տիրոջը, որովհետև էրիկը գլուխն է կնոջ. ինչպէս որ Քրիստոս գլուխն է եկեղեցիին, ու ինքը մարմինին փրկիչն է, ինչպէս որ Եկեղեցին հնազանդ կ'ըլլայ Քրիստոսի, այնպէս ալ կիները՝ իրենց էրիկներուն, ամէն բանի մէջ : — Բայց էրիկներ, սիրեցէ՛ք ձեր կիները, ինչպէս որ Քրիստոս ալ Եկեղեցին սիրեց, և իր անձը մասնեց անոր համար : Նոյնպէս ալ պէտք է որ էրիկները իրենց

(*) Չինական հին գրականութեան մէջ ալ արտայայտուած է պարկեշտութեան վերաբերեալ միեւնոյն ըմբռնումը : Վառարանի ոգին այսպէս կը յանդիման՞ իու-Քոնկը. «... Արդարև անպարկեշտ գործ մը կատարած չես, բայց երբ կը տեսնես գեղանի կին մը, ուրիշի մը տուն մէջ՝ աչերովդ կը լստիես զանի. ամբոխում մը կ'այլայլէ զքեզ յանկարծ, և դուն չես կրնար դուրս վանել զայն բու մտածութիւններդ : Այդ վայրկեանէն շնութիւն մը գործեցիր սրտիդ խորը, Թէպէտև ո՛չ արդեամբ» (Գիրք Վարձուց և Պատճոյ) :

կինները սիրեն իբր իրենց մարմինները. ան որ իր կինը կը սիրէ, իր անձը կը սիրէ: Ասոր համար, մարդ պէտք է ձգէ իր հայրն ու մայրը, և իր կնոջ ետեւէն երթայ, և երկուքը մէկ մարմին պէտք է ըլլան: — Թող ձեզմէ ամէն մէկը իր կինը այնպէս սիրէ, իբր թէ իր անձը, և կինը թող իր էրիկէն ակնածի:

Ա. ՊԵՏ. Գ. 1-4. 7. — Թող կիները հնազանդ ըլլան իրենց էրիկներուն, որպէս զի եթէ կան ոմանք, որ խօսքին հաւատք չեն ընծայեր, առանց խօսքի շահուին իրենց կիններուն վարմունքովը ու տեսնելով անոնց երկիւղած, պարկեշտ վարքը: Իրենց զարդարանքը թող արտաքին չըլլայ, մազերու հիւսուածքով, ոսկիներու շարքով, կամ զգեստներու շքեղութիւնով: Այլ թող ըլլայ ներքին, մարդուն սիրտին մէջ, խաղութեան և քաղցրութեան հոգիի մը անեղծ մաքրութեանը մէջ, որ խիստ պատուական է Աստուծոյ առջև: Նմանապէս էրիկները, խոհեմութիւնով ապրին իրենց կիներուն հետ, իբր տկար անօթի պատիւ տալով կիններուն, իբր կենաց շնորհքին ժառանգակիցներու:

(Տես նաև Ա. ԿՈՐՆԹ. ԺԱ. 3. ԿՈՂ. Գ. 18-19. Ա. ՏԻՄ. Բ. 9. 10. ՏԻՏ. Բ. 4. 5):

ՄՐԿ. Ժ. 14. — Թողէք, որ այդ փոքր տղաքը ինծի գան, և մի՛ արգիլէք զանոնք, որովհետև Աստուծոյ Թագաւորութիւնը այդպիսիներուն է:

ՄՐԿ. Թ. 36. — Ով որ այդպիսի տղոցմէն մէկը ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի. և ով որ զիս կ'ընդունի, ո՛չ թէ զիս այլ զիս զրկողը ընդունած կ'ըլլայ:

(Տես նաև ՄՏԹ. ԺԸ. 1-5 ԺԹ. 13. 15. ԴՈՒԿ. Թ. 45. ԺԸ. 15-17):

ԵՓԵՍ. Զ. 14. — Ո՛րդիներ, ձեր ծնողքին հնազանդ եղիք Տիրոջմով, որովհետև այս է արժանը: — Պատուէ հայրդ ու մայրդ. այս է առաջին պատուիրանը

որ եղած է սա խոստումով, «որպէս զի աղէկ ըլլայ քեզի, և երկար ապրիս երկրի վրայ» Եւ դուք, հայրեր, մի՛ բարկացնէք ձեր որդիները, այլ զանոնք օրովը վարժութիւնովը ու խրատովը մեծցուցէք:

Ա. ՏԻՄ. Ե. 8. — Երբ մէկը իրեններուն և մանաւանդ իր ընտանիքին հոգ չի տանիր, անիկա հաւատուրայ մըն է, և աւելի գէշ է քան անհաւատ մը: (Տես նաև ԿՈՂ. Գ. 20. 21):

Ը.

ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական բարոյականը, իբրև ամբողջական լաւ և հեռատեսօրէն մտածուած գրութիւն, ապահովաբար իրմէն չախտի կրնար արտաքսել ընկերական անտեսագիտական հարցերը, որոնք կը խօսէին հարստութեան բաշխումին և աշխատութեան կատարած գերին վրայ: Որովհետև այս հարցերուն մէջն է աւելի, որ ի յայտ կուգայ բարի և չարի օրէնքը, իր գործնական ընդհանրութեանը մէջ, և արդարութիւնը, որ պիտի գիմաղբէ հարստութեան բաշխումին և գործաւորական խնդիրներու մէջ գործուած անիրաւութեան: Նոյն ժամանակի սիրող կացութիւնը, ըստ որում գործաւորներուն մեծազոյն մասը գերիներէ կը բաղկանար, և տիրող ընկերական հանգամանքները ամենազօրաւոր պատճառներ էին, որպէս զի

սկզբունքները միայն հաստատուէին այս շատ կարևոր հարցին, թողլով որ ապագան արդիւնաւորէր զանոնք ընկերական խաղաղ յառաջդիմութիւններով: Խնդիր է գիտնալ, թէ այդ սկզբունքները ցարդ ինչ համեմատութիւնով կրցին գործնականանալ: Համառօտ բայց ճշգրիտ հայեացք մը աշխարհի տնտեսական պատմութեան վրայ, երեւան պիտի բերէ սա պարագան, թէ մինչև հիմա Քրիստոնէական բարոյականին իրականացումին մէջ, ընկերական յարաբերութիւններէն տնտեսականին վերաբերածները շատ նուազ համեմատութեամբ ազդուած են Քրիստոնէական ոգիէն: Եւ արդի քաղաքակրթութեան գերազանցապէս աչքառու զարգացումին մէջ, հազիւ թէ սկսած է զգալի ըլլալ այս դեռնին վրայ, Քրիստոնէութեան յառաջդիմական գործը: Կարելի է նոյն իսկ ըսել թէ, արդի տնտեսական կազմակերպութեան ընդհանուր հիմերը միեւնոյնը մնացած են դասական հնութեան տնտեսական հիմերուն հետ, որոնք եղած են և են, անհատական, կալուածական և շարժական ստացութիւնը, լաւ կամ գէշ գործածելու իրաւունքով, միմիայն մատուցումով և խնդրանքով կանոնաւորուած արտադրութիւնն ու փոխանակութիւնը, և ընկերական ամէն նախատեսութենէ դուրս, աշխատութեան արդիւնքին բաժանումը ընդ մէջ գործարանատիրոջ և աշխատաւորին, վերջապէս, ժառանգութիւնը իբրև էական կարգկանոն ստացուածքի փոխանցումին: Եւ ասոնց ա-

մէնքը հազիւ թէ աննշան յեղանակաւորումներ կրած են դարերու ընթացքին մէջ, զանազան ազգերու և աշխարհներու տեղական ու ցեղային պահանջներուն համաձայն: Իրերու սա վիճակէն առաջ եկած անիրաւութիւնը ընկերական անհաւասարութիւնը չէ բնաւ, ինչպէս կ'ուզեն հաստատել ընկերվարականները. որովհետև ընկերական այդ վիճակը անհրաժեշտ հետեւանքն է բնական և մարդկային օրէնքին: Անիրաւութիւնը սա է միայն որ գործաւորը իր գործին համեմատ չէ վարձատրուած, թէ արդիւնքներու մեծադոյն մասը կը սպառեն անգործները, որոնք ո՛չ մէկ կերպով նպաստած են արտադրութեան, թէ՛ հարստութիւնները կը դիզուին փոքրաթիւ մարդերու մօտ, անոնց յիւսիս կամ հաճոյքին ծառայելու համար, մինչ աղքատութիւնը — չըսեսք թշուառութիւնը — բաժինն է ստուար մեծամասնութեան:

Այս կարգադրութիւնով կազմակերպուած ընկերութեան մը մէջ, առաջին գործը զոր կրնային ընել Յիսուս և առաքեալները, սա էր թէ, պէտք էր ցոյց տալ չարիքը և համարձակութիւնը ունեննալ զայն նշաւակելու. պէտք էր դատապարտել ճշգրիտ բառերով ու համարձակ, հարստութիւններու ընչաքաղց կուտակումը և անզբաղ, մակարոյծ վայելումները: Եւ Աւետարանին հիմնադիրները ըրին այդ բաները այնպիսի ուժով շեշտելով, որոնք այլ եւս տեղի չեն թողուր ընկերական բարեկարգութիւններու արդի կուսա-

կիցներուն ամենէն կենդանի բացատրութիւններուն : Բայց անոնք — Յիսուս և առաքեալները — չէին կրնար սկզբունքին հեռաւոր և մեծ նպատակը վտանգել, բուն իսկ սկզբնաւորութեանը պահուն , պէտք էր կամ ներկան զօհել և կամ ապագան : Բայց Յիսուսի համար ներկան կարեւորութիւն ունէր , միայն անոր համար , որ ներկան իր սանդխամաս պիտի ծառայէր ապագայի մեծ գործին : Ուրեմն պէտք էր ներկայի թշուառութիւնները ամօքել թմրագեղերով միայն , և զանի հրամցուցին մարդկութեան : Բայց երբ Յիսուս իրեն աչակերտել ուղղներուն խորհուրդ կուտար , որ իրենց ինչքերը ծախեն և անոնց գինը բաժնեն աղքատներուն , գիտէր , թէ այդ օրինակ անձնուիրութեան գործեր , սրչափ ալ բազմաթիւ ըլլային , տակաւին չպիտի կրնային փոխել ընկերութեան անտեսական կացութիւնը : Անիրաւութիւնը միշտ անիրաւութիւն պիտի մնար , թէ իսկ ողորմութիւններ տրուէին , երբ գործաւորը իր աշխատութեան չափովը չվարձատրուի , և երբ անոնց քրտինքի արդիւնքի մեծ մասը վայելին անգործները :

Մեր դարը ընկերական խնդիրներու մեծ դարը եղաւ : Ամենէն աւելի մեր օրերուն է որ կը յուզուի ընկերական խնդիրը ընկերվարութեան (Socialisme) տարբեր դրութիւններու և անտեսագէտներու կողմէն : Հակառակ այն մարդասէր ձայներուն , որոնք իրենց քուէն ստին ի նպատակ անժառանգներու և զրկեալներու դատին , դրտ-

նուեցան մարդիկ , որոնք Տարուինական իմաստասիրութեան վրայ յենով , անկարողներուն և թըռուաւներուն օգնելու սկզբունքը աննարդախայեղ հռչակեցին , և ճակատագրականութեան նմանող laisser-faire ի վարդապետութեան ապաստանած , պնդեցին որ « տեսակին կատարելագործման անգութ բայց տրդար օրէնքը » իր դերը կատարէ նաև մարդկութեան այն անհատներուն համար , որոնք ծոյլեր , ապուշներ ու հետեւաբար զրկեալներ եղած են : Այս վարդապետութիւնը , ինչպէս կը տեսնուի , այս օգտախնդիր նիւթապաշտութիւնը , ուժերու մրցումին իր մարդատեսաց սկզբունքով կը դիմէ ծայրայեղութեան , ուրանալով իւրաքանչիւր մարդու անհատականութիւնը , — որչափ ալ աննշան ըլլայ այն , տակաւին չի դադրիր անհատականութիւն մը ըլլալէ :

Այս չափազանցութիւնը , ուրիշ չափազանցութեան մը կը բաղխէր ուժգնօրէն , և այդ չափազանցութիւնը սխալ ըմբռնուած ու սխալ վարդապետուած ընկերվարութիւնը ստեղծեց , պահանջելով հարստութեան , ստացուածքի , վայելքի և նեղութեան բացարձակ և անպայման հաւասարութիւն մը : Բարոյական հաւասարութեան (Տես Գլ Ե. II) հանուած սխալ եզրակացութիւն մըն էր , պարզապէս ընկերվարութեան այդ պահանջումը , որ միեւնոյն ժամանակ տրամաբանական ըլլալէ շատ հեռի կը դառնուի : Բարոյական հաւասարութեան և բարոյական ազատութեան սկզբունքները

իրենց գոյութիւնը կրնան պահպանել հոգեկան շրջանակի մը մէջ միայն, առանց իրարու գոյութեան վնասելու: Բայց երբ այդ երկու սկզբունքները նիւթականացնենք, պիտի տեսնենք անմիջապէս, որ մէկուն պաշտպանութիւնով միւսին գոյութիւնը վտանգած պիտի ըլլանք, որովհետեւ եթէ մարդիկ — իւրաքանչիւրը իր հաշոյն — ազատ են, ապա ուրեմն ամէն մարդ այդ ազատութենէն պիտի օգտուի, իր ընդունակութիւններուն և իր ուժերուն համեմատութեամբ. և որովհետեւ ամէն մարդ միեւնոյն ընդունակութիւնը և միեւնոյն ուժը չունի, իւրաքանչիւրին ծնցուցած արդիւնքը նիւթական անհաւասարութիւն մը պիտի ստեղծէ մարդկութեան մէջ: Միւս կողմէն, եթէ ուզուի նիւթական հաւասարութիւն մը ստեղծել մարդկութեան մէջ, ատով իսկ զլացած պիտի ըլլանք անհատներուն իրենց ազատութիւնը, և հասարակական ստրուկ եղբայրութեան մէջ սահմանափակելով անհատներուն գծուած պաշտօնները և պարտաւորութիւնները, ջնջած պիտի ըլլանք անհատական ձեռներէցութեան ոգին, մրցումի եռանդը, և յաւիտենական միօրինակութեան մը ձանձրացնող շրջանակին մէջ խեղդած՝ մարդկային յառաջդիմական բոլոր տենչանքները (*): Եւ հարկէ աւել-

(*) «Ընկերակրականները շատ լու գիտնն Թէ հարստութեան մէջ հաւասարութիւնը պիտի չկրնան իրագործել, բայց կը յուսան գէթ այդ հաւասարութիւնը ստեղծել օղբատուութեան մէջ» (Կիւսմով լը Պօն), անշուշտ հարուստներն ալ գրկելով իրենց հարստութենէն:

ցնել, թէ ատով քաջալերած պիտի չըլլանք ծոյլ կեանքի մը բոլոր մեղկութիւնները, և այսօր որ մենք կը բողոքենք անտեսական կեանքի մէջ գործուած անիրաւութիւններուն դէմ, և կը բարկանանք այն սակաւթիւ անհատներուն դէմ, որոնք դրամ կը դիզեն առանց մեծ բաժին մը ունենալու արտադրութեան գործին մէջ, նիւթական հաւասարութեան սկզբունքով այդ օրինակ մակաբոյժներու ահաւոր թիւ մը պիտի տանք ընկերութեան: Աշխատութեան՝ և աշխատութեան արդար վարձատրութեան սկզբունքն է, զոր կը պաշտպանէ Քրիստոնէական բարոյականը: Գործաւորին կեանքը ատով միայն կրնայ բարեփոխուիլ, և ատով միայն արդար դատի մը պաշտպանը հանդիսացած կ'ըլլայ ընկերակրականութիւնը, « Ով որ կ'աշխատի համոզել գործաւորը, եթէ աշխատութենէն և խնայութենէն սարբեր բանով մը կրնայ հարստութեան հասնիլ կամ բախտ չիներ, անիկա ստախօս է և ոճրագործ » կ'ըսէ Փրանքլին: Աշխատութեան ոգին, որ այնքան կորով ներշնչած է, ու այնքան գեղեցկութիւն շուայած է տիեզերքին, պէտք է քաջալերել միշտ, ջանալով միեւնոյն ժամանակ արդարութիւն մը դնել տալ գործաւորական կեանքի վճարումներուն մէջ. և տալով գործաւորին հարկաւոր և անհրաժեշտ ժամանակը, իր սպառած ուժերը վերագտնելու: Արդէն մեր նախորդ հատուածներէն միոյն մէջ (Գլ. Բ. III. Մտթ. Ի. 1-16) ցոյց տուինք Աւետարանական առած մը,

որուն համեմատ գործաւորական կեանքը, հետզհետէ պիտի բարեփոխուի, և առանց նիւթական զրկումի ենթարկուելու, ան աւելի արամադրելի ժամանակ պիտի ունենայ իր անհրաժեշտ հաճոյքին և հանգիստին համար: Աշխատիլ պէտք է միայն (*): Ս. Պօլրոսի ըմբռնումով, միայն աշխատութիւնը մարդուս իրաւունք կուտայ մասնակցելու հողագործական, ճարտարութեամբական և վաճառականական արտադրութիւններուն: Սուաբեալը այս մասին իր միտքը բացատրելու ատեն պատուէրներով չգոհացաւ, ինքն իսկ ամէն տեղ աշխատեցաւ իր խորանակարի արուեստով, ո՛չ թէ անոր համար, որ ուրիշ կերպով չէր կրնար ապրիլ, այլ որովհետև կ'ուզէր իր սկզբունքին աւելի ուժ տալ, անձնական օրինակով իր եղբայրները

(*) Բնկերական խնդիրները ընկերվարութեամբ լուծելու ձեռնարկը մարդկային ընկերութիւնը բիրտ ոյժի մը ենթարկելու, կամ մէկ խօսքով անիշխանականութեան մղելու կոչումը ունի: Բնկերվարութիւնը, հակառակ բողոք. տնտեսութեան (économie politique), շեղելով իրբու ընական ճամբէն, կը ջանայ ստեղծել՝ արուեստական միջոցներով՝ վիճակ մը, ուրկէ իբր Թէ մարդկային Թշուառութիւնը և ընկերական տնտեսական բոլոր դժուարութիւնները արտօքուած պիտի ըլլան: Չենք ըսեր, Թէ արուեստական միջոցները, յաջողելու որքան հաւանականութիւն կրնան ունենալ ընական օրէնքներու յաղթելու իրենց երեւակայական ջանքին մէջ. բայց չենք կրնար ըմբռնել, Թէ ազատ մրցակցութեան ոգիէն զրկուած մարդկութիւն մը, իրենց ազատութենէն զրկուած անհատներ ինչպէս պիտի կրնան ինքզինքնին երջանիկ զգալ, այդ արուեստական բռնապետութեան լուծին տակ: Որովհետև ընկերվարութիւնը կամ աստուածայնական բացարձակ բռնապետութիւն մըն է (saint-simonisme), և կամ ժուլուքեան և ժպրնութեան (licence) ծնուցիչ կասարեալ ակիշխանութիւն մը (Fourrierisme):

աշխատութեան դրդելով: Երբ աշխատութեան շնորհիւ, աշխատողին և վճարողին միջև կը կազմուի արդար համերաշխութիւնը այն ատեն, « խոնարհ եղբայրը թող իր բարձրութեան վրայ պարծենայ, և ան որ հարուստ է, իր խոնարհութեանը վրայ: » (Յակ. Ա. 9-10:)

Z U P U S N I Թ Ի Ի Ն

ՄՏԹ. Զ. 24. — Չէք կրնար ծառայել Աստուծոյ և Մամոնային:

ՄԲԿ. Ժ. 23-27. — Յիսուս իր շուրջը նայելով, ըսաւ իր աշակերտներուն, ո՛րչափ դժուար է հարստութիւն ունեցողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: Աշակերտները զարմացած էին անոր այս խօսքերուն վրայ. բայց Յիսուս նորէն ըսաւ անոնց. որչափ դժուար է իրենց հարստութեանը յուսացողներուն Աստուծոյ թագաւորութիւնը մտնել: — Աւելի դիւրին է, որ ուղար ասեղին ծակէն անցնի, քան թէ հարուստը Աստուծոյ թագաւորութիւնը մտնէ: Աշակերտները խիստ շատ զարմացած՝ կ'ըսէին իրարու. ալ ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ: Բայց Յիսուս անոնց նայելով ըսաւ. ասիկա մարդոց համար անկարելի է, բայց ո՛չ Աստուծոյ համար, որովհետև Աստուծոյ համար ամէն բան կարելի է:

ՂՈՒԿ. Զ. 24. 25. — Վայ ձեզ հարուստներ, ինչու որ առած էք ձեր մխիթարութիւնը, վայ ձեզ, որ կուշտ էք, ինչու որ պիտի անօթենաք. վայ ձեզ, որ հիմա կը ծիծաղիք, ինչու որ պիտի սգաք և լաք:

ԺԲ. 16-21. — Յիսուս առակ մըն ալ խօսեցաւ անոնց: Հարուստի մը արտերը առատ բերք տուին. — և ինքը ինքնիրեն կը մտածէր ու կ'ըսէր. ինչպէ՞ս ընեմ, որովհետև տեղ չունիմ, ուր իմ բերքերս ժողվեմ: Եւ

ըսաւ. ահա՛ թէ ի՛նչ պիտի ընեմ, կը վախեմ ամբարներս
 և աւելի մեծը կը շինեմ, և հոն կը ժողվեմ իմ բոլոր
 բերքերս ու բարիքներս. — և ես ինձի կ'ըսեմ. ով իմ
 անձս, շատ տարիներու համար ժողվուած շատ մը բա-
 րիքներ ունիս, հանգչէ՛, կեր, խմէ՛ և ուրախ եղիր: —
 Բայց Աստուած ըսաւ տնոր. անմիտ այս զիշեր հոգիդ
 քեզմէ պիտի պահանջուի. որո՞ւ պիտի մնան այդ քու
 պատրաստածներդ: — Այսպէս պիտի ըլլայ անոր, որ իր
 անձին համար հարստութիւն կը դիզէ, ու Աստուծոյ չի
 հարստանար:

Ժ.Ձ. 19-25. — Հարուստ մը կար որ ծիրանի ու
 բենիզ կը հագնէր և ամէն օր փառաւորապէս կ'ուրա-
 խանար: Ու Ղազարոս անուշով աղքատ մըն ալ կար,
 անոր դրանը առջև նստած՝ վէրքերով լեցուն ու որ կը
 փափաքէր հարուստին սեղանէն ինկած փշրանքներովը
 իր փորը կշտացնել. և շուները կուգային ու իր վէրքերը
 կը լիզէին: Եղաւ որ աղքատը մեռաւ, և հրեշաակները
 Աքրահամու գիրկը տարին զանիկա: Հարուստն ալ մե-
 ռաւ ու թաղուեցաւ: — Եւ դժօխքին մէջ երբ կը տան-
 ջուէր, իր աչքերը վերցնելով հեռուէն տեսաւ Աքրա-
 համը, և Ղազարոս անոր գիրկը նստած: — Եւ ինքը
 աղաղակեց ու ըսաւ. Հայր Աքրահամ ողորմէ ինձի, ու
 դրկէ Ղազարոսը որ իր մատին ծայրը ջուրը թաթխէ,
 և զովացնէ իմ լեզուս, ինչու որ այս բոցին մէջ կը
 տանջուիմ: Եւ Աքրահամ ըսաւ. որդեակ՛, յիշէ որ քու
 կեանքիդ մէջ դուն քու բարիքներդ առիր, իսկ Ղազա-
 րոս՝ չարիքներ. անիկա հիմա կը մխիթարուի, իսկ դուն
 կը տանջուիս:

(Տես նաև ՄՏԹ. ԺԹ. 23-26. ՂՈՒԿ. Ժ.Ձ. 13
 ԺԳ. 24-27):

Ա. ՏԻՄ. Զ. 7-10. 17. 18. — Մենք բան մը չի
 բերինք աշխարհ, և յայտնի է որ բան մը չենք կրնար
 տանիլ անկէ. — Ուրեմն, երբ ուտելիք և խոզանիկք

ուռինք, բաւականանք անոնցմով: — Բայց անոնք, որ
 հարստանալ կ'ուզեն, կ'իյնան փորձութեան և որոգայթի
 և շատ յիմարական ու վնասակար ցանկութիւններու մէջ,
 և որոնք սատակումի և կորստեան մէջ կ'ընկղմեն մար-
 դերը: Որովհետեւ ամէն չարութիւններուն արմատը,
 արծաթսիրութիւնն է, որուն ոմանք անձնատուր ըլլա-
 լով հաւատքէն մոլորեցան և ինքզինքնին շատ ցաւե-
 րով խոցեցին(*): — Այս աշխարհիս հարուստներուն պատ-
 ուիրէ՛, որ չհպարտանան, և անստոյգ հարստութեան
 վրայ չդնեն իրենց յոյսը, այլ կենդանի Աստուծոյ վրայ,
 որ ամէն ինչ մեղի վայելել կուտայ առատօրէն որ բա-
 րիք գործեն, բարի գործերով հարստանան, առատա-
 ձեռն և ուրիշին պէտքերուն մասնակից ըլլան:

(Տես նաև. ԵՔԲ. ԺԳ. 5. 16):

ՅԱԿ. Ե. 1-8. — Հիմա, ուրեմն, հարուստներ,
 լացէք ու ողբացէք, այն թշուառութիւններուն համար,
 որոնք ձեզի պիտի գան: Ձեր հարստութիւնը ապակաւ-
 ուած է, ու ձեր զգեստները՝ ցեցակեր եղած. — ձեր
 ոսկին ու արծաթը ժանգոտած է, և անոնց ժանգը ձեզի
 դէմ վկայ պիտի ըլլայ, և ձեր մարմինը պիտի ուտէ
 կրակի պէս, ձեր վերջի օրերուն համար ձեզի բարկու-
 թեան գանձ դիզեցիք: — Ահա ձեզի դէմ կ'աղաղակէ
 վարձքը այն գործաւորներուն, որոնք ձեր արտերը հըն-
 ձեցին և զորս դուք զրկեցիք, ու հնձողներուն բողօքը
 մինչև զօրութեանց Տիրոջը ականջը հասաւ: Երկրի վրայ
 փափկութեամբ և հեշտութեամբ ապրեցաք, և ձեր
 սիրտը մնուցիք, որպէս թէ զոհերու օրը, — Դատապար-
 տեցիք ու սպաննեցիք արդարը և անիկա ձեզի չդիմադ-
 րեց: Ուստի համբերող եղիք, եղբայրներ, մինչև Տի-

(*) Վերապէս ուրիշներու երզանկութիւնն է, որ կը տառապեցնէ
 մարդը: Ահա հոս է աղքատին դժբախտութիւնը» (Քակէ):

րոջը գալուստը : Այսպէս երկրագործը , երկրին պատուա-
կան պտուղին յուսալով , համբերութեամբ կը սպասէ
առաջին և վերջին անձրեւներուն : — Դուք ալ համբե-
րեցէք , սիրտերնիդ ամուր բռնեցէք , որովհետեւ մօտ է
Տիրոջը գալուստը :

Բ. ԿՈՐ. Ը. 11-14. — Ձեր եղբայրներուն օգնելու
զօրաւոր կամք մը ունենալով , ընելն ալ կատարեցէք ,
և ընելն ալ ունեցածնուդ չափովը թող ըլլայ : — Որով-
հետեւ թէ որ նախ յօժարութիւն յայտնուի , ունեցածին
չափով տալը ընդունելի է , և ո՛չ թէ չունեցածին չա-
փովը : Ո՛չ թէ ես ուրիշներուն հանգստութիւն կուզեմ ,
և ձեզի նեղութիւն , այլ՝ կուզեմ որ հաւասարութեան
հասնին . — և ներկային մէջ ձեր աւելին անոնց թերին
լեցնէ , որպէս զի օր մը անոնց աւելին ալ ձեր պակասը
լեցնէ , որ հաւասարութիւն ըլլայ :

Ա Շ Խ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՂՈՒԿ. Ժ. 7. — Մշակը արժանի է իր վարձքին :
Ա. ԹԵՍ. Գ. 10. — Ով որ չուզեր աշխատիլ ,
պէտք չէ որ ուտէ :

Բ. ՏԻՄ. Բ. 6. — Պէտք է որ աշխատող երկրա-
գործը նախ ինքը վայելէ պտուղներէն :

Ա. ԿՈՐ. Թ. 7-10. — Ո՞վ իր ծախքով զինուո-
րութիւն կ'ընէ . ո՞վ այգի կը սնկէ և անոր պտուղէն
չ'ուտեր . ո՞վ ոչխարներ կ'արածէ , ու ոչխարներուն կա-
թէն չ'ուտեր : — Միթէ մարդկօրէ՛ն կը խօսիմ այս բա-
ները , Միեւնոյնը չըսէր նաև օրէնքը : Որովհետեւ Մով-
սէսի օրէնքին մէջն ալ դրուած է , կալին մէջ աշխատող
եզլին ցուկը մի՛ կապեր : Միթէ եզներուն համար է որ
կը հողայ Աստուած : — Ձէ որ մանաւանդ մեզի համար
կ'ըսէ . որովհետեւ ան որ կը հերկէ , պէտք է վայելելու
յոյսով հերկէ , նմանապէս և որ ցորենը կը ծեծէ :

ԵՓԵՍ. Գ. 28. — Ան որ գողութիւն կ'ընէր , ալ
թող չը գողնայ , այլ մանաւանդ աղէկ գործի մը պա-
րապելով , իր ձեռքերովը աշխատի , որպէս զի կարող
ըլլայ կարօտ եղողին տալու :

Բ. ԹԵՍ. Գ. 8-9. — Մէկուն հացը ձրի չկերանք ,
այլ ջանքով ու աշխատանքով գիշեր ցորեկ կը գործէինք
ձեզմէ մէկուն բեռ չըլլալու համար : — Եւ ասի ոչ թէ
անոր համար , որ իշխանութիւն չունէինք , այլ որպէս զի
մեր անձերը ձեզի օրինակ ընենք և դուք մեզի նմանող
ըլլաք :

(Տես նաև ՄՏԹ. Ժ. 10. Ա. ԹԵՍ. Բ. 9. Գ. 11.
12. Ա. ՏԻՄ. Ե. 18) :



ՀԱՒԱՏԱԾԱԻԱԼՄԱՆ ԳՈՐԾԸ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ
ՃԳՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

I

ՀԱՒԱՏԱԾԱԻԱԼՄԱՆ ԳՈՐԾԸ

Ամէն նոր վարդապետութիւն կամ ուսուցում ,
որ սահմանուած է քարոզուելու , աշխարհի ամէն
կողմերը կարենալ տարածուելու համար , իր հիմ-
նադիրներուն և յետոյ զինքը դաւանողներուն կող-
մէն մասնաւոր ջանքի մը պէտք ունի : Վարդապե-
տութիւն մը , ըլլայ կրօնական , բարոյական թէ

իմաստասիրական, կարենալ տարածուելու համար կրնայ երկու միջոցներու գիմել, որոնք իրեն ապահովութիւններ կարենան ընծայել գործնապէս : Այդ երկու միջոցներն են, կամ 1. ննջումը, կամ քիթս ուժը, և կամ 2. մարդկային բարեացակամութեան եւ համոզումին համբերասար դիմումը : Առաջինին մէջ բարոյական ո՛ր և է արժանիք գոյութիւն չունի . երկրորդը ամէն բանէ առաջ և ամէն բանէ վեր՝ բարոյական գործ մըն է միայն, հաւատածաւարման բարոյական գործը : Այս գործը պարտքերուն առաջինն ու կարեւորն է, որովհետև ինքն է որ պիտի երաշխաւորէ նոր ուսուցումին տիեզերականութիւնը : Այդ մեծ գործը կարենալ խղճմտօրէն կատարելու համար, ենթականերէն կը պահանջէ զոհաբերող գործունէութիւն մը, և ամէնուն վրայ դրուած պարտականութիւններէն աւելի բարձր բացառիկ առաքինութիւններ, զոր չպիտի կրնայինք պահանջել նոր վարդապետութիւնը դաւանող բոլոր անդամներէն : Այս բացառիկ առաքինութիւնները ցոյց տուող պատուէրները, որոնք անհրաժեշտ են հաւատածաւարման գործին նուիրուածներուն, և որոնք բարոյականի հասարակաց պատուիրաններէն կը տարբերին, կը կոչուին կասարեռութեան պատուիր (conseils de perfection) և կամ առեսարանակաւ առաժներ (maximes évangéliques) :

Անոնք որ չեն կրցած ըմբռնել նոր ուսուցումին այս բացառիկ ու ընդհանուր պատուէրներուն

բնոյթը առհասարակ, այնպէս կը կարծեն, թէ այս մասնաւոր պատուէրները, որոնք մասնաւորներու կողմէն կը կատարուին մասնաւոր զոհողութիւններով և անձնուիրութիւններով, և առանց որոնց ուրիշ մը կրնայ իր փրկութիւնը ձեռք բերել, միմիայն բարոյականին ընդհանուր կանոնները պահելով, զիրենք կատարողներուն գերագոյն վարձատրութիւն մը կ'ապահովեն : Ստոյգ է թէ հաւատածաւարման գործը աւելի անձնուիրութիւն, աւելի զոհողութիւն և աւելի մարդասիրութիւն կը պահանջէ, բայց ըսել թէ բարձրագոյն վարձատրութեան մը համար սահմանուած են այդ ամէնը, կը նշանակէ ճանչցած չըլլալ Աստուծոյ թագաւորութեան բնոյթը : Հաւատածաւարման գործիչները պէտք է այդ բացառիկ առաքինութիւնները ցուցընեն իրենց վրայ, ո՛չ թէ մեծ վարձատրութիւններ ընդունելու համար, և այդ ուսուցումը դաւանողներ պէտք է կատարեն իրենց սովորական պարտաւորութիւնները, ոչ թէ անոր համար որ իրենց անձնական փրկութիւնը ձեռք պիտի բերեն, այլ որպէս զի Աստուծոյ թագաւորութիւնը իրագործուի աշխարհի վրայ : Պէտք է ամէն մարդ իր պարտականութիւնը կատարէ իրեն տրուած շնորհքին կամ իր կոչումին համեմատ, գիտնալով, թէ շատ պիտի պահանջուի անկէ, որուն շատ տրուեցաւ, և քիչ անկէ՝ որուն քիչ տրուեցաւ : Այս տեսակէտով, հաւատածաւարման գործ, ո՛չ միայն գերապարտական չէ (surérogatoire), այլ ամենէն

կարեւոր գործն է, քանի որ Քրիստոնէութեան ծաւալման գործը իրմէն կախում ունի: Եւ այս մասին յանձնարարուած առաքինութիւնները պարզ խորհուրդներ ըլլալէ աւելի, իրական պարտաւորութիւններ են, սա տարբերութեամբ միայն որ, փոխանակ առհասարակ ամէնուն վրայ դրուած ըլլալու, միմիայն ընտրեալներու վրայ դրուած են, իբրև Քրիստոնէական աշխատութեան բաժանուած մին մէկ ճիւղը: Եւ այդ ընտրեալները գոյութիւն պիտի ունենան շարունակ, որչափ ատեն Քրիստոնէական մարդասիրութիւնը պարապ բառ մը չէ: Եւ շարունակ պիտի գտնուին մարդիկ — ընտրեալներ — որոնք երջանիկ պիտի նկատեն ինքզինքնին այդ բացառիկ առաքինութիւններու լուծը իրենց վրայ առած ըլլալուն համար:

Հաւատածաւալման բարոյական գործը պիտի տեսէ մինչև վերջը, նոր ուսուցումին հիմնած յառաջդիմական ընկերութեանը մէջ, ուր Աստուծոյ թաղաւորութիւնը յաջորդաբար կը հիմնուի և ուր իւրաքանչիւր դար իր ծոցէն երեւան կը բերէ Քրիստոնէական բարոյականի նոր հետեւութիւնները: Հաւատածաւալման գործին մէջ հինին և նորին տարբերութիւնը սա է որ, Քրիստոնէութեան սկզբնաւորութեան ստեն ամէն աշակերտ առաքեալ ըլլալու կոչուած էր, և պարտաւոր էր նուիրուիլ հաւատածաւալման գործին: Այնքան նեղ էր հաւատադարձներուն շրջանակը, և անոնցմէ իւրաքանչիւրը կեդրոնէն բղխած մէյմէկ ճառագայթ

պիտի ըլլար, Հռովմէական ընդարձակ պետութեան հեռաւոր անկիւնները լուսաւորելու համար: Այս պատճառաւ է որ հաւատածաւալման գործին համար անհրաժեշտ նկատուած բացառիկ առաքինութիւնները անբաժանելի կերպով խտանուած են սովորական պարտաւորութիւններուն հետ:

Ամէն գործ իր յատուկ հանգամանքը ունի: Հաւատածաւալման գործին հանգամանքն ալ Յիսուսի տեսակէտով կռիւն է ու պիտի մնայ: Այդ կռիւր իրերու բնական արդիւնքը պիտի ըլլայ, որովհետև իւրաքանչիւր նոր զարգացում ընդունուած սովորութիւններու կողմէն լուրջ դիմադրութիւններու պիտի հանդիպի: Կռիւր կամ մաքառումի ոգին, որ հերձուածներ կը յարուցանէ ի սկզբան, և որ նոյն իսկ կրնայ տեսակ մը գայթակղութիւն նկատուիլ կողմնակի խորհողներու համար, յաճախ միութենէն աւելի ապահովագոյն միջոցն է նպատակին հասնելու: Առանց խզումի և հետեւաբար առանց կռիւի երբէք մեծ գործ մը չէ կատարուած աշխարհի վրայ: Յիսուս բարոյական այդ մեծ գործին նուիրուածներուն խաչ մը միայն կուտայ, և կը պահանջէ որ անոնք երկրի աղը ըլլան, և աշխարհի լոյսը, կարենալ ուրիշներուն իբրև տիպար ծառայելու համար: Երբ այս դաղափարը իբրև անխախտ համոզում, կը ներշնչէ ու կ'ողեւորէ ենթակաները, անոնց համար ընկրկումը անիմաստ բառ մը կ'ըլլայ, տկար քայլերը յանկարծ խիզախ կերպարանք մը կ'առնուն: Եւ

կռիւի անհրաժեշտ պայմանները երբ կը խօսին ,
 ալ կը դադրին անհատին բոլոր մասնաւոր փա-
 փաքները , և իրենց նշանակութիւնը կը կորսնցնեն
 նոյն իսկ ընտանեկան կապերը : Այդ հոգեկան
 կռիւին մէջ , որ իրապէս ու գերազանցօրէն բարո-
 յական գործն է , մարտնչողներուն զէնքը կ'ըլլայ
 իրենց անձին և անձնական շահերուն մոռացումը ,
 աշխարհային վայելքներէ ձեռնթափութիւնը , և
 նոյն իսկ ի հարկին՝ ամուսնական կեանքէ հրաժա-
 րում : Եւ երբ անհատին մասնայատուկ բաղձանք-
 ները կը դադրին , և նուիրումի պատրաստ մար-
 դասիրութեան ոգին կը գործէ , բարոյական ան-
 դիմադրելի և անընկճելի ուժ մը կ'ըստեղծուի մար-
 դուն մէջ , քաջութեամբ կարենալ տոկալու համար
 այն տառապանքներուն և հալածանքներուն որոնք
 պիտի յարուցուին իրենց դէմ , և Աւետարանին
 համար տառապած ըլլալու ուրախութիւնը անոնց
 ամենամեծ հրճուանքը կ'ըլլայ :

Քրիստոնէութեան սոյն բարոյական գործը ան-
 հուն դիմադրութիւններու հանդիպած է : Եւ Քրիս-
 տոնէական բարոյականին յառաջդիմական գործ-
 նականացումներուն իւրաքանչիւրը ծնունդ եղած
 են ահագին դժուարութիւններու , բիւր անձնուի-
 րութիւններու , անհատական շարունակական նա-
 խաձեռնութիւններու և թափուած քրտինքի ու
 արիւններու : Պատմական հարեւանցի ակնարկ մը
 բաւական պիտի ըլլայ մեզ համոզելու թէ միմիայն
 եկեղեցին հիմնելու համար կռիւներու հինգ դա-

րեր պէտք եղան : Միջին դարու և մեր ժամա-
 նակներուն բարոյական ամբողջ պատմութիւնը ,
 ինչպէս նաև պատմութիւնը այն նորագոյն յառաջ-
 դիմութիւններուն , որոնք ժամանակակից ընկերու-
 թիւնը ստեղծեցին , ուրիշ երեւոյթ չեն ցուցադրեր
 մեզի , թէ ո՛չ այդ օրինակ տաժանքոտ ջանքերու
 անընդհատ յաջորդութիւն մը միայն :

ՄՏԹ. ԺԲ. 30. — Ով որ ինձի հետ չէ , ինձի հա-
 կառակ է . և ով որ ինձի հետ չժողովեր , կը ցուէ :

Ժ. 34-37. — Մի կարծէք թէ երկրի վրայ խաղաղու-
 թիւն ձգելու եկայ , ո՛չ թէ խաղաղութիւն՝ այլ սուր :
 Որովհետև եկայ մարդը իր հօրմէն զատելու , աղջիկը՝ իր
 մօրմէն , և հարսը իր կեսուրէն : — Եւ մարդուն ընտա-
 նիքը պիտի ըլլան իր թշնամիները : — Ով որ իր հայրը
 կամ մայրը ինձմէ աւելի կը սիրէ , ինձի արժանի չէ . և
 ով որ իր տղան կամ աղջիկը ինձմէ աւելի կը սիրէ ինձի
 արժանի չէ :

ՂՈՒԿ. ԺԲ. 51. 53. — Կը կարծէք թէ երկրի վրայ
 խաղաղութիւն բերելու եկայ , ո՛չ , կ'ըսեմ ձեզի , այլ բա-
 ժանում : — Ինչու որ սակէ վերջ տան մը մէջ հինգը
 իրարմէ բաժնուած պիտի ըլլան , երեքը երկուքէն , և եր-
 կուքը՝ երեքէն : — Հայրը որդիէն պիտի բաժնուի և որ-
 դին՝ հօրմէն . մայրը աղջիկէն և աղջիկը՝ մօրմէն , կե-
 սուրը իր հարսէն և հարսը՝ իր կեսուրէն :

(Տես նաև ՂՈՒԿ. ԺՍ. 23. ԺԴ. 26) :

ՄՏԹ. Ե. 13-16. — Դուք էք երկրին աղը . եթէ
 աղը իր համը կորսնցնէ , ինչո՞վ պիտի աղուի ինքը : —
 Դուք էք աշխարհին լոյսը . լերան վրայ շինուած քաղաք
 մը չկրնար պահուիլ : — Եւ ճրագը չին վառեր , գրուանի
 տակ դնելու համար , այլ աշտանակի վրայ , որպէսզի լոյս
 տայ տանը մէջ բոլոր գտնուողներուն : — Այսպէ՛ս , թող

ձեր լոյսը լուսաւորէ մարդերու առջև, որպէս զի անոնք ձեր բարի գործերը տեսնեն, և ձեր երկնաւոր հայրը փառաւորեն:

(Տես նաև ՄՐԿ. Թ. 49 ՂՈՒԿ. ԺԱ. 33 ԺԳ. 34):

ՄՏԹ. ԺԹ. 16. 17. 20. 21. — Մարդ մը մօտեանալով ըսաւ Յիսուսի, ի՞նչ բարիք կրնամ գործել, որպէս զի յաւիտենական կեանքը ընդունիմ: — Յիսուս ըսաւ անոր. եթէ երբէք կեանքին մէջ մտնել կ'ուզես, պատուիրանները պահէ: Մարդը ըսաւ այն ատեն. ատոնց ամենքը մանկութենէս ի վեր կատարած եմ, ալ ի՞նչ բան կը պակսի ինծի. — Յիսուս անոր ըսաւ. եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ունեցածներդ ծախէ, և աղքատներուն տուր, և երկինքը դանձ պիտի ունենաս, յետոյ իմ ետեւէս եկուր,

(Տես նաև ՄՐԿ. Ժ. 17-21. ՂՈՒԿ. ԺԸ. 18 22):

ՄՏԹ. ԺԶ. 24. — Յիսուս ըսաւ իր աշակերտներուն, եթէ մէկը կ'ուզէ իմ ետեւէս գալ, թող ուրանայ իր անձը, թող խաչը առնու և իմ ետեւէս գայ:

Ժ. 38. — Ով որ իր խաչը չառնուր և իմ ետեւէս չգար ինծի արժանի չէ:

ՂՈՒԿ. ԺԲ. 33. — Ծախեցէք ձեր ստացուածքը և ողորմութիւն տուէք:

ԺԳ. 33. — Եթէ մէկը ձեր մէջէն իր բոլոր ստացուածքէն չհրաժարի չկրնար իմ աշակերտս ըլլալ:

Թ. 57-62. — Երբ անոնք ճամբան կ'երթային, մէկը ըսաւ անոր. Տէ՛ր, դուն ս'ըր որ երթաս, ես քու ետեւէդ պիտի գամ: Յիսուս անոր ըսաւ. աղուէսները որջ ունին, ու երկինքի թռչունները՝ բոյն, բայց մարդուն որդին իր գլուխը դնելիք տեղ մը չունի: Ուրիշի մըն ալ ըսաւ. իմ ետեւէս եկուր. այն ալ ըսաւ. Տէ՛ր, թող որ երթամ հայրս թաղեմ: — Եւ Յիսուս անոր ըսաւ. թող որ մեռելները իրենց մեռեալները թաղեն, բայց դուն գնա՛, Աստուծոյ թագաւորութիւնը քարոզէ: —

Ուրիշ մըն ալ ըսաւ. Տէ՛ր, ես քու ետեւէդ պիտի գամ, բայց ինծի հրաման տուր որ նախ ատեն գործերը կարգադրեմ: Յիսուս անոր ըսաւ. այն որ իր ձեռքը մաճին վրայ կը դնէ, ու ետին կը նայի, Աստուծոյ թագաւորութեան յարմարութիւն չունի:

ՄՏԹ. ԺԹ. 12. — Ներքինիներ կան, որոնք այնպէս ծնան, և ուրիշներ՝ որոնք մարդերու ձեռքով ներքինի եղան և ներքինիներ կան, որոնք ինքզինքնին ներքինացուցին երկնից թագաւորութեանը համար: Ով որ կրնայ տանիլ, թող տանի:

Ա. ԿՈՐ. Է. 26-32. — Կը կարծեմ որ ներկայ պետքերուն (նեղութիւն) պատճառաւ, մարդուն համար լաւ է չամուսնանալ: — Ես կ'ուզեմ որ դուք անհոգ ըլլաք: Չամուսնացողը Տիրոջը բաները կը հոգայ, թէ ինչպէս Տիրոջը հաճելի ըլլայ:

ՄՏԹ. Ե. 10-12. — Երանի անոնց՝ որ այդ արդարութեան համար հալածուած են, որովհետեւ անոնցն է երկնից թագաւորութիւնը: — Երանի ձեզի, երբ կը նախատեն ձեզ ու կը հալածեն, և սուտ տեղը ամէն տեսակ գէշ խօսքեր կը խօսին ձեզ նկատմամբ իմ պատճառովս: Յնձացէ՛ք և ուրախ եղէ՛ք, որովհետեւ ձեր վարձքը շատ է երկինքի մէջ:

Ժ. 16-18. — Ահա ես ձեզ ոչխարներուս պէս կը զրկեմ դայլերու մէջ, ուստի օձերու պէս խորագէտ և աղաւնիներու պէս միամիտ եղիք: — Բայց մարդերէն զգուշացէ՛ք, որովհետեւ անոնք ձեզ ատեաններու պիտի մասնեն, և իրենց ժողովարաններուն մէջ ձեզ պիտի ծեծեն: — Եւ դուք իմ պատճառովս կուսակալներու և թագաւորներու առջև պիտի տարուիք, անոնց և հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար:

(Տես նաև ՄՐԿ. Ը. 34. ԺԳ. 9. ՂՈՒԿ. Զ. 22. 23. Ժ. 3. ԻԱ. 12. 13):

ՄՐԿ. ԺԳ. 13. — Եւ իմ անունիս համար ամենուն

ատելի պիտի ըլլաք. բայց պիտի ապրի ան, որ մինչև վերջ կը համբերէ :

ՂՈՒԿ. ԻՍ. 19. — Ձեր համբերութիւնովը պիտի ստանաք ձեր հոգիները :

Ս. ԿՈՐ. Թ. 24. — Ձէք զխտեր, թէ երբ ասպարէզին մէջ կը վազեն, իրաւ է թէ ամէնքը կը վազեն, բայց մէկը կ'առնու մրցանակը : Ուրեմն անանկ վազեցէք որ հասնիք :

Ս. ՊԵՏ. Բ. 19-20. — Աստուծոյ համար հաճելին այն է որ մենք իրեն համար համբերենք այն նեղութիւններուն, որոնցմով մարդիկ անիրաւութեան մէջ կը տառապեցնեն : — Որովհետեւ, ինչ փառք, երբ ձեր մեղքերուն համար ծեծուիք : Բայց եթէ բարիք գործելով չարչարուիք և համբերէք անիկա Աստուծոյ քով շնորհք մըն է :

Գ. 14. — Երանի ձեզի, երբ արդարութեան համար կը չարչարուիք :

Գ. 14. — Երանի ձեզի, երբ Քրիստոսի անունին համար նախատուիք, որովհետեւ Աստուծոյ փառքը, զօրութիւնը և առաքինութիւնը, և ամէն ինչ որ անոր հոգիէն կուգայ, ձեր վրայ կը հանգչի :

II

ՔՐԻՍՏՈՆԷՍԱԿԱՆ ՃԳՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ

Կար ժամանակ մը, երբ ճգնաւորութիւնը կարելոր տեղ մը բռնեց Քրիստոնէական կեանքի մէջ : Կրօնական պատմութիւնը կը ցուցնէ սակայն թէ ճգնաւորութեան (ascétisme) ծագումը Քրիստոնէական չէ :

Շատ կանուխէն արեւելքի հայեցողականները, միտքի տարօրինակ լարուածքով մը պիղծ նկատելով մարմինը, և նիւթը՝ իբր աղբիւրը բոլոր անկատարութիւններուն և չարիքին, գերազոյն առաքինութիւնը մարմինի մշտնջենական մահացուցումներու մէջ փնտռեցին : Հնդկաստանի և Եգիպտոսի սահմաններէն, այդ գաղափարը մուտ գտաւ նաև Հրէից մէջ, և ծնունդ տուաւ Եսսենեան աղանդին, որուն հետեւողները մեռեալ ծովին մօտ կը բնակէին : Այս մահացուցումներն ու չափազանց ժուժկալութիւնները այնչափ կը շեշտուէին, որչափ հաճոյասէր նիւթապաշտութիւնը կը բռնանար հասարակաց կեանքին վրայ : « Չկրնալով կը դրէ է-Շաթէլ, հաճոյքի պաշտամունքին դէմ դնել պարտքի առողջ ծանօթութիւնները, անոր դէմ դրին զրկումի և տառապանքի պաշտամունքը : »

Քրիստոնէութիւնը, իր ծագումէն և հաստատութենէն գրեթէ անմիջապէս վերջը, տակաւ սկսաւ որդեգրել այդ մահացուցումի սկզբունքը : « Երջապատուած Հրեայ և Հեթանոս աղանդներէ, որոնք աշխարհքը կը զարմացնէին, իրենց ծայրայեղ խստամբերութիւններովը, Քրիստոնէականներէն շատեր ամեցան, այդ պսակին համար այդ աղանդներուն հետ չմրցելուն և ժուժկալութեան ասպարէզին մէջ անոնց իրենցմէ առաջ անցած ըլլալուն համար : » Այս գաղափարը կամ այս գրգիռը անապատները ճգնաւորներով լեցուց, բան մը՝ զոր արդէն գուշակած էին առաքեալը

ները, և այնուհետև ճգնաւորութիւնը կերպով մը խստամբեր և անձնաչարչար պատրաստութիւնը նկատուեցաւ հալածանքի դարերու յաճախող մարտիրոսութիւններուն: Նոյն իսկ պատահեցաւ, որ ոմանք սկսան ճգնաւորութիւնը հաւատածաւարման դարձին մէկ կարեւոր օժանդակը նկատել, ճգնաւորին համար բացառիկ դիրք մը և դերագոյն վարձատրութիւններ ալ տալով Քրիստոնէական ընկերութեան մէջ: Այդպիսի գաղափար հաստատող ոեւէ բնագիր չկայ, սակայն, Նոր Կտակարանին մէջ: Ընդհակառակը ճգնաւորական այգօրինակ հրահանգներու վերաբերեալ բոլոր պատուէրները կ'ակնարկեն իրական ճգնութեան (ascése), որ՝ բառին բուն իմաստին նայելով, բոլորովին տարբեր է մահացուցումի համար եղած մահացումէն: Ուրեմն սխալ հասկացողութիւն մը կայ բառին իմաստին և անոր գործադրութեան կերպին մէջ: Ճգնաւորութիւնն ճգնութեան արմատը ճիգն (Յն. ἀσκησις ἄθλησις) կը նշանակէ աւելի ջանք, մտքում, աշխատանք, որ երբէք չկրնար ուղիղ համեմատիլ ծոյլ կեանքի մը նուիրում մարդիկներու մահացուցումին հետ: Ճշմարիտ ճգնութեան (ascése) այն մարդանքը, այն աշխատութիւնն է, զոր մարդ պէտք է կատարէ, իր անձին, իր միտքին, և իր գործարաններուն վրայ, հոգիին ու մարմինին տալու համար ունակութիւններ, որ ընդունակ ընեն զանոնք, պահանջուած գործի մը: Յունաստանի մէջ, ճգնութիւնն բառը

կը գործածուէր մրցելու պատրաստուող ըմբիշներու փորձերն ու կանոնը նշանակելու համար:

Եթէ բառը իր այս ձևով գոյութիւն չունի Նոր Կտակարանին մէջ, բայց անոր արտայայտած գաղափարը շատ անգամ իբրև հրաման կրկնուած է հոն. մէկ կողմէն՝ մարմինը միտքով նուաճելու, մեր զգացական ցանկութիւնները ընկճելու, և միւսին վրայ կատարեալ իշխանութիւն մը ստանալու. միւս կողմէն՝ հպարտութեան, ատելութեան և արծաթսիրութեան նման միտքի մոլութիւնները սանձելու համար: Վերջապէս այս ջանացող ճգնութիւնը անհրաժեշտ է հին մարդը մեզմէն մերկանալով, նոր մարդը հագնելու համար, որովհետև այդ ճգնութիւնը միայն զմեզ բացարձակ տէրը պիտի չինէ մեր անձին, և զմեզ ընդունակ պիտի չինէ այն բոլոր անձնութիւններուն, զոր Քրիստոնէական աւարքնութիւններու գործադրութիւնը կը պահանջէ մեզմէ: Այս արդիւնքին հասնելու համար մասնաւոր մահացուցում մը հրամայուած չէ. պէտք է ջանալով ու ճգնելով աշխատիլ հաւատարմութեամբ կատարելու Քրիստոնէական բարոյականի պատուէրները: Հրամանը ամենուն ալ տրուած է չթերանալու համար այս ճգնութեան մէջ, բայց անիկա աւելի ստիպողական կը դառնայ հաւատածաւարման գործին նուիրողներուն համար:

Նոր Կտակարանին մէջ ճգնութեան հրամաններուն երբեմն միացած են ապաշխարութեան

նման կրօնական օրինապահութիւններ : Ապաշխարութիւնը՝ որ կրօնական պարտաւորութիւններու և հոգեբանական գործերու կարգն է, կը վերանար երբեմն, Հրէից, ինչպէս նաև հին ժողովուրդներէ շատերուն մէջ, մահացուցումներու — երկար աղօթք, հսկումներ, զանազան ժուժկալութիւններ, ծովեր, — որոնք մեղքերու քաւութեան իբրև միջոց կը գործածուէին մեղաւորին կողմէն : Քրիստոնէական բարոյականին մէջ, այդ մահացուցումներու մէկ աղօտ յիշատակը և հրահանգութիւնը մնալով հանդերձ, ապաշխարութիւնը եղաւ զղջումի կամ խղճի խայթի այն զգացումը, զոր մէկը կ'ուներնայ իր մէկ նախընթաց տգեղ վարմունքը յիշելով, և լաւագոյն կեանք մը ունենալու հաստատուն տրամադրութիւնը շեշտելով իր մէջ : Բարոյական այս փոփոխութիւնը այնքան աչքի կը զարնէ նոր կտակարանին մէջ, որ Աւետարանը ապաշխարութեան հին սովորութիւններէն աղսթքն ու ծովեր միայն պահած է, իբրև անհրաժեշտ պէտք լաւ հասկցուած ճգնութեան : Եւ ասոնք ուժի ու կամքի փորձառութեան մարդանքներ են աւելի քան թէ մահացուցումներ : Յիսուսի երկար ծովապահութիւնը իր գործին համար պատրաստութիւն մըն էր միայն : Եւ ասոր համար էր որ Յովհաննէս Մկրտիչի կեանքը չապրեցաւ Յիսուս, որ արտաքին ձեւակերպութիւններու նուազ կարեւորութիւն կուտար և ծէսերէն կը նախադասէր բարոյական գործերը (Տես Ովսէէ 2. 6) Յիսուս աւելի շեշտեց

աղօթքի բարձր արժէքին վրայ, և աղօթքը երբէք մահացուցում մը չեղաւ իրեն համար : Ընդհակառակը, աղօթքը այն գործն է, որով մարդ երկնաւոր Հօր օժանդակութիւնը կը խնդրէ, իրեն յանձնուած պաշտօնը կարենալ լաւ կատարելու համար, և մարդուն մէջ շարունակ վառ կը պահէ Աստուծոյ հանդէպ իր ունեցած պարտականութեան հաստատուն գիտակցութիւնը :

Բ. ՏՐՄ. Բ. 3-5. — Իբրև Յիսուս Քրիստոսի բարի զինուոր, դաւն նեղութիւններու համբերէ : Չինուորեալ մը այս կեանքին գործառնութիւններով չը զբաղէր որ զօրավարին հաճոյ ըլլայ : Եւ մրցող մը չի պսակուիր եթէ ըստ օրինի չ'մրցի :

ԳԱՂ. Ե. 16. 17. — Սա կ'ըսեմ ձեզի, Հոգիով առաջնորդուեցէք, և մարմինին ցանկութիւնը պիտի չկատարէք : — Վասն զի մարմինը հոգիին հակառակ կը ցանկայ, և հոգին՝ մարմինին հակառակ, որպէս զի ընէք ինչ որ չէք ուզեր ընել :

ՀՈՒՎՄ. Ը. 5. 6. 13. — Մարմնաւոր եղողները մարմինին բաները կը հոգան, և հոգեւոր եղողները՝ հոգիին բաները : — Արդ, մարմնաւոր խորհուրդը (prudence) մահ, և հոգեւոր խորհուրդը կեանք և խաղաղութիւն է : — Եթէ մարմնաւորապէս ապրելու ըլլաք պիտի մեռնիք, բայց, եթէ հոգիով մարմինին գործերը սպաննէք պիտի ապրիք :

Ե. 18. 19. 22. 23. — Գիտեմ որ իմ ներսս, այսինքն իմ մարմինիս մէջ, բարի բան մը չի ընակիր, որովհետև թէպէտ բարիին կամեցողութիւնը ունիմ, բայց բարին ի գործ դնելու կարողութիւնը չեմ գտներ ներսս. — Որովհետև ոչ թէ կ'ընեմ բարին, զոր կ'ուզեմ, այլ կ'ընեմ չարը, զոր չեմ ուզեր : Ես կը հաւնիմ

ներսի մարդուն վերաբերող Աստուծոյ օրէնքին բայց ուրիշ օրէնք մը կը տեսնեմ իմ անդամներու մէջ, որ իմ մտքիս օրէնքին դէմ կը պատերազմի, և զիս գերի կ'ընէ մեղքի օրէնքին, որ իմ անդամներու մէջն է :

Ա. կՈՐ. Թ. 27. — Իմ մարմինս կը ճնշեմ ու կը նուաճեմ, վախնալով որ մի գուցէ ուրիշներուն քարոզելէն վերջ ես ինծի խոտելի գտնուիմ :

Բ. կՈՐ. Է. 1. — Մեր անձերը մարմինի և հոգիի ամէն պղծութենէ մաքրենք, և սրբութիւնը կատարեալագործենք Աստուծոյ վախովը :

ԵՓԵՍ. Դ. 17-24. — Ուրեմն այս կ'ըսեմ ձեզի, և Տիրոջմով վկայութիւն կը դնեմ, որ դուք չապրիք հեթանոսներու պէս, որոնք իրենց զգացումներուն ունայնութեանը կը հետեւին, որոնց միտքը խաւարով լեցուն է, և որոնք հեռացած են Աստուծմէ, իրենց սրտին կուրութիւնով և իրենց տգիտութիւնով, որուն մէջ կ'ապրին. — Որոնք անզգայ ըլլալով ինքզինքնին անառակութեան տուին, անյազօրէն ամէն պղծութիւն գործելու : — Բայց դուք այդպէս չսորվեցաք Քրիստոսի մասին ու եթէ անոր մասին լսեցիք ու սովորած էք անկէ, ինչպէս որ ճշմարտութիւնը Քրիստոսի մէջ է. — մերկանալու համար ձեզմէ ձեր առաջին կեանքին հին մարդը, որ խարբբայ ցանկութիւններով ապականուած է — և ձեր մտքին հոգիովը նորոգուիք. — և նոր մարդը հագնիք վրանիդ, ան որ Աստուծոյ նման է, արդարութեան, սրբութեան և ճշմարտութեան մէջ :

ԳՈՐԾԲ. Գ. 19. — Ուստի ապաշխարեցէք ու դարձի եկէք, որ մեղքերնիդ ջնջուի :

Բ. կՈՐ. Է. 10. — Ըստ Աստուծոյ եղած արտմութիւնը փրկութեան համար ապաշխարութիւն կը գործէ. մինչդեռ աշխարհի արտմութիւնը մահ կը գործէ :

ՂՈՒԿ. ԺԸ. 1. — Պէտք է միշտ աղօթել ու չը ձանձրանալ :

Ա. ԹԵՍ. Ե. 17. — Անդադար աղօթք ըրէք :

ՄՏԹ. Զ. 5. 7. — Երբ աղօթք ընես, մի նմանիք կեղծաւորներուն, որոնք կը սիրեն աղօթել ժողովուրդներուն մէջ, և հրապարակներուն անկիւնները կայնելով, մարդոց երեւնալու համար. ճշմարիտ կ'ըսեմ ձեզի անոնք իրենց վարձքը ասով առած կ'ըլլան : — Իսկ դուն, երբ առօթք ընել ուզես, մտիք քու սենեակդ, դուռդ գոցէ, և գաղտնի աղօթք ըրէ քու Հօրդ, և Հայրդ, որ գաղտնութեան մէջ կը տեսնէ, յայտնապէս պիտի հատուցանէ քեզի : — Շատախօս մի ըլլաք ձեր աղօթքներուն մէջ, նման հիթանոսներուն, որոնք կը կարծեն թէ, իրենց շատախօսութեան համար պիտի լսուին :

ՂՈՒԿ. Դ. 2. — Յիսուս անապասը մնաց, քառասուն օր և այն օրերը բան մը չկերաւ :

ՄՏԹ. Զ. 16-18. — Երբ ծոմ կը պահէք, կեղծաւորներուն պէս արտում մի երեւաք, որովհետեւ անոնք իրենց երեսները կ'աւրեն, որպէս զի մարդիկ տեսնան թէ իրենք ծոմ կը պահեն : — Իսկ դուն երբ ծոմ կը պահես, զլուխդ օձէ՛ և երեսդ լուս՛, որպէս զի ծոմ պահողի պէս չերեւաս մարդերու, այլ քու հօրդ, որ գաղտնութեան մէջ կը գտնուի, և քու Հայրդ, որ գաղտնութիւնը կը տեսնէ, քեզի հատուցում պիտի ընէ :

ՄՏԹ. 14-17. — Այն ատեն Յովհաննէսի աշակերտները եկան Յիսուսի և ըսին անոր. ինչո՞ւ մենք և փարիսեցիները շատ անգամ ծոմ կը պահենք, և քու աշակերտներդ չեն պահեր : Յիսուս ըսաւ անոնց. միթէ՞ կարելի է որ հարսնեւորները սուգ պահեն, քանի որ իրենց հետ է փեսան : Բայց պիտի գայ ժամանակ մը, երբ փեսան իրենցմէ վերցուի, այն ատեն անոնք ծոմ պիտի պահեն : Մէկը նոր կերպասի կտոր մը հին հանդերձի վրայ չի ձգեր : այլապէս՝ նորը հինէն մաս մըն ալ կ'առնէ, ու պատուածքը շատ աւելի կ'ըլլայ : Ոչ ալ

նոր գինին հին տիկերու մէջ կը դնեն, որովհետեւ, տիկերը կը պատուին և գինին կը թափի, և տիկերը կը կորսուին. այլ նոր գինին նոր տիկերու մէջ կը դնեն, և այսպէս երկուքն ալ կը պահուին:

ԺԲ. 2. 3. 7. — Փարիսեցիները ըսին Յիսուսի. քու աշակերտներդ կ'ընեն, ինչ որ ներելի չէ շաբաթօրը ընել: — Ինքն ալ անոնց ըսաւ. եթէ գիտնայիք, թէ ինչ ըսել կ'ուզէ, «Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ դո՛ւ», երբէք անմեղներ չպիտի դատապարտէիք:

Ա. ՏԻՄ. Դ. 1. 3. 4. 8. — Հոգին յայտնի կ'ըսէ, թէ ապագային ոմանք հաւատքէն պիտի ապստամբին, տկանջ կախելով մոլորեցուցիչ ոգիներու և դեւերու վարդապետութեան. — որոնք ամուսնութիւնը պիտի արգիլեն, ինչպէս նաև գործածութիւնը սնունդներուն, զոր Աստուած ստեղծեց, որպէս զի հաւատացեալները գոհունակութեամբ վայելեն: — Որովհետեւ Աստուծոյ ամէն ստեղծածը բարի է, և մերժելու բան մը չկայ, եթէ գոհունակութեամբ ընդունուի: — Մարմնական վարժութիւնները մեծ բանի չեն ծառայեր, բայց աստուածապաշտութիւնը օգտակար է ամենուն:

(Տես նաև ՄԲԿ. Բ. 18-22. ԴՈՒԿ. Ե. 33-39. ԿՈՂ. Բ. 20. 23):

Բ. ԿՈՐ. 9. 3. 10. — Բնաւ բանով մը գայթակղութիւն չենք տար, որպէսզի մեր պաշտօնը չ'արատաւորուի: Բայց ամէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք, իբրև Աստուծոյ սպասաւորներ, մեծ համբերութիւնով վիշտերու, տառապանքներու, նեղութիւններու մէջ. — ծեծերու, բանտերու, խռովութիւններու, աշխատութիւններու, հսկումներու, ծոմերու մէջ. — մաքրութիւնով գիտութեամբ, երկայնամտութիւնով, քաղցրութիւնով, Ս. Հոգիով, անկեղծ սիրով. ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւնով, արդարութեան զէնքերով, աջէն ու ձախէն կրուած, — փառքով և անար-

գութիւնով. սլատուիրանքով և գովութիւնով, իբր մոլորեցուցիչներ, այլ սակայն ճշմարտութիւններու իբր անձանօթներ, սակայն ծանօթներ, մեռեալ համարուած, սակայն՝ կենդանի. իբր պատժուածներ, բայց ոչ սպաննուածներ. — իբր տրամածներ, բայց միշտ ուրախ, իբր աղքատներ որ՝ սակայն՝ շատերը կը հարստացնենք. իբր բան մը չունեցողներ, որ՝ սակայն՝ ամէն բան ունինք:

Ճ.

Z U S N I 8 N I U

Իեռ չէ հասած ժամանակը — և կը կարծենք թէ այսպիսի ժամանակ մը գոյութիւն չպիտի ունենայ — ուր կարելի ըլլայ գործնականացնել բարոյական մը, որ հասոցում չխոստանայ, և ինքնէականերու վրայ, անհրաժեշտ կերպով պէտք է որ իր հատուցումը (sanction) ունենայ, այսինքն պէտք է որ օրէնքին հնազանդութիւնը, իր հետ բերէ առաւելութիւններ հնազանդողին համար, և ան-

(*) M. Guyan. նախափորձ մը ուղեց գրել այդ տեսակ բարոյականի մը (Esquisse d'une morale, sans obligation, ni sanction) բայց այս և նմաններ իբրև զրական գործեր միայն կրցան բան մը արժել խմատասիրական մտածումներու աշխարհին մէջ:

հնազանդութիւնը՝ պատիժներ, անհնազանդներուն համար: Հատուցումի սկզբունքը զօրաւոր ուժ մըն է, որուն շնորհիւ օրէնքին գործադրութիւնը այլ եւս անհատներու բարեացակամութենէն միայն կախում չունենար: Ստոյգ է որ անձնիշխանէակներու վրայ — ինչպէս է մարդը — դրուած օրէնքի մը գործադրութիւնը ամենէն աւելի կախումն ունի անոնց բարեացակամութենէն, բայց որովհետեւ այդ բարեացակամութիւնը անձնական զգացումներու և անհատական նկատումներու բերմամբ կրնայ շատերուն մէջ ուղիղ չհամեմատել օրէնքին գործածութեան սկզբունքին հետ, հատուցուած դաղափարը կուգայ այդ օժտող բարեացակամութեան տալու հպատակութեան սիրելիութիւնը: Բայց սխալ չհասկցուինք: Շատերու պէս ըսել չենք ուզեր թէ օրէնքին նպատակն ու աւարկան, և անհատները անոր հնազանդելու յորդորող շարժառիթը կը կազմեն վարձատրութեան յոյսը և պատիժին երկիւղը: Եթէ օրէնքը ենթականերու իբրև միակ նպատակ ցոյց տար վարձատրութեան յոյսը կամ պատիժին երկիւղը, այն ատեն ոչ միայն կամայական պայման մը պիտի ըլլար անիկա առանց բաւարար պատճառի, այլ և բարոյականին ամբողջութիւնը կազմող տրամաբանական առնչութիւնները պիտի խանգարուէին ատուլ: Ընդհակառակը երբ բարոյական օրէնքը մարդուն ցոյց կուտայ տիեզերքին մէջ իր կատարելիք պաշտօնը, այդ պաշտօնը գրեթէ բոլորովին անկախ է անձնական գոհացում

ներու տեսակէտէն: Բարոյական օրէնքը իրեն աւարկայ ունի որչաւած յարաբերութիւնները կանոնաւորել անհատներու մէջ. և եթէ անհատներու մեծամասնութիւնը կը հնազանդի այդ օրէնքին, պատճառը այն է, որ կը հաւատայ այն հեղինակութեան, որ իշխանութիւն ունի այդ օրէնքը տալու, և կը հաւատայ, որովհետեւ օրէնքը արդար և օգտակար կը նկատէ:

Այս տեսակէտով, Քրիստոնէական բարոյականը, իրաւամբ կրնայ իր գոյութիւնը արժեցնել: Հատուցումը այս բարոյականին մէջ գոյութիւն ունենալով հանդերձ, տակաւին անհատին անձնական գոհացումները մեծ կշիռ մը չունին անոր առջև: Քրիստոնէական եղբայրութիւնը անգամ մը սկզբունքով ընդունուած, իրմէն կ'արտաքսէ « մաթեմատիքական փոխանակութեան », ճշգրտութիւնը: Կասարեղան և ընդունեղան մէջ այլ եւս չափական հաւասարութիւն չկայ անհատին համար: Բարեացակամութիւնը՝ այլ եւս չափ չի ճանչնար՝ այդ եղբայրութեան մէջ, և իր պարտքը կը կատարէ նոյն խակ շատ անգամ առանց փոխարէնի մը սպասելու: Արդէն, քանիցս առիթ ունեցանք ըսելու, թէ Քրիստոնէական բարոյականին մէջ, անհատը պէտք է ինքզինքը մոռնայ, եթէ չուզեր իր անձը վտանգել տեսնել թէ անհատին պարտքերուն ամբողջութիւնը կը բովանդակուէր, ուրիշներու ընծայուելիք սիրոյն և իր անձնական շահերու զոհաբերումին մէջ: Եւ ասոնց ամենուն գործ-

նականացումին համար Աւետարանի քարոզութիւնը երբ դիմում կ'ընէ անհատներու բարեացակամութեան, կը շեշտէ մանաւանդ սա սկզբունքը, թէ մարդիկ պէտք է որ նոր պատուէրներուն համակերպին մանաւանդ սիրով քան թէ վախով, որովհետեւ այս համոզումով լեցուած մարդը իր երջանկութիւնը և իր ուրախութիւնը իր պարտքերը կատարելուն մէջ պիտի գտնէր: Այսու հանդերձ, Քրիստոնէական բարոյականին մէջ ալ, հատուցումի սկզբունքը անհրաժեշտ նկատուեցաւ ո՛չ միայն անոր համար, որ օրէնքին դրական և պարտաւորիչ հանդամանքը չվտանգուի, այլ և անոր համար, որովհետեւ պահանջուած բարեացակամութիւնը չէր կրնար ամենուն սրտին մէջ գոյութիւն ունեցած ըլլալ: Եւ եթէ Յիսուս և առաքեալները շատ ծանրացան հատուցումի վարդապետութեան վրայ, պատճառը այն էր, որ դիտէին, թէ ահագին դժուարութիւններու պիտի հանդիպէր Քրիստոնէական բարոյականը, մարդկային սիրտերու մէջ:

ՀԱՏՈՒՅՈՒՄԻ սկզբունքով ըլլալիք վարձատրութիւններու և պատիժներու բնոյթը վարդապետական խնդիր մըն է աւելի Քրիստոնէական եկեղեցիին մէջ, և անոր տրուած զանազան մեկնութիւններ եկեղեցիներուն իրարմէ ունեցած տարբերութիւններուն մէկ գլխաւոր մասը կը կազմեն: Այդ վարդապետական մասէն բոլորովին անկախօրէն ըսենք, թէ պատժական ամէն դրութիւն բանաւոր տուեալներուն (données) համաձայն,

Աւետարանին մէջ վարձատրութիւնն ու պատիժները զիրենք առթող գործերուն իբրև տրամաբանական հետեւութիւնը կ'երեւին ըլլալ: Ասոնք երկրաւոր կեանքէն վերջ պիտի տրուին մարդուս, քանի որ հոս բնական վարձատրութիւն մը կայ այն ներքին գոհացումին մէջ, զոր մարդ կը զգայ իր պարտքը կատարած ատեն, և այն արժանիքին մէջ, զոր մարդ այդ պարտքը կատարելով կ'ըստանայ այն ընկերութեան մէջ, որուն նպատակն է մարդուն փիճակէն անբաժին չարիքներու անհետացումը: Յիսուս այս վարձքերուն հետ կը խոստանայ նաև ուրիշներ, որոնք փոխարինութիւն մը չեն և որոնց միակ աղբիւրը Աստուծոյ բարութեան մէջն է: Իմաստասէրներէ ոմանք վարձատրութիւնը կը մերժեն, և կ'ընդունին միայն պատիժի սկզբունքին օրինաւորութիւնը, ըսելով, թէ առաքինութիւնը ինքնին իր վարձատրութիւնն է: Իսկ ոմանք վարձատրութիւնը միայն կ'ընդունին, պատժելու սկզբունքը չկրնալով հաշտեցնել Աստուծոյ բարութեանը հետ: Բայց ո՛չ առաքինութիւնը կրնայ վերջնական վարձատրութիւնը նկատուիլ առաքլիններուն, և ատով իսկ վարձատրութեան գաղափարը մերժել, և ոչ ալ պատիժը՝ իբրև արդիւնք արդարութեան, կրնայ խոտոր համեմատիլ Աստուծոյ բարութեանը հետ: Վարձք և պատիժ զիրար անհրաժեշտ կ'ընեն փոխադարձաբար:

Աւետարանով խոստացուած վարձատրութիւններու և պատիժներու հանդամանքի մասին ճշգրիտ

և որոշ բաներ մը չենք կրնար ըսել քանի որ անոնք փոխարեւրական բացատրութիւններով միայն ցոյց տրուած են մեզի (*): Այս պարագան առիթ տուաւ եկեղեցիի մեծամեծ վէճերուն, որոնք տեղի ունեցան մանաւանդ պատիժներու հաւասարութեան և տեւականութեան խնդիրներուն շուրջ: Վարձքերու յաւիտենականութեան մասին ոչ որ կը տարակուսի: Եւ բնագրական ինչ ինչ վկայութիւններ ցոյց կու տան, թէ վարձատրութիւնները միեւնոյնը չպիտի ըլլան: Ասոնցմէ կը հետեւցուի, թէ պատիժներն ալ տարբեր պիտի ըլլան գործուած մեղքերու համաձայն: Բնագիրները կը ցուցնեն թէ պատիժներու մէջ ալ յաւիտենականներ պիտի դռնուին: Բայց թէ ժամանակաւոր յանցանքի մը համար յաւիտենական պատիժ տալը կրնայ յարմարիլ Աստուծոյ արդարութեանը ու բարութեանը: Այս և այսպիսի սկզբունքներու վրայ յենելով ոմանք, կ'ըսեն թէ կամ բոլոր պատժուած հոգիները պիտի փրկուին իրենց արուած պատիժներուն կրումէն վերջ, և կամ անոնք ամէնքն ալ պիտի մեռնին առյաւէտ, իրենց ժամանակաւոր պատիժէն վերջ:

Իսկ մենք Աստուծոյ բարութեան և արդարութեան ապաւինած, թողունք որ ինքը իր հատուցումները ընէ իրեն հաճոյ եղած կերպով, ու մենք

(*) Վարձքեր, զԱստուած տեսնել, արեւի պէս փայլիլ, երջանկութիւն, հանգիստ և այլն: ՊԱՏԻՃՆԵՐ, արտաքին խաւար, դժոխք, անշէշ հրոյ զենն, կրծող որդ, Աստուծոյ հանգիստէն արտաքսում և այլն:

մեր մարդկային-Քրիստոնէական պարտականութիւնները կատարենք:

ՄՏԹ. ԻԵ. 31. 33. 46. — Երբ մարդուն որդին իր փառքովը գայ. — անոր առջև պիտի հաւաքուին բոլոր ազգերը, և զանոնք իրարմէ պիտի բաժնէ, ինչպէս հովիւ մը ոչխարները այծերէն կը բաժնէ. — Եւ ոչխարները իր աջակողմը պիտի կեցնէ, իսկ այծերը իր ձախակողմը: Եւ ձախակողմեանները պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը:

ԺՁ. 27. — Մարդուն որդին իր հօրը փառքովը պիտի գայ, և իւրաքանչիւրին պիտի հատուցանէ իր գործքերուն համեմատ:

ՀՈՒՎՄ. Բ. 2. 6. — Գիտենք թէ Աստուծոյ դատաստանը ճշմարտութեան համաձայն է, անիկա ամէն մէկուն իր գործքերուն փոխարէնը պիտի հատուցանէ:

ՅՈՎՀ. ԺԴ. 2. — Իմ Հօրս տանը մէջ շատ մը բնակարաններ կան:

ՂՈՒԿ. ԺԲ. 48. — Շատ պիտի պահանջուի անկէ, որուն շատ արուեսցաւ, և ալ աւելի պիտի պահանջուի անկէ, որուն որ աւելի յանձնուեցաւ:

Բ. ԿՈՐ. Թ. 6. — Ձեզի կը ծանուցանեմ, թէ ով որ քիչ կը սերմանէ, քիչ պիտի հնձէ, և ով որ առատ կը սերմանէ առատ պիտի հնձէ:

ՂՈՒԿ. ԺԲ. 58. 59. — Վախցիր որ չըլլայ թէ դատաւորը քեզ դահիճին յանձնէ, և դահիճն ալ բանտը դնէ: — Որովհետև քեզի կը ստեմ, բնաւ անկէ չպիտի ելլես, մինչև որ վերջին բնիոնը չվճարես:

ԺԷ. 9-10. — Միթէ տերը չնորհակալ կ'ըլլայ իր ծառային, միայն անոր համար, որ իր հրամանները կատարած է: — Ձեմ կարծեր: Դուք ալ երբ բոլոր ձեզի հրամայուածները կատարէք, ըսէք. անպիտան ծառաներ ենք, ըրինք ինչ որ պարտական էինք ընել:

ՄՏԹ. ԺԸ. 12-14. — Եթէ մարդ մը հարիւր ոչ-
խար ունենայ և անոնցմէ մէկը մոլորի, իննսուոն և ինը
լերան վրայ չի՞ թողուր և երթալ մոլորածը փնտուելու:
Եւ եթէ գտնէ զանի, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ աւելի
ուրախ կ'ըլլայ անոր վրայ, քան իննսուոն և իննիս վրայ
որոնք չեն մոլորած. — Այսպէս ձեր երկնաւոր Հայրը
չ'ուզեր որ այս պղտիկներէն մէկը կորսուի:

ՂՈՒԿ. ԺԵ. 7. — Ձեզի կ'ըսեմ թէ երկինքի մէջ
աւելի ուրախութիւն պիտի ըլլայ ապաշխարող մեղաւորի
մը համար, քան թէ իննսուոն և ինը արդարներուն հա-
մար, որոնք պէտք չունին ապաշխարութեան:

ՄՏԹ. Թ. 10-13. — Յիսուս երբ Մատթէոսի տունը
սեղան նստած էր, շատ մաքսաւորներ և մեղաւորներ
եկան և Յիսուսի և իր աշակերտներուն հետ սեղան
նստան: — Փարիսեցիները երբ տեսան, ըսին անոր աշա-
կերտներուն. ինչպէ՞ս ձեր վարդապետը մաքսաւորնե-
րուն և մեղաւորներուն հետ կ'ուտէ: Բայց Յիսուս անոնց
ըսաւ. առողջները բժիշկի պէտք չունին, այլ՝ հիւանդ-
ները: — Գացէ՛ք, ռերեմն, և սովրեցէք, թէ ինչ ըսել
կ'ուզէ. «Ողորմութիւն կ'ուզեմ և ոչ թէ զո՞»,» որով-
հետեւ ես արդարները կանչելու չեկայ այլ մեղաւորները:

ՂՈՒԿ. Է. 47. — Ներուած են անոր (= մեղաւոր
կնոջ) շատ մեղքերը, որովհետեւ շատ սիրեց, բայց որու
որ քիչ կը ներուի, ան քիչ կը սիրէ:

ԺԵ. 21-24. — Անառակ որդին ըսաւ իր հօրը.
հայր, երկինքի ու քեզի դէմ մեղանչեցի, և ա՛լ ար-
ժանի չեմ քու որդիդ կոչուելու: Բայց հայրը ըսաւ իր
ծառաններուն. հանեցէ՛ք առաջին պատմուճանը և անոր
հագցուցէ՛ք, մատնի դրէ՛ք անոր մատը, և կոշիկներ՝
անոր ոտքերուն. — քերէ՛ք նաև պարարտ եզը, ու մոր-
թեցէ՛ք. ուտենք և ուրախ ըլլանք. — որովհետեւ այս
տղաս մեռած էր ու ողջացաւ, կորսուած էր և գտ-
նուեցաւ:

ՀԱՄԱՌՕՏԱԳՐՈՒԹԻՒՆ

| | | | |
|-----------------|----------|-----------|-----------------------|
| Գործք կամ Գրծք. | Գործք | Առաքելոց | |
| Կող. | Թուղթ | Պօղոսի առ | Կողոսացիս |
| Ա. Կորնթ. | Ա. » | » | » Կորնթացիս |
| Բ. Կորնթ. | Բ. » | » | » |
| Եփես. | » | » | » Եփեսացիս |
| Գաղ. | » | » | » Գաղատացիս |
| Եբբ. | » | » | » Եբբայեցիս |
| Յակ. | » | » | » Յակոբու ընդհանրական |
| Յով. | | | Աւետարան Յովհաննու |
| Ա. Յով. | Ա. Թուղթ | Յովհաննու | ընդհանրական |
| Ղուկ | | | Աւետարան Ղուկասու |
| Մարկ. | | | » Մարկոսի |
| Մատթ. | | | » Մատթէոսի |
| Փիլիպ. | Թուղթ | Պօղոսի առ | Փիլիպպեցիս |
| Ա. Պետ | Ա. » | Պետրոսի | ընդհանրական |
| Բ. Պետ. | Բ. » | » | » |
| Հռովմ. | » | Պօղոսի առ | Հռովմայեցիս |
| Ա. Թես. | Ա. » | » | » Թեսաղոնիկեցիս |
| Բ. Թես. | Բ. » | » | » |
| Ա. Տիմ. | Ա. » | » | » Տիմոթէոս |
| Բ. Տիմ. | . Բ» | » | » |
| Տիտ. | » | » | » Տիտոս |

ԾԱՆՕԹ. — Բնագրական հատուածներուն սկիզբը
դրուած այբուբենական գրերը կը ցուցնեն աւետարան-
ներուն կամ թուղթերուն գլուխները. իսկ թուանշան-
ները՝ համարները:

ՑԱՆԿ ՆԻՒՅԵՐՈՒ



| | Էջ |
|--|-------|
| Յառաջարան | 5— 6 |
| Ներածութիւն | 7—16 |
| Ա. Քրիստ. բարոյականի ծագումն ու հեղինակութիւնը | 17—21 |
| Բ. Քրիստոնեական Իսկայր | |
| I Մարդուն կոչումը | 21—24 |
| II Ընկերական մարմին | 25—28 |
| III Աստուծոյ թագաւորութիւնը և վախճանական գործը | 28—33 |
| Գ. Նախորդ բարոյականին եական սկզբունքները կը հաւաստուին | |
| I Հին օրէնքին պատուէրները | |
| II Դատապարտուած մոլութիւններ | |
| III Հին առաքինութիւններ | 33—39 |
| Դ. Քրիստոնեական բարոյականի ընդհանուր պատուիրանները | |
| I Նոր պատուիրանը | 40—44 |
| II Ներել թշնամիներուն | 44—47 |
| III Քրիստոնէական առաքինութիւնները | 48—52 |
| IV Գործերու տնօրէնութիւն | 53—55 |
| Ե. Ընկերային կազմակերպութիւն | 56—58 |
| I Տիեզերական եղբայրութիւն | 58—61 |
| II Հաւասարութիւն | 61—64 |
| III Ազատութիւն | 64—67 |
| IV Քրիստ. իշխանութիւն | 68—74 |



Զ. Անհասը .— Անձնական յարաբերութիւններ.—

Արդարութիւնը

I Անհատը 75— 81

II Անձնական յարաբերութիւններ 81— 86

III Արդարութիւնը 86— 90

Է. Ամուսնութիւն եւ ընտանիք 91— 97

Ը. Հարստութիւն եւ աշխատութիւն 97—109

Թ. Հաւատարմութեան գործը եւ Բրիտանացիական նգնաւորութիւնը

I Հաւատարմութեան գործը 109— 118

II Բրիտանացիական ճգնաւորութիւնը 118—127

Ժ. Հատուցում 127—134

Համառոտագրութիւն 135

Վրիպակ 139

ԿԱՐԵՒՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ



| Էջ | տող | սխալ | ուղիղ |
|----|-----|------------------|-----------------------|
| 9 | 1 | քանի մը | քանի որ |
| Է | 23 | նեւքե | ներքե |
| Ը | 26 | քչեւ | չլեւ |
| Թ | 7 | յաջողած | յաջողած |
| ԺԶ | 3 | ղրկել | ջոկել |
| 17 | 11 | տարբերութիւնները | պարտականութիւնները |
| 19 | 14 | քաղաքականութիւնը | քաղաքակրթութիւնը |
| 20 | 13 | սրտով | սրտով , |
| 20 | 20 | Բրիտանացի | Բրիտանացի |
| 26 | 4 | և այն | այն |
| 27 | 20 | անգամ | անգամ |
| 32 | 10 | սակարկեցիր | սակարկեցիր |
| 70 | 9 | այո | այս |
| 70 | 16 | դերի | դերի |
| 71 | 25 | Փրիստոնեաներն | Փրիստոնեաներն |
| 71 | 26 | ստիպեցին | ստիպեցին |
| 74 | 31 | հեղաբարոյ | հեղաբարոյ |
| 77 | 1 | կատարեալ | ուրախութիւնը կատարեալ |


| | | | |
|-----|----|--------------------------|--------------|
| 86 | 11 | նագարակէտը | նագարակիտը |
| 87 | 13 | քարոզած | քարոզած |
| 88 | 2 | ձեռքազատուէր | ձեռքազատուէր |
| 92 | 3 | Ե. | Ե. |
| 92 | 21 | էական | էրկան |
| 94 | 13 | չունի | չունիս |
| 95 | 27 | կը յանդիման ² | կը յանդիմանէ |
| 103 | 16 | Եթէ | Թէ |
| 115 | 6 | Թէ | Եթէ |
| 120 | 23 | ճգնութեան | ճգնութիւնը |
| 127 | 21 | Guyan | Guyau |
| 128 | 12 | հատուցուած | հատուցումի |
| 130 | 27 | ըսինք | ըսինք |
| 137 | 20 | Քրիստոսի | Քրիստոնէական |



29/11

12-96

9013



4
սկզբ

«Ազգային գրադարան»



NL0025749

0025749

3
սկզբ

«Ազգային գրադարան»



NL0025748

0025748

2
սկզբ

«Ազգային գրադարան»



NL0025747

0025747

1
սկզբ

«Ազգային գրադարան»



NL0025746

0025746

